




ԼՍԽԱԳԻՐ  
ԿՐԾՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ  
ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼԵՐԱՏ. ԵՐԽՈՒՄԱՆ ԵՄԵ ԴԱՏԵՐԱՐԿՈՒԹՅԱՆ

ՆՈՐ  
ԵՐԶԱՆ 1959

ԼԳ.  
ՏԱՐԻ

«سیون» مجله ارمنیة شهریه، ادبیة، ثقافیه، للغة والبیان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology  
Printed in JERUSALEM



# ԲՈՎԱՆԳՈՒԿՈՒԹԻՒՆ

Փոփոխ խմբագրական	241
— “Շնորհաւոր նոր Տարի”	
ԿՐՕՆԱԿԱՆ	
— «Հաւատով խոստովանիմ»	ՇՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ 243
Մեղքեր Կալաւ եւ Ակամայ, Գիտութեամբ եւ Անգիտութեամբ	
— Մեծութեան հասնելու ուղիղ նախադարձը	ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ 248
ԲԱՆԱՍՏԵՂՇԱԿԱՆ	
— Սասմայ Մըհեր	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 253
— Քառեակներ	ԳԷՈՐԳ. Ս. ՀԻՆԻՎԻՋԵԱՆ 257
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Նարեկացին եւ հետադայ հայ զբաղանութիւնը	Մ. ՄԿՐԵԱՆ 258
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ	
— Մաղարդայ Ս. Նախավկայի վանք	Ն. ԵՊՈ. ՇՈՎԱԿԱՆ 262
ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	
— Ղպտական եւ Եթովպական եկեղեցիներու համաձայնութիւնը	ԶԱԼԷՆ ՎՐԳ. ԱՐՋՈՒՄԵԱՆԵԱՆ 264
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ	
— «Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի Համեմատութեամբ 562 Լեզուների»	ԱՆՈՒՇԱԽԱՆ ՎՐԳ. ԶՂՋԱՆԵԱՆ 266
Գեքսեմանիի պարսեզ Հայոց	Քրգմ. Լ. Ա. Ա. 271
Պաշտօնական Հաղորդագրութիւն Ս. Էջմիածնէն	275
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ	
— Զինասանի հայ վանառականներ եւ Յովհաննէս Ղազարեան	ԳԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ 276
ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ	
— Ամեն. Ս. Յոբելեարին պատասխանն ու պատգամը	278
Բարեպաշտական նուէրներ	279
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ	
— Եկեղեցականք-Բեմականք	280
— Պաշտօնականք	281
— Չեռնադրութիւն	283
Յանկ ճիւրոց 1959 տարւոյ	287

ՍԻՈՆ-ի Տարեկան Բաժնեգիրն է՝  
 բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 20  
*Redaction of the Armenian Monthly SION*  
 Armenian Patriarchate,  
 P. O. B. 4001  
 Old City - Jerusalem  
 Via Amman (Jordan)



19. **SUB - 600 725**

1959

Նոյեմբեր - Դեկտեմբեր

Þu 11-12

**ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ**

“ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ”

Նոր Տարիի սեմին զիրար կ'ողջունենք մեր կարծիքով լաւագոյն նկատուած մաղթանքով: Ոմանց համար երջանկութիւնն է այդ լաւագոյնը և հետեւաբար կը ցանկան երջանիկ Նոր Տարի: Ուրիշներուն համար՝ ուրախութիւնը և բարութիւնն են այդ ցանկալի լաւագոյնը, ուստի կը մաղթեն զուարթ կամ բարի Նոր Տարի: Հայ Ժողովուրդին համար բարձրագոյն ցանկալի բարիքը նկատուած է զմորհրդ, և այդ իսկ պատճառով Ամանորի արշալոյսին մենք զիրար կ'ողջունենք «Հնորհաւոր Նոր Տարի» մաղթանքով. տարի մը որ օծուն և լեցուն ըլլայ զմորհով:

«Նորհուրդ»։  
Անդրադարձա՞ծ ենք արդեօք որ շատ նշանակալից արտայայտութիւն մըն է սա որ մեր ժողովուրդը կերտեր է։ Խորքին մէջ ապացոյց է զայն զոր-  
ծածողներու կողմէ քրիստոնէական կրօնի էութեան թափանցած ըլլալու։ միւս  
կողմէ ճիգ մըն է նոր Տարին ալ Մկրտութեան խորհուրդով կնքելու, ամբողջ  
տարին ալ քրիստոնէացնելու։ Արդարեւ, շնորհը քրիստոնէական կրօնի աշխարհ  
բերած գերագոյն բարիքն է. «Շնորհիւ և ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Գրիս-  
տոսի եղեն»։ Այժմու զործածական քրիստոնէական թուականը յաճախ կը կո-  
չենք «Շնորհաց թուական»։ Մեր հաւատքի մեծագոյն քարոզիչը և տարածիչը,  
Պօղոս Առաքեալ, իր Թուղթերը զրեթէ անխափան կը բանայ մաղթանքովը այլ  
գերագոյն բարիքին, որպէսզի իչնէ այն ցօղի պէս իր սիրելիներու հոգիներուն  
և սրտերուն մէջ, և արտայայտուի իրենց կեանքին մէջ. «Շնորհիւ ընդ ձեզ և  
խաղաղութիւն . . . »։

խաղաղութիւն ...»<sup>1</sup>  
 Շնորհն ըստւածը, բոլոր ոգեղէն արժէքներու և իրականութեանց պէս,  
 ինքնին անասանելի է. զգալի կը դառնայ, և հետևաբար կրնանք տեսնել, երբ  
 թանձրանայ մարդոց խօսքերուն, զործերուն և կեանքերուն մէջ. «Տեսա՛մ  
 զփառոս նորա ... լի շնորհօք և ճշմարտութեամբ»<sup>2</sup>։

Սեր նախնիք՝ որոնք կերտեր և զործածեցին «Հնորձաւոր նոր ծարիր» բանաձևը, տալանակը դարձած են նաև այդ մաղթանքով արտայայտուած դա-  
ղափարին, ու մենք այսօր կը տեսնենք անոր փայլը և ճառագայթումը անոնց



մեզի ձգած զործերուն և խօսքերուն մէջ: Նշմարելի է այդ մեր հին տաճարներու շնորհալի ներդաշնակութեան, խոնարհ բարձրացումին և ամփոփ ու ամուր կեցուածքին մէջ: Տեսանելի է այդ մեր ձեռագիրներու լաւագոյն նմոշներուն մէջ՝ զոյներու անուշութեան, զիծերու նրբութեան և դէմքերու հեղութեան մէջ: Մանիշակի անթաքչելի բոյրին պէս իր ներկայութիւնը կը ծաւալէ շնորհաց այդ ոգին մեր ձեռագրաց ֆիշատակարաններու յաճախ անպաճոյճ բառերուն և ինքնամեղադիր, խոնարհ և համակրելի արտայայտութեանց մէջ: Կա՛յ շնորհաց այդ օծումը մինչև իսկ աշխարհիկ ճանչցուած հին աշուղական և նման գրականութեան մէջ: Մեր երգերէն հարազատները իրենց մէջ կը թրթռացնեն սրտին դպչող շնորհաց լարը: — Ինչ որ մնացեր է մեր նախնիքներէն իբրև ժառանգութիւն, կարծես պահուեր է այդ շնորհով զմասուած ըլլալուն պատճառով:

Մեր շնորհաց ժառանգութեան վրայ նետուած այս շատ ընդհանուր ակնարկէն յետոյ երբ մեր աչքերը կը դարձնենք մեր ներկայ ապրող իրականութեան վրայ, յատկապէս Սփիւռքի մէջ, և կ'որոնենք շնորհաց բաբախումը մեր հաւաքական կեանքի խօսքերուն և զործերուն մէջ, հարցումը ինքնարեւար մարմին կ'առնէ մեր մտքին մէջ. ցամաքած է արդեօք այն աղբիւրը՝ որմէ ամէն Ամանորին և Խնուդին հայ ժողովուրդը կը լեցնէր իր ոսկէ սափորը, ըմպելու համար անկէ նախ ինքը, և ապա բաշխելու զայն ուրիշներուն ամբողջ տարուան ընթացքին: Ինչ հարկ՝ մատնանշումներ կատարելու, հաստատելու համար թէ ստուար մեծամասնութիւնը Սփիւռքի մեր զորշ իրականութեան արդէն իսկ բացէ ի բաց կամ լռելեայն ամուսնալուծում հռչակած է շնորհաց կեանքէն: Կը պակսի այս օծութիւնը մինչև իսկ այնպիսի շրջանակներու մէջ՝ որոնք կաթսան պիտի ըլլային այս միւռնին... Քրիստոնէական հասկացողութեամբ եկեղեցի մը եկեղեցի է ճնորհօք միայն: Անկէ պարպուելէն յետոյ ուրիշ ամէն բան կրնայ ըլլալ բացի Քրիստոսի եկեղեցիէն:

Նոր Տարին ալ իբրև շնորհ կը տրուի մեզի ժամանակի Տիրոջմէն. «Թող զգա և զայս ամ» որպէսզի շնորհաց պտուղներ բերենք: Մեծ Առաքեալը ոչ միայն առատաբար կը բաշխէ զայն իր սիրելիներուն, այլ խստիւ կը պատուիրէ. «Մի՛ ընդունայն զշնորհսն Աստուծոյ ունել»: Այլ՝ «պինդ կալցուք զշնորհսն»: Հետեւաբար ոչ մէկ ժամանակի մէջ թերևս այնքան ուժեղ է կարիքը Ամանորի այս սրտառուչ մաղթանքին, որքան մեր շնորհագուրդի օրերուն:

Շնորհաւոր Ամանոր ամենքիս:





## ԿՐԹՆԱԿԱՆ

### ՄԵՂՔԵՐ ԿԱՄԱՒ ԵՒ ԱԿԱՄԱՅ, ԳԻՏՈՒԹԵԱՄԵՐ ԵՒ ԱՆԳԻՏՈՒԹԵԱՄԵՐ

«Քննող զաղսնեաց,  
Մեղայ Բեզ կամաւ եւ ակամայ,  
Գիտութեամբ եւ անգիտութեամբ,  
Թողութիւն շնորհեա մեղաւորիս,  
Ջի ի ծննդեմէ սուրբ աւագանիս մինչեւ ցայսօր  
Մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ եոյ  
Չգայարսնոք իմովք եւ ամենայն անդամոք մարմնոյս.  
Եւ ռդորմեա՝ Քոջարարածոց եւ ինձ՝ բազմամեղիս»:

(Աղթթ. Եւրոպայի թանգարանի Լատաստագրոյ ի Քրիստոս.  
Շնորհալի. Տրդ. տուն):

Հաւասով խոստովանիմի Տրդ այս տունը  
վերջինն է սոյն աղօթաշարքի խոստովանո-  
ղական բաժնին: Այս տունին մէջ կը խոս-  
տովանուին մեղքեր՝ որոնք գործուած են  
«կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ ան-  
գիտութեամբ», ինչպէս նաեւ «զգայարանք-  
ներով եւ մարմնի բոլոր անդամներով»:

«Քննող զաղսնեաց» — Տեսնեալ եւ դեռ  
պիտի տեսնենք որ բոլոր աղօթատունները  
կը սկսին Աստուծոյ ուղղեալ կոչականով  
մը: Այս աղօթատունին կոչականը — Քննող  
զաղսնեաց — ըստ երեւոյթի մեծ տարբե-  
րութիւն չունի նախորդ տունի «Տեսող ա-  
մենայնի»էն: Իրականութեան մէջ սակայն  
կարեւոր տարբերութիւն կայ: «Տեսնել»ը  
տեսնուածին նկատմամբ անպայման գործօն  
հետաքրքրութիւն չ'ենթադրիր. մինչդեռ  
«Քննել»ը մասնաւոր գիտումով տեսնել,  
դատել եւ վճիռ արձակել է, այսինքն ըստ  
երեւոյթի չտեսնուած բան մը երեւան բերել  
կ'ենթադրէ: Արդարեւ Աստուած «կը քննէ»,  
այսինքն գիտէ եւ դատաւճիռ կ'արձակէ  
մարդու ոչ միայն խօսքերուն եւ գործերուն  
այլ նաեւ սրտին խորքերուն մէջ թաքնուած  
բոլոր բաղձանքներու մասին. մտքին ծալ-  
քերուն մէջ ծագում առած բոլոր մտա-  
ծումներու մասին. մարդուն անտեսանելի,  
զաղանի նկատուած բոլոր ծրագրներու եւ  
յառաջագործութեանց մասին: Աստուծոյ համար բաց գիրքեր են. հե-  
տեաբար անխառն է զանոնք ծածկելու  
ճիգն անգամ ընել, երբ Աստուած գիտէ

արդէն ամէն բան. «Յիսուս զիտցաւ անոնց  
խորհուրդները: Բարսեղ Հայրապետ Աւագ  
Հինգշաբթի իր սքանչելի ճառին մէջ կ'ըսէ.  
«Ինչ որ հիմա կը պահես ինձմէ եւ չես  
խոստովանիր, հրապարակաւ պիտի յայտ-  
նուի Մեծ Դատաւորին առջեւ, եւ ուր ոչինչ  
պիտի կրնաս պահել»:

«Մեղայ Բեզ կամաւ եւ ակամայ» —  
Արդարեւ, կը մեղանչենք երբեմն կամաւո-  
րապէս եւ յաճախ ալ՝ հակառակ մեր կամ-  
քին: Իսկապէս, բաւական դժուար եւ շատ  
նուրբ խնդիր է ճշդել թէ ե՞րբ մեր կամքը  
համաձայն է, կամ ո՞ր պարագային հակա-  
ռակ է, գործուելիք չարիքին: Սա ստոյգ  
է որ մեղքեր կը յղացուին նախ սրտին  
կամ մտքին մէջ, այսինքն կը սկսին իրրեւ  
բաղձանք կամ մտածում: Իրենց այս  
սաղմնային վիճակին մէջ դժուար չէ ճշդել  
կամքին դերը անոնց մէջ: Դժուար չէ,  
օրինակ, կամքին համար չգործադրել յղա-  
ցեալ բաղձանքը կամ մտածումը եթէ ա-  
նոնք մարդուն ծանօթ չափանիշներով մեղ-  
սալից են: Եթէ մտքին մէջ յղացեալ ծրա-  
գրին հակառակ է կամքը, հոգ չէ թէ այդ  
ծրագրեալ մտածումը կամ բաղձանքը որ-  
քան հեշտադին կամ հրապուրիչ ըլլայ, առ  
հասարակ նման մտածումներ կարելի է վի-  
ժեցնել առանց մեղքի ծնունդ տալու: Իսկ  
երբ անոնք մտքին մէջ հասունանան եւ իրրեւ  
արարք ծնին, կը նշանակէ որ կամքը հա-  
մաձայն է կատարուած գործին: Հետեաբար  
կամաւ մեղքերը առհասարակ ուղուած,  
ծրագրուած եւ գործադրուած յոռի արարք-  
ներ են:

Ընդհակառակը, երբեմն կը մղուինք  
գործելու մեղքեր՝ որոնց մէջ չէ անկեղծ-  
րէն մեր կամքը. եթէ մեր կամքին եւ նա-  
խընտրութեան տէր ըլլայինք՝ պիտի չգոր-  
ծէինք զանոնք. այսպէս են բռնութեան  
ներքեւ եղած ուրացումները, կամ հերետի-  
կոսական կամ անաստուած շարժումներու  
եւ ցոյցերու կողմնակից ըլլալը՝ սպասնալիքի  
տակ: Ակամայ մեղանչումներ են գրեթէ  
բոլոր մոլութիւնները, որոնց գերին եղած  
է ենթական, եւ այլեւ իր ուղածը չէ որ  
կ'ընէ, այլ՝ մոլութեան ցանկութիւնը: Ա-  
կամայ մեղքեր կարելի է նկատել նաեւ յու-  
սահատ վիճակներու մէջ գործուած անօրէ-  
նութիւնները եւ կամ անկարելի նկատուած



երևոյթներու առջև առանց խորագէտ անգրադառնալու Աստուծոյ ամենակարողութեան, բարութեան և արդարութեան մասին, տարակոյտներ կամ սկեպտիկ արտայայտութիւններ ունենալը: Այս կարգէն էր Աստուային ծիծաղը և անոր յաջորդող ստասկոյթիւնը (Ծննդ. ԺԲ. 9-16), և Մովսէսին անհաւատութիւնը կարծր ժայռին դիմաց՝ որմէ Աստուած հրամայած էր ջուր բղխեցնել: Ակամայ մեղքեր են նաև աշունք՝ որոնք յանկարծակի կերպով մեղի կը պարտադրուին ստեղծուած անակնկալ պարագաներու կամ նեղ կացութեանց մէջ: Այս տեսակէն կարելի է նկատել Պետրոսի ուրացութիւնը, ինչպէս նաև մեր ստախսութեանց մեծ մասը:

Ակամայ մեղքերու կարգին կարելի է դասել կեցուածքը այն տկարամիտ մարդոց՝ որոնք սխալ տեսակէտներու և անօրէն մարդոց պաշտպաններու կողմը կ'անցնին, պարզապէս մեծամասնութեան այն կողմը գտնուած ըլլալուն պատճառով. կամ իրենց եղած սպաննալիքներուն տեղի տալով, և կամ նիւթապէս այն կողմէն նպաստաւորութիւնով: Նման պարագաներուն գործուած ակամայ մեղքեր միաժամանակ ապացոյց են ենթակայի նկարագրին թուութեան, կորովի պակասին և անվստահութեան:

Պէտք է գիտնալ սակայն որ ակամայ մեղքեր իրենց արդիւնքին մէջ ոչինչով պակաս են կամաւ մեղքերէն: Մեղքին վարձքը մահ է», հոգ չէ թէ ինչ կերպով գործուած ըլլայ այդ: Մենք այնքան պատասխանատու զեր ունեցած ենք ակամայ մեղքերուն մէջ, որքան ունինք կամաւորներուն մէջ: Առհասարակ բոլոր ակամայ մեղքերը իրենց սկզբնական շրջանին մէջ եղած են կամաւ: Եթէ մարդ արդարեւ չկամենաւ՝ ի սկզբանէ դժուար չէր ետ կենալ արեւոյթներէ և խաղամոլութենէ: Բազմիցս կրկնուած կամաւ արարքներն են որոնք ի վերջոյ կը վերածուին այնպիսի գործերու՝ որոնց մէջ այլևս ոչինչ կամ շատ քիչ ազդու ըսելիք կամ ընելիք ունի մեր կամքը:

«Գիտութեամբ եւ անգիտութեամբ».— Ըստ երևոյթին նոյն է վերինին — կամաւ — ակամային — հետ, բայց իրականին մէջ բաւական մեծ տարբերութիւն կայ երկուքին միջև: Առաջինին մէջ դեր ունեցողը

կամ չունեցողը կամեն էր. իսկ այս պարագային՝ մարդուն բանականութիւնը, միտքն է: Գիտութեամբ կատարուած մեղքերը անոնք են՝ որ նախ գիտենք որ գործուածը կամ գործուելիքը մեղք է. ապա գիտենք որ մնալու է ենք գործել զայն, եթէ արդելիչ անակնկալ պատճառներ չըլլան: Այս կարգէն են, օրինակ, բոլոր ժամագրութեամբ կամ յատուկ ծրագրով կատարուած մեղանշումները: Այս կարգէն են նաև գրեթէ բոլոր կրկնուած մեղքերը, որոնց առաջինը կրնայ ակամայ կամ անգիտութեամբ գործուած ըլլալ. բայց յաջորդները կը գործուին կամաւ և գիտութեամբ: Այս կարգէն, այսինքն ծրագրուած մեղք էր, օրինակ, Դաւիթ թագաւորին Ուրիա Քեռացին սպաննել տալու մեղքը, որուն համար թէև զոջաց և ապաշխարեց, բայց ծանր պատիժի ենթարկուեցաւ (Բ. Թագ. ԺԱ.): Այս կարգէն էր Զուդայի մատնութիւնը, որուն համար թէև զոջաց, բայց չկրցաւ ապաշխարել և գործեց նոյնքան ծանր անձնասպանութեան մեղքը: Այս կարգէն են մեղքերը Եկեղեցիի ծոցին մէջ իրենց գոյութիւնը քաշկուսող այն անդամներուն — կամ եկեղեցականներուն — որոնք լաւ գիտեն թէ իրենց ծրագիրն է Եկեղեցին տկարացնել որպէսզի աւելի զիւրաւ տիրեն անոր, լաւագոյնս գործածելու համար զայն իրենց անհատական կամ հաւաքածական շահագէտ նպատակներուն:

Յաճախ «Սուրբ Հոգիի զէմ մեղանշումը», որուն յստակ տկարակութիւն կայ Աւետարանի մէջ (Մատթ. ԺԲ. 31-32), կը նոյնացուի գիտութեամբ կատարուած մեղքին հետ: Երաւի է այս նոյնացումը կարեւոր տարբերութեամբ մը: Ստույգ է որ «Ս. Հոգիի զէմ մեղանշումն» ալ գիտութեամբ կատարուած մեղք է, բայց իրիւր յաւելուածական տարր ունի իր մէջ յամառութիւնը, ամբարտաւանութիւնը, շարութիւնը և ցախանքը, որոնց ազդեցութեան տակ անկարելի կ'ըլլայ այլևս զոջումը, ապաշխարանքը և դարձը: Գիտութեամբ կատարուած մեղքերու պարագային, ներքին ձայն մը մեղի կ'ըսէ շարունակ. «ըրածդ սխալ է. ետ կեցիր քանի ուշ չէ»: Այս ազդարարող ձայնը մենք կը կոչենք խղճման քի ձայն: Այս ձայնը մեղի չի դար



փոթորիկի մը կամ երկրաշարժի մը ուժգնութեամբ, այլ զեփուռի մը մեղմութեամբ: Ձի գար ան շանթի կամ կայծակի արագ թափովը, այլ առաւօտեան լոյսի յուշիկութեամբ: Այս ձայնը մեր վրայ ինքզինք չի պարտադրեր կիրքերու բռնութեամբ, այլ՝ անանձնական սիրոյ ազու յորդորով: Եթէ չանսանք այս ձայնին, ինչ որ յաճախ կը պատահի դժբախտաբար, գործուած չարիքը կ'ըլլայ կախաւ և զիսուրեամբ: Բայց կրնայ պատահիլ նաև որ չարիքը գործուելէն յետոյ «բացուին մեր աչքերը» և տեսնենք աւերակը որ գործուած է մեր մէջ և մեզմէ դուրս, մեր յիմար արարքին իբրև արդիւնք: Կամ կրնայ պատահիլ որ զմեզ մղող կիրքի բռնակալութենէն ազատուելով տեսնենք մեր անմեղութենէն մեր «մերկացած» ըլլալը և դառնապէս լալով ետ դառնանք մեր չար ճանապարհէն. գործուածը թէև զիսուրեամբ մեղք էր, բայց դարձը ազատեց զմեզ «Ս. Հոգիին դէմ մեղանշելու» ահաւոր վտանգէն: Սակայն երբ մարդկային ամբարտաւանութիւնը և նախանձը խեղդեն խղճին խեղճ ձայնը և մարին բանականութեան աստուածատուր լոյսը, այն ատեն արդէն ճամբան պատրաստուած կ'ըլլայ գործելու այն մեղքը՝ որուն համար ներում չկայ ո՛չ այս աշխարհին և ո՛չ ալ անդինականին մէջ:

Փարիսեցիները շատ լաւ գիտէին որ Յիսուս «մատամբ Աստուծոյ» կը գործէր իր հրաշքները. սակայն նախանձը և ամբարտաւանութիւնը, որոնցմով վարակուած էին կրօնքի այդ եղկելի պաշտօնեաները ի տես Յիսուսի յաջողութեան, հեղինակութեան, համարձակութեան և ժողովրդակալութեան, թոյլ չէին տար որ անոնք ընդունէին և խոստովանէին որ Յիսուսի հրաշքները աստուածային հեղինակութիւն մը ունէին իրենց ետին. ընդհակառակը, կամակոր յամառութեամբ կը պնդէին որ անոնք արդիւնք էին սատանաներու իշխանին հետ կնքած իր դաշնակցութեան: Յիսուս ըսաւ անոնց. (կարելիութիւն կայ որ) «բոլոր մեղքեր և հայհոյութիւններ ներուին մարդոց, բայց Ս. Հոգիին դէմ եղած հայհոյութիւնը պիտի երբեք չներուի, ոչ այս աշխարհին վրայ և ոչ ալ հանդերձեալին մէջ»:

Իսկ անգիսուրեամբ կատարուած մեղ-

քերը անոնք են՝ որոնց մեղսալից հանգամանքի մասին սկիզբէն զաղափար չունի ենթական, և գործուելէն յետոյ միայն կ'անդրադառնայ անոնց կրօնական կամ բարոյական ոճիր մը ըլլալուն: Այս կարգի մեղաւորներ երբեմն յանկարծ և ծանրորէն կը պատժուին հաւանաբար յորինակ և յազդարարութիւն այլոց որ նոյն մեղքերը ուրիշներ ալ չգործեն անգիտութեամբ: Այս կարգէն կրնանք համարել մեղքը Ահարոնի աշն երկու որդիներուն՝ որոնք խնկարկելու համար փոխանակ սուրբ կրակ՝ գործածելու, սովորական կրակ գործածեցին և տեղն ու տեղ ինկան ու մեռան (Ղևտ. Ժ. 1): Այս կարգէն կարելի է համարիլ մեղքը այն Ոգային՝ որ Ուխտի Տապանակը սալլով բերելու ատեն երբ Տապանակը ծոցեաց, Ոգան զրեթէ անզգայաբար ձեռքը նետեց սրբազան բեռը բռնելու ճիգով և տեղն ու տեղ ինկաւ ու մեռաւ (Բ. Թագ. Զ. 4):

Անգիսուրեան մեղքին մէջ ինկած կ'ըլլան նաև բոլոր այն միամիտ, պարզամիտ և մինչև իսկ բարեմիտ տղաքներ և աղջիկներ՝ որոնք կ'իյնան ճանկերուն մէջ այն նենգամիտ մարդոց՝ որոնք օգտագործելով ասոնց հայրենասիրութեան, կրօնասիրութեան և նուիրումի սքանչելի ոգին, կը լծեն զանոնք այնպիսի գործերու՝ որոնք այս տղաքներուն կը ներկայացուն իբրև ազգային և հանրային ծառայութիւն, մինչդեռ գործերու արդիւնքը ինքնին ցոյց կու տայ որ ազգաքանդ ծառայութեան մը լծուած են խեղճ տղաք: Լաւ զգացումներով տողարուած այս երիտասարդները և երիտասարդուհիները կը մեղանշեն իրենց անձին, ազգին և Եկեղեցիին դէմ առանց զիսնալու: Որչա՞փ շատ է թիւը այսպիսի անմեղ մեղանշողներուն:

Պէտք է գիտնալ որ անգիսուրեամբ կատարուած մեղքերը երբեք չեն զաղրիւր բարոյական ոճիրներ ըլլալէ և նոյն յոռի հետեանքները արտադրելէ, որքան են և կ'ընեն զիսուրեամբ կատարուածները: Ամէնքս ալ գիտենք որ իրաց բնական մարդին մէջ տարբերութիւն չընեն թէ մարդ գիտնալով հովի հոսանքին ենթարկած է ինքզինք թէ առանց գիտնալու: Երկու պարագային ալ արդիւնքը նոյն է — հարբուխ իւր սարօք: Իրաց բարոյական և ընկերա-



յին մարզին մէջ երբեք տարբերութիւն չ'ընէր թէ մարդ գիտնալով թէ անգիտութեամբ ինքզինք գինովութեան տուած է. երկու պարագային ալ արդիւնքը մարդուն ֆիզիքական, իմացական և բարոյական մեքենականութեան խանգարումն է: Նոյն է ճշմարտութիւնը իրաց գերբնական և հոգեւոր մարզին մէջ: Գիտակցաբար թէ անգիտակցաբար ուրացեր է մէկը իր Փրկիչը, տարբերութիւն չ'ընէր. որքան ատեն ուրացած վիճակի մէջ կը մնայ գուրկ պիտի մնայ Գրիտտով հնարաւոր յաւիտենական երջանկութենէն: Միակ տարբերութիւնը գիտութեամբ և անգիտութեամբ կատարուած մեղքերուն մէջ այն է որ եթէ պատժով վերջանալիք մեղք մըն է գործուածը, ըստ Աւետարանի հաւաստումին և ըստ աշխարհիկ դատարաններու վճոխ, անգիտութեամբ կատարուած մեղքերու պատիժը համեմատաբար թեթեւ պիտի ըլլայ գիտութեամբ եղածներու պատիժէն (Ղկա. ԺԲ. 47-48):

«Թողութիւն ընորհեա մեղաւորիս».— Մեղաց թողութիւն տուողը միշտ և միայն Աստուած է. «Ո՞վ կարէ թողուլ զմեզս բայց միայն Աստուած». թէև այս խօսքը սխալ գիտումով ըսուած է փարիսեցիներու կողմէ, բայց շիտակ է իբրև հաւաստում: Յիսուս երբ հոգեով և մարմնով հիւանդացեալին ըսաւ. «Թողեալ լիցին քեզ մեղքք», այդու իր աստուածային հեղինակութիւն ունեցած ըլլալը հաստատեց, թէ արդարև ինք «Որդի Մարդոյ» անուան տակ ծածկուած Աստուծոյ Որդին է որ «իշխանութիւն ունի երկրի վրայ (ևս) մեղքերու թողութիւն տալու» (Ղկա. Ե. 20-24): Մեղաւորաց թողութիւն տալու այս «իշխանութիւնը» որ Աստուծոյ միայն յատուկ է, նոր Ուխտի մէջ ընորհուեցաւ նաև մարդոց: Յիսուս մէկէ աւելի օտիժներով տուաւ այս իշխանութիւնը Առաքելոց: Յիսուս «փչեց անոնց (Առաքելոց) վրայ և ըսաւ. Առէք Սուրբ Հոգին. եթէ մէկու մը մեղքերը թողուք, պիտի թողուի անոնց. եթէ մէկու մը (մեղքերէն) արձակում չտաք, բռնուած պիտի մնայ» (Յովհ. Ի. 22-23): Այս իրողութեան վրայ՝ Եկեղեցին ի սկզբբանէ քահանայութեան կամ երիցութեան կարգին կանչուած իր բոլոր պաշտօնեաներուն շնորհած է այս իշխանութիւնը: Չեւ-

նադրութեան Մաշտոցին մէջ ըսուած է այս մասին. «Ա՛ռ քեզի Սուրբ Հոգիէն կապելու և արձակելու իշխանութիւն, զոր մեր Տէրը տուաւ սուրբ առաքեալներուն, (ըսելով) ով որ անգամ մը կապէք երկրի վրայ, կապուած պիտի ըլլայ երկնքի մէջ, և ով որ անգամ մը արձակէք երկրի վրայ, արձակուած պիտի ըլլայ երկնքի մէջ» (Մաշտոց Զեռն., էջ 52):

Դարձեալ Աւետարանական այս իրողութեան վրայ հիմնուելով է որ խոստովանանքի խորհուրդի կատարման ընթացքին նախ խոստովանողը կ'ըսէ, իր խօսքն ուղղելով խոստովանահօր. «Հայր սուրբ, զքեզ իբրև միջնորդ և բարեխօս կը բռնեմ Աստուծոյ Միածին Որդիին մօտ, որպէսզի այն իշխանութեամբ որ տուած է քեզի, արձակես զիս իմ մեղքիս կապանքերէն»: Իսկ խոստովանահայր քահանան կը պատասխանէ. «Թող ողորմի քեզի մարդասէր Աստուած, և թողութիւն շնորհէ քու բոլոր յանցանքներուդ ... Եւ ես քահանայական իշխանութեան կարգովս, և աստուածային հրամանով, թէ՛ երկրի վրայ ձեր արձակածները արձակուած պիտի ըլլան երկնքի մէջ, նոյն խօսքի հիման վրայ, կ'արձակեմ քեզ մեղքի ամէն մասնակցութենէ, անունովը Հօր, Որդիին և Ս. Հոգիին»:

Առաքեալներէն սկսեալ, արձակելու այս իշխանութիւնը կը շարունակուի տըր-ուիլ Եկեղեցիի ձեռնադրեալ պաշտօնեաներուն, և պիտի շարունակուի տրուիլ մինչև ի կատարած աշխարհի երբ այլևս պէտք պիտի չ'մնայ մեղքերէ արձակումի: Այս իրողութիւնը սակայն երբեք արդելք մը չէ որ մենք մեր անհատական ազօթքներուն մէջ ուղղակի Աստուծմէ թողութիւն խնդրենք մեր մեղքերուն համար և ստանանք զայն հաւատքով: Եկեղեցւոյ դարաւոր օրէնքն է սակայն որ Ս. Հաղորդութեան մօտենալէ առաջ հաւատացեալը ենթարկուի նախ խոստովանանքի խորհուրդին, և Եկեղեցւոյ պաշտօնեայի կողմէ խորհրդական արձակումն ստանալէ յետոյ միայն համարձակի մօտենալ Ս. Հաղորդութեան:

«Զի ի ծննդեմ: սուրբ աւագանիս մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեան խոյ».— Հասարակ տեղիք չափազանցութիւն մը չէ արդարև հաստատել թէ



մենք մինչև իսկ «ի ծննդենէ սուրբ աւազանին» կը սկսինք մեղանշել։ Ստույգ է թէ մկրտութեամբ կը որբութիւնք մեր բոլոր մեղքերէն։ սակայն մեղանշելու հակումէն կամ մեղք դործելու կարելիութիւնէն չենք ազատիր։ Կեանքի իրականութիւնը և փորձառութիւնը կը հաստատեն որ մկրտեալ մանուկներն անգամ — շատ քիչ բացառութեամբ — իրենց տղայութեան կը գործեն այն մեղքերը՝ որոնցմով յանցապարտ կրնան ըլլալ մեծերը։ Գողութիւն ալ կ'ընեն, սուտ ալ կը խօսին, կը հայհոյեն ալ։ Ենթակայ են հպարտութեան, բարկութեան, նախանձի և ասոնց պէս «մահացու» մեղքերուն։ Միակ տարբերութիւնն այն է որ իրենց մեղքերը իրենց տարիքին համապատասխան են, բայց այդ պատճառով դերձ չեն պատիժէ, ինչպէս կը հաստատէ Աստուածաչունչը՝ Եղիսէ մարգարէն ծաղրող մանուկներու պարագային՝ որոնք պատժուցան արջիւրէ պատառուելով (Դ. Թագ. Բ. 23 - 25)։ Մանուկներ «անմեղ» են յարաբերաբար մեծերու։ Ինչպէս որ առհասարակ մարդիկ շատ լրջութեամբ չեն առներ անոնց բոլոր խօսքերը և գործերը, այնպէս ալ՝ անոնց մեղքերը։ Բաց աստի, յաճախ մանկանց մեղքերը արտացոլումը, կրկնումը կամ կապկուսն են մեծերու մեղքերուն, և հետեաբար մարդիկ առհասարակ թոյլատու և ներող աչքով կը նային անոնց վրայ, և այնպէս կը հաւատանք որ Աստուած ալ նոյնը կ'ընէ։ «Որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»։

Շատ կարեւոր է սակայն որ ծնողքներ լրջօրէն հսկեն իրենց զաւակներու խօսքերուն և գործերուն վրայ, ոչ միայն զանոնք քաղաքավար և կրթուած անհատներու վերածելու համար, այլ նաև պղտիկ տարիքէն չորցնելու համար անոնց մէջ կարգ մը մեղքերու արմատները, որպէսզի չարութիւններ անոնց հետ միասին չաճին՝ վերածուելու համար մոլութեանց և ոճիրներու։ — Մեր ազգային շրջանակի մէջ ամենէն ցաւալի և ախտաւոր երեոյթներէն մէկն ալ այն է որ ծնողքներ իրենց անհատական կամ հատուածական նեղմիտ զգացումներու թոյնը կը ներարկեն նաև իրենց զաւակներու մատաղ սրտին և մտքին մէջ։ Դժբախտաբար ասիկա անխուսափելի չարիք մըն է որուն առաջքը շատ դժուար է առ-

նել՝ եթէ ծնողքներ իրենք չարթննան իրենց ըրածին ահաւոր հետեանքէն՝ մեր ազգային նկարագրի խաթարման տեսակէտէ։ Հասուածականութեան ջլատիչ թոյնը, այսինքն իրեն պէս չխորհող ազգակից եղբոր դէմ սնուցուած ատելութիւնը եթէ վարակած է ամբողջ ընտանիքին մըթնոլորտը, անխուսափելիօրէն պիտի վարակէ նաև տան փոքրիկները, որոնք պիտի վերածուին մէկ մէկ «ազգային գործիչներու», վատնելու համար իրենց մատաղ կեանքի ամենէն անուշ տարիները իրենց իսկ համայնքին՝ տաղտուկ և վնասարարութիւն պատճառելով, և միւս կողմէն ազարտելով իրենց մաքուր նկարագիրը։ Տարբեր ոլորտի մը մէջ այդ ազգքն ու աղջիկները իրենց բնական և աստուածատուր շնորհները փոխանակ վատնելու ամուլ և քանդիչ գործունէութեան մէջ, ի սպաս պիտի դնէին զանոնք իրենց ընտանիքի և համայնքի շինարար գործին, և իրենց անձերու զարգացման և ազնուացման։ Ինչպէս որ գիտակից ծնողքներ կ'աշխատին իրենց հարազատները հեռու պահել ուրիշ ծանօթ մոլութեանց ճանկերէն, մինչև իսկ եթէ իրենք գերի եղած ըլլան այդ մոլութեանց, նոյն ազնուական մտահոգութեամբ մեր ծնողքները հեռու պէտք է պահեն իրենց հոգեհատորները այն շրջանակներէն՝ որ մանուկներու նկարագիրները կ'եղծուին, ուր ճշմարտութիւնը և արդարութիւնը պաշտպանելու ազատութիւնը կը կապտուի այս մատաղ հոգիներէն յանուն կարգապահութեան, յանուն խումբի բարիքին և յանուն տակաւին հազար — ու — մէկ շաքարով օծուած «հապտերուն» որոնք յաճախ ափիոն միայն կը պարունակեն իրենց մէջ։

«Զգայաբանօք իմով եւ ամենայն անգամօք մարմնոյս»։ — Մեղանշած եմ, կ'ըսէ ազօթաւորը, նաև իմ զգայաբանքերով և մարմնիս բոլոր անգամներով։ Զգայաբանցեով և անգամցեով գործուած մեղքերէն ամենէն ծանօթները տեսանք սակէ առաջ, նախընթաց գրութեանց մէջ։ Այլքի զգայաբանքով գործուած մեղքեր էին յայրատութիւնը, յաշտանքը և ասոնց — պէտները։ Բերնի զգայաբանքով (ոչ իրրե գործարան խօսքի) գործուածներն էին պազշտութիւնը, որկրամոլութիւնը և նմանները։



Ռեզուլյուցիոն հղածները՝ հեշտագրին հոտոտելներն էին որոնք կ'առաջնորդեն ծանրագույն ալլ մեղքերու: Ականջի զգայարանքով գործուած մեղքը հեշտալրութիւնն էր: Շօշափելիքի զգայարանքով հղածները կ'առնեն զանազան ձեւեր՝ որոնց ամէնքին նպատակն է հեշտութեան հաճոյքով զառածիլ: Մարմնի անդամներով հղածներն էին առհասարակ ձեւքի մեղքերը, զոգութիւն, զարնել ու ձեծել, քաշկոտել և սպաննել: Ասոնք և վերոյիշեալները մեղքեր են, այսինքն ֆիասակար են մարդ էակին համար ոչ միայն իրենց պտուղին, այսինքն արդիւնքին մէջ, այլ նաև ու մանաւանդ այն պատճառով որ նման պարագաներուն զգայարանքները և անդամները կը գործածուին Աստուծոյ և բնութենէն իրենց համար սահմանուած բնական և օրինական զերէն տարբեր նպատակի համար: Փոխանակ գործածուելու այն կենսական զերին՝ որուն համար անոնք Աստուծոյ կողմէ տրուած են մեղքի՝ կը ծառայեցուն մարդու վաղանցուկ և վնասակար հաճոյքներու գոհացման համար: Զգայարանքներու և անդամներու այս չարաչար գործածութիւնը կ'իջեցնէ մարդը իր ազատ, բանաւոր և հոգեւոր էակի վեհութենէն: Խանգարում յառաջ կը բերէ մարդու յօյժ իմաստուն կերպով կառուցուած և գեղեցկօրէն յօրինուած ֆիզիքական, մտաւոր և հոգեւոր կառուցուածքին մէջ: Մարդ զգայարանքները և անդամները լոկ հաճոյք արտադրելու համար գործածելով եղծած և խանգարած կ'ըլլայ այն հոյակապ ներդաշնակութիւնը՝ որ Աստուծոյ ստեղծագործ իմաստութիւնը կը ցոլացնէ մարդու ընդհանուր կառուցուածքին մէջ:

Կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ գործուած մեղքերու մեր մէջ և մեզմէ դուրս յառաջ բերած աւերներէն ազատելու մտադրութեամբ՝ թողութիւն հայցենք ամէն ինչ քննող Աստուծոյ: «Փաղսկիներու բնիչ, մեղանցեցի Քեզի դէմ Կամաւ եւ ակամայ, զիտութեամբ եւ անգիտութեամբ. Թողութիւն շնորհէ մեղաւորիս, Որովհետեւ սուրբ աւագանի ծնունդէն մինչեւ այսօր Մեղանցած եմ Քու աստածութեանդ առջեւ: Իմ զգայարաններովս եւ մարմնիս բոլոր անդամներով եւ օղորմէ Քու արարածներդ, եւ ինձի՝ ծանր մեղաւորիս»:

(9)

ՇՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ

## ՄԵԾՈՒԹԵԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՌԻԴԻԶԱՆԱՊԱՐԶԸ

(ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ)

«Նմա պարս է անել, եւ ինձ մեղմանալ»

(ՅՈՎՀ. Գ. 30)

Պատմութեան մէջ շատ կրօնական շարժումներ յառաջ եկած են: Քրիստոնէութիւնը այդ շարժումներու մեծագոյնն է: Քրիստոնէական կրօնի շարժումին ոգին, կեդրոնը և գոյութեան պատճառը նոյնինքն մեր Փրկիչն է, Աստուծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոս: Սակայն Աստուծոյ նախախնամութիւնը Յիսուսէն անմիջապէս առաջ և իրմէ անմիջապէս յետոյ յարոյց երկու հոգիներ որոնք կարեւոր դեր կատարեցին Քրիստոնէական կրօնի շարժումին մէջ: Յիսուսէ առաջ եկող անձը Յովհաննէս Մկրտիչն է, իսկ Անկէ յետոյ եկողը՝ Պողոս Առաքեալ:

Առաջինը այս շարժումին նախակարգապետը եղաւ. երկրորդը՝ կազմակերպիչը: Յովհաննէս այս շարժումին համար գետին պատրաստեց. իսկ Պողոսին վիճակուած էր այս շարժումին հաւատալիքներն ու վարդապետութիւնները ճշդել, զաստուրել և ինչ ինչ գործնական կարեւոր կանոններ սահմանել պաշտամանց մասին:

Ա. — Յովհաննէս Մկրտիչի կենցաղը եւ պատշոյնը. — Յովհաննէս Մկրտիչ առանձնակեց կեանքի մը կը հեռուէր: Հանրային հաւաքոյթներու մէջ չէր երևնար, եփուած տաքուկ կերակուրներ չէր ուտեր, հարսանիքներուն չէր մասնակցեր, ամուսնութեան գաղափարէն հեռու պահած էր ինքզինքը: Իր բոլոր հաճոյքն էր անապատին մէջ աղօթել, խոկալ ու հոգեւոր խորհրդածութիւններով զբաղիլ, և այսպէս աշխարհուրաց կեանք մը ապրիլ:



Յովհաննէս Մկրտիչ, որպէս խոտակոծն մէկը, ուղարկուեց իր անձնական գործունէութեան համար: Կաշիւի գործունէութեան մասին էր միակ հաղորդումը: Կը կերակրուէր վայրի մեղրով ու մարախով: Իր մէջ զգացած էր թէ իր կոչումն է մեծական թագաւորութեան գալուստին գետին պատրաստել: Ուստի երբ չափահաս եղաւ սկսաւ Յորդանան գետին եզերքը քարոզել և մկրտութիւն կատարել: Իր քարոզութիւնները և կատարած մկրտութիւնները Խորաշէլի մէջ նոր հոգեւոր հետաքրքրութիւն և արթնութիւն յառաջ բերին:

Յովհաննէս Մկրտիչ իր խոտակոծ կեանքով և անկախ ու խիզախ քարոզութեամբ ժողովուրդին վրայ խորունկ տպաւորութիւն կը թողուր. կրօնական եռուզեռ մը ստեղծեց, երբ Յիսուս իբրեւ Մեսիա տակաւին հրապարակ չէր եկած:

Յովհաննէսի երևումը, քարոզութիւնը և մանաւանդ մկրտութիւնը հրէական պաշտօնական շրջանակներուն ուշադրութիւնը գրաւեց, և քահանայական ժողովը պատգամաւորութիւն մը զրկեց անոր հասկնալու համար թէ ո՞վ է ինք: Պատգամաւորներն էին մի քանի քահանաներ և ղեկայողներ՝ որոնք ըրին իրեն չորս հարցումներ: «Դու ակնկալուած Մեսիա՞ն ես»: Յովհաննէս խոստովանեցաւ և ըսաւ. «Ո՛չ»: «Դու Եղիան ես»: Դարձեալ ըսաւ, «Ո՛չ»: «Դու մարգարէ՞ն ես»: Յովհաննէս կրկին ըսաւ, «Ո՛չ»: Ուրեմն, «Ո՞վ ես դուն, որպէսզի պատասխան մը տանինք զմեզ զրկողներուն. դուն քու մասիդ ի՞նչ կ'ըսես»: Յովհաննէս ըսաւ. «Ես Եսայի մարգարէին գուշակած անպատին մէջ բարձրացող ձայնն եմ, և Մեսիայի գալուստը կ'աւետեմ, և Անոր գործունէութեան համար ճամբաները կը հարթեմ»: Պատգամաւորներուն վերջին հարցումը եղաւ. «Եթէ դուն Մեսիան չես, Եղիան չես և մարգարէն չես, հապա ինչո՞ւ կը մկրտես»: Յովհաննէս պատասխանեց և ըսաւ. «Ես կը մկրտեմ ջուրով միայն, բայց ձեր մէջը կա՛յ մէկը զոր դուք հիմա չէք ճանչնար. Անիկա ինձմէ մեծ է. ես Անոր կոչիկներուն կապը քակելու անգամ արժանի չեմ. նա ձեզ պիտի մկրտէ հոգիով» (Յովհ. Ա. 19-28):

Օր մը, Յովհաննէսի հաւատարիմ աշա-

կերաներէն ոմանք իրեն դիտողութիւն ըրին և ըսին. «Ռաբբի՛, Յիսուս որ մեզի հետ Յորդանանու անդի կողմն էր, որու մասին դուն վկայութիւն տուիր, ահա՛ ինքը կը մկրտէ, և ամէն մարդ իր ետեւէն կ'երթայ», (Յովհ. Գ. 26) հոգ չե՞ս ըներ: Յովհաննէս պատասխանեց. «Մարդ ինքիմէ չի կրնար բան մը ընել եթէ երկինքէն տրուած չըլլայ անոր»: Ուստի մի՛ նախանձիք, մի՛ յուզուիք, իրարանցումի մի՛ մատնուիք թէ Անոր աշակերտները որ ըստ օրէ կը շատնան և իմ աշակերտներս կը պակսին: Անոր յաջողութիւնը ինձի ոչ թէ տխրութիւն, այլ ուրախութիւն կը պատճառէ. «Ես փեսային բարեկամն եմ, և հետեւաբար մասնակից Անոր ուրախութեան»: Ապա իր խօսքերը կնքեց ըսելով. «Նմա պարտ է աճել և ինձ՝ մեղմանալ»: Ան պէտք է հրապարակ իջնէ և ես պէտք է կամաց կամաց քաշուիմ, որովհետեւ իմ առաքելութեանս նպատակը արդէն իսկ աւարտած է: Այս խօսքերով Յովհաննէս կը հաստատէ իր խկական մեծութիւնը:

Բ. — Ի՞նչ է մեծութիւնը. — Մեծութիւնը սովորականէն տարբեր բարոյական և հոգեւոր բարձր փանիշով ապրուած կեանք մըն է: Ըստ կրկերոնի, մեծութեան ուշադրաւ յատկանիշներէն մին տեսիլն է. ըստ Ճան Միլտոնի՝ անձնազոպում. ըստ Էմերսընի՝ անկեղծութիւն. ըստ Ճանսընի՝ ուղղամտութիւն. ըստ Թէոտոր Փարքըրի՝ օգտակարութիւն: Իսկ Շէյքսպիրի կարծիքով, մեծութեան ամենամեծ յատկանիշը ինքնաճանաչումն է: Իրմէ առաջ Սոկրատեսը էր. «Մանիք զեղ»: Նափօլէօն Պոնաբարթ սովորութիւն ունէր զրեթէ նոյնը կրկնել իր զինուորներուն տարբեր խօսքերով. «Դիցե՛ք ձեր սահմանները». այսինքն յաջողութիւններու և ձախօղութիւններու ատեն մի՛ կորսնցնէք ձեր առողջ գաղտնութիւնը, ձեր չափը մի՛ անցնիք:

Ուրեմն տարբեր մարդիկ, տարբեր ժամանակներու մէջ, մեծութեան ուշադրաւ յատկանիշները տարբեր կերպով մատնանշած են: Սակայն վերոյիշեալ բոլոր յատկանիշները միանալով զիրար կը լրացնեն ու մեծ մարդու իրական արժանիքը երեւան կը բերեն:

Ուրիշ մեծ անձերու և Յիսուսի միջև



տարբերություններ սա է որ՝ անոնցմէ ոմանք մեծութեան այսինչ և ոմանք այնինչ յատկութիւնը միայն ունին, քայց Յիսուս՝ իբրև Աստուածորդի, իր նկարագրին մէջ այս բոլորը ներդաշնակօրէն ունէր: Աւստի Անոր կեանքը իտէալ տիպար մըն է մեզի համար: Յիսուս խեղապէս այս մարմինի մէջ կրցաւ ապրիլ այս իտէալ կեանքը՝ որ լի է մեծութեան բարձր յատկանիւններով, և որով ցոյց տուաւ մեզի թէ մարդկային կեանքը կարելիութիւններ ունի սոյն բարձրագոյն կենցաղը իրականացնելու համար: Եւ քանի որ Յիսուս կրցաւ ապրիլ մարմինի մէջ այս բարձրագոյն կեանքը, ուստի մեզի համար ալ կարելիութիւնը ստեղծուած է հետեւիլ Անոր իբրև մեր գերագոյն իտէալին:

Դ. — Մեծութիւնը ձեռք բերելու համար աւսարհիկ մարդոց գործածած սխալ կերպերը. — Մարդիկ ընդհանրապէս մեծութեան հասնելու կը փնտնան երեք տարբեր միջոցներով:

Նախ՝ աշխարհիկ արժէքներու տիրանալ փնտրելով: Աշխարհիկ արժէքները ըսելով կը հասկնանք հարստութիւն, բարձր դարգացում, ընկերային դիրք, փառք, պատիւ, պերճանք, և այլն: Ոմանք կը խորհին թէ որքան հարստանան՝ նոյնքան մեծ մարդ կ'ըլլան. ուստի ամէն միջոց կը գործածեն, շիտակ կամ սխալ, որ հարստութիւն ձեռք բերեն և այսպէս մարդոց մէջ աչքի դարձող դիրքերու տիրանան: Ոմանք ալ ամէն զոհողութիւն յանձն կ'առնեն որ հմտութեան ճիշտ պաշար ունենան, և կը խորհին թէ այդ կերպով կարող են մեծութեան հասնիլ: Իսկ ուրիշներ ուղիղ կամ սխալ ամէն միջոցի կը դիմեն որ ընկերային, ազգային, քաղաքական ու եկեղեցական ասպարէզներու մէջ բարձր դիրքերու հասնին, աթոռներու տիրանան, փառք, պատիւ ու յարգանք վայելեն, և որով կը խորհին թէ ժողովուրդին մէջ ուշագրաւ մարդ կ'ըլլան: Առիկա մեծութեան հասնելու համար սխալ ճամբայ է: Թէպէտեւ հարըստութիւնը, դատաւարակութիւնը և ընկերային բարձր դիրքերն ու տիտղոսները արհամարհելի բաներ չեն և կրնան անհատները մեծութեան առաջնորդել, եթէ չիտակ գործածուին, սակայն և այնպէս չեն կրնար մեծութեան չափանիւնը ըլլալ և մե-

ծութեան իրական ազդակները հանդիսանալ:

Աւելորդ է հաս փաստել թէ մարդ մը եթէ իր մէջ հոգիի մեծութիւնը չունի և սրտի ազնուութիւնն զուրկ է, դրամի առատութիւնը, հմտութեան ճիստութիւնը, ընկերային բարձր դիրքը և կամ արտաքին ու աշխարհիկ արժէքներ չեն կրնար զինքը մեծ մարդ ընել: Եթէ ծառ մը պտղատու չէ, իր ճիւղերուն վրայ պտուղներ չարելով զայն պտղատու ծառի մը չենք կրնար վերածել: Մեծ մարդը իր հոգիով, նկարագրով և բնութեամբ մեծ է, և ոչ թէ աշխարհիկ արժէքներուն իրեն տուած վարկովը: Հայր մը անառակ զաւակ մը ունէր, և միշտ կ'ըսէր անոր. «Տղաս, դուն մարդ չես կրնար ըլլալ», վասնզի չէր ապրեր հօրը բարոյական ցուցմունքներուն համաձայն: Տղան ուրիշ երկիր կը գաղթէ, և տարիներ յետոյ մեծ նահանգի մը կառավարիչ կ'ըլլայ, և իրեն համար անուն մը կը շինէ իբրև նշանաւոր անձ: Ապա այցելութեան կուգայ իր ծննդավայրը և իր հայրը իր մօտ կը կանչէ, և կը հարցնէ՝ ըսելով. «Հայրիկ, ես գեռ մեծ մարդ եղած չեմ»: Հայրը կը պատասխանէ. «Տղաս, շիտակ է թէ մեծ պաշտօնեայ եղած ես, քայց տակաւին մեծ մարդ եղած չես»:

Երկրորդ՝ մարդիկ մեծութեան հասնելու կը փնտնան ուրիշները նսեմացնելով: Թուով քիչ չեն անհատներ, ինչպէս ամէն օր կը տեսնենք մեր շուրջը, որոնք կը խորհին թէ ուրիշին համբաւը նսեմացնելով իրենք կարող են աւելի մեծ համբաւի տիրանալ, ուրիշը վարկաբեկելով կարող են աւելի վարկ ձեռք բերել, անպաշտպան ու տկար մէկը իբր սանդուխտ գործածելով, կարող են վեր բարձրանալ: Այլ խօսքով, ասոնք կը փնտնան ուրիշները պղտիկցնել որ իրենք մեծնան: Ահա՛ այս է պատճառը որ յաճախ առեւտրական մը իր դրացի առեւտրականին վարկը կոտրել կը փնտնայ որպէսզի ինքը աւելի յաջողի: Փաստարան մը իր պաշտօնակից փաստաբաններու մասին աննպաստ գաղափար տարածելու կ'աշխատի որ ինքը աւելի վստահելի ու անուանի մէկը երևնայ: Ուսուցիչ մը իր պաշտօնակից ուսուցիչները բամբասելով կը խորհի թէ ինքը այս կերպով աւելի վարկ կրնայ շահիլ ժողովուրդին մէջ:



Ասիական սակայն սխալ կերպ մըն է յաշնոգութիւն ձեռք բերելու ու մեծնալու համար: Մարդ իր մրցակիցը վարկաբեկելով ոչ միայն չի մեծնար, այլ ընդհակառակը կը փոքրանայ ու կը նուաստանայ: Քրիստոնէական մեթոտ չէ այս, այլ աշխարհիկ մարդոց հետեւած սխալ կերպն է:

Դաւիթ՝ Դողթամը գետին տապալելով, իր ցեղին արժանապատուութեան դրօշակը վեր բարձրացուցած էր: Սաւուդ, իբրեւ օրուան թագաւորը, փոխանակ անոր ցոյց տուած այս քաջագործութիւնը գնահատելու, հալածեց զայն, և նոյնիսկ սպաննելու փորձեր ըրաւ: Իսկ Դաւիթ՝ ընդհակառակը, Սաւուդը սպաննելու պատենութիւն ստանալով հանդերձ չսպաննեց, զանիկա թագաւոր ու Աստուծոյ օժեւալը նկատելով յարգեց ու մեծարեց միշտ: Դաւիթ իսկապէս մեծհոգի ու վեհանձն մէկն էր: Սաւուդ չկրցաւ հոգիի այս մեծութիւնը ունենալ: Ի՞նչ եղաւ արդիւնքը: Սաւուդ իր մրցակիցը հալածելով ոչ միայն չբարձրացաւ, այլ և ինքզինքը նուաստացուց ու պղտիկացուց: Միւս կողմէ, Դաւիթ իր մրցակիցը բարձրացնելով ինքզինքը բարձրացուց, և այս կերպով արժանիք ցոյց տուաւ երկրին թագաւորն ըլլալու: «Մարդ կ'ուզենայ այն, որուն արժանի է» ըսուած է: Դաւիթ արժանիք ցոյց տուաւ մեծնալու ու թագաւոր ըլլալու, և եղաւ. իսկ Սաւուդ նուաստացաւ Աստուծոյ և մարդոց առջև: Ոսկին եթէ ցիւխն մէջ ալ իշնայ՝ կը փնայ ոսկի, իր արժէքէն բան մը չի կորսնցնիր: Մենք ուրիշները վարկաբեկելով անոնց վնաս մը չենք կրնար հասցնել, այլ վնասը մենք մեզի կը հասցնենք ու կը նուաստանանք:

Երոզդ՝ մեծութեան հասնելու համար մարդոց կողմէ ի գործ դրուած միջոցներէն մին ալ իրենց մասին չափազանցուած կամ սուտ յայտարարութիւններ հանել տալուն մէջ է: Երբ թերթի մը աշխատակիցը, իրականութեան հակառակ, մէկու մասին կը գրէ թէ նա քաջ հսկող է, յայտնի դիւանագէտ, առաջնակարգ գրագէտ, անշաւանդիր հայրենասէր, կը խորհի թէ ասով կը մեծցնէ զայն հանրութեան առջև: Եւ մարդիկ ալ կան, որոնք գիտնալով հանդերձ թէ իրենք չեն այն ինչ որ կը գրուի կամ կ'ըսուի իրենց մասին, կրկին չեն առարկեր

և ընդհակառակը կ'ուրախանան, խորհելով թէ թերթը իրենց մասին այսպէս գրելուն համար իրենք մեծ մարդոց կարգին կը դասուին: Ասիական նաև սխալ միջոց մըն է մեծութեան հասնելու, և կամ մեր սիրած այսինչ կամ այնինչ բարեկամը մեծցնելու համար: Վասնզի ոչնչութիւնները փառաբանել կամ բարոյական իսկական արժէքները վարկաբեկել թէ՛ անհատները և թէ՛ ազգերը վատասերման կ'առաջնորդեն: Թերթի թղթակից մը մարդու մը անուան չուրջ աւելորդ գովեստներ չոստելով թէ՛ ինքզինքը կը պղտիկցնէ և թէ՛ այն մարդը: Իրական մեծ մարդիկ չեն արտօնել որ թերթեր և անհատներ իրենց անուան չուրջ նման անհիմն գովեստներ հիւսնեն: Ասիկա իրական մեծութեան մը ոչ միայն հաճոյք չտար այլ նաև զգուշանք իսկ կը պատճառէ:

Դ. — Մեծութեան հասնելու ուղիղ նաւապարհը. — Մեծութեան հասնելու շիտակ ճամբան խոնարհիլ և ուրիշները բարձրացնել է: Այս ճանապարհը թէ՛ բանաւոր է, թէ՛ ուղիղ և քրիստոնէավայել: Այս ճանապարհէն քալողը մեծութիւնը չի չափեր աշխարհիկ արժէքներով ու չափանիշներով, և ո՛չ ալ կը փնայ զայն ձեռք բերել իր հակառակորդները հալածելով, այլ կը փրնտէ մեծութիւնը ուրիշները բարձրացնելու և ազնուացնելու մէջ:

Յիսուս Քրիստոս, որ առաջնորդն է մեր կեանքին, այս ճամբայէն քալից: Վայրկեան մը դիտեցէք Անոր կեանքը, Բեթղեհէմի մօտը մինչև Գողգոթայի խաչը, ուրիշներու բարեխառնութեան համար նուիրում մը եղած է այն: Յիսուս մեծ էր, բայց մեծութեան վրայ բնաւ չխորհեցաւ, միշտ ու ամէն ատեն ոչ թէ իր անձը, այլ ուրիշներուն անձը մեծցնելու վրայ խորհեցաւ, աղօթեց և զօրձեց: Եւ այսպէս իր մեծութիւնը ինքնաբերաբար ի յայտ բերաւ և մարդկութեան Փրկիչը եղաւ, ու երբ երկինք բարձրացաւ՝ նստաւ Աստուծոյ աջ կողմը փառօք բազմօք և յաղթապանձ: Հեղինակ մը կ'ըսէ. «Մեծ եմ այն հոգիներ»՝ որոնք իրենց մեծութեան վրայ երբեք չեն խորհիր: Մեծութիւնը չուրջ մը կը նմանի, որքան անոր ետեւէն վազենք նոյնքան ան մեզմէ հեռու կը փախչի, բայց երբ զայն մոռնանք ու մեր ետեւը ձգենք, մեզի կը հետևի իբրեւ մեր անբաժան ընկերը:



Հետեւեալ մանրամասն պը ցոյց կուտայ իրական մեծութիւնը: «Վերքթոր Հիւկօ երբ Փարիզի Արքայական հրապարակին վրայ կը բնակէր, ստացաւ նամակ մը. որուն պահարանին վրայ գրուած էր. «Դարուս մեծագոյն բանաստեղծին»: Նամակարերը յայտնապէս գրականութեան ծանօթ մէկն էր և, առանց վարանելու, նամակը յանձնեց «Թշուառներ»-ու հեղինակին: Սակայն Վերքթոր Հիւկօ միայն մեծ գրող մը չէր, այլ նաև շատ փափկանկատ մարդ մը: Աւտոյն նամակը մեծ պահարանի մը մէջ դրաւ և զրկեց Համարթինի, որ իրեն նման հոգեկաւոր բանաստեղծ էր և կը բնակէր Համարարանի փողոցին վրայ: Նամակին կցեց երկտող մը ըսելով. «Այս նամակը սխալմամբ ինձի եկած է. ձեզի ուղղուած է»: Բայց Համարթին ալ նուազ ազնիւ մէկը չէր, անմիջապէս պատասխանեց. «Սիրելի Վերքթոր, հրաշալի կը գրէք, սակայն կարգաւ չէք գիտեր: Փառքը Արքայական հրապարակին վրայ կը բնակի, իսկ Համարարանի փողոցին վրայ միայն բարեկամութիւնը կ'ապրի» (Կոչնակ, 1959, Օգոստոս 29): Առաքեալը կը պատուիրէ. «Պատուելու մէջ զիրար գերազանցեցէք»: Ո՞ւր են արդեօք սա մեր օրերուն այն մեծերը՝ որոնք պատիւը ուրիշին անցընելու համար իրարու հետ կը մրցին: Ստոյգ է, մրցում մը կայ, բայց մրցումը՝ պատիւը իրարու ձեռքէ խլելու համար է գրեթէ միշտ:

Վերադառնանք Յովհաննէս Մկրտիչի կեանքին՝ որով սկսանք մեր գրութիւնը: Յովհաննէս Յորդանան գետին եզերքը մկրտութիւն կ'ընէր. քիչ մը անդին Յիսուս և իր աշակերտները նոյնպէս մկրտութիւն կ'ընէին: Յովհաննէս Յիսուսի կեանքին մէջ մեծութիւն կը տեսնէր և զայն կը պատմէր իր աշակերտներուն: Ասկա պատճառ կը դառնար որ իր աշակերտները Յիսուսի յարէին, և օր ըստ օրէ իրենները թուով պակսէին, և Յիսուսինները աւելնային: Աշխարհի մարդիկ ընդհանրապէս կը նախանձին իրենց պաշտօնակիցին յաջողութիւնը տեսնելով, բայց Յովհաննէս Մկրտիչ ոչ միայն չէր նախանձեր, այլ կ'ուրախանար Յիսուսի յաջողութիւնը գիտելով: Իր մեծութեան վրայ մէկ բոլոր իսկ չէր խորհեր, այլ Յիսուսը փառաւորելու ու մեծ-

ցնելու կը ջանար: Յովհաննէս Յիսուսը մեծցուցած ըլլար կամ ոչ, Ան մեծ էր արդէն, բայց ասկա ընելով Յովհաննէս Մկրտիչ անգիտակցաբար իր հոգին մեծութիւնը երեան կը հանէր: Այս էր ահա՝ պատճառը որ Յովհաննէս մեծցաւ և մեծ զիրք գրաւեց քրիստոնէական Եկեղեցիի և պատմութեան մէջ: Թէ և ինքիւրեն վարկ մը չէր տար, համեստ էր հոգիով, սակայն արդէն իր մեծութիւնը այս խոնարհութեան մէջ էր:

Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Տիրոջ առջև խոնարհեցէք և Ան ձեզ պիտի բարձրացնէ»: Յովհաննէս իսկապէս խոնարհեցաւ Աստուծոյ առջև և նոյն համեմատութեամբ ալ մեծցաւ ու բարձրացաւ: Յիսուս Յովհաննէս Մկրտիչի մասին կ'արտայայտուի այսպէս. «Յովհաննէս կիներէն ճնամներուն մեջ ամենէն մեծ անձնաւորութիւնն է: Մարգարէ մըն է, բայց մարգարէն ալ աւելի մեծ մէկը» (Մատթ., ԺԱ., 9-11): Յովհաննէս Մկրտիչ մեծցաւ, վասնզի մեծութեան տանող շիտակ ճանապարհէն քալեց:

Կ'ուզե՞մ մեծնալ, բարձրանալ, հոգիի ազնուութիւն ցոյց տալ և հոգեւոր կեանքի բարձր ուրոտները սաւառնիլ. — մի՛ քալեր ուրիշ ճանապարհէ, այլ Յովհաննէս Մկրտիչի քալած այս շիտակ արահետէն: Մոռցի՛ր անձդ, եղբ. մոռցի՛ր մեծութեան նկատմամբ աշխարհիկ փառասիրութիւններդ. մոռցի՛ր նաև անցաւոր արժէքներու ժամանակաւոր հրապոյրներն ու վաղանցուկ շարքները. ու Յովհաննէս Մկրտիչի նման Յիսուս Բրիստոսը մեծարէ՛, և խոնարհ ու հեղ հոգիով նուրիշ ինքզինքդ ուրիշները բարձրացնելու ու մեծցնելու նուիրական գործին: Յիսուսը մեծարել կը նշանակէ Անոր ոգին իւրացնել, Անոր հետ ապրիլ, Անոր հետ քալել, Անոր հետ գործել և Անոր հետ ներքին հաղորդակցութիւն ունենալ միշտ: Եթէ կրցար այսպէս ընել, ահա՛ քուկդ է բարձրագոյն կեանքի ներքին անդորր վիճակը, որտի անհուն զոհունակութիւնը, հոգեւոր կեանքի բարձր ներշնչումներն ու տեսիլները, և հետեւաբար իրական մեծութիւնը:

ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

Յրէզնօ, Գալիլի.



# ՄԱՍՄԱՆ ՄԱՆՈՒ

(Դիւցազնակալ)

ՄԱՍՆ ՉՈՐՈՐԴ

I

Քրչեցին անցան անծայր անապատն ,  
 Ու գացին - հասան Պաղտատու քաղաք .  
 Կարծես թէ կըրակ կը մաղուէր վերէն ,  
 Ու գետնին տակն ալ կըրակ կը վառեն .  
 Հասան , կանգ առին քաղ'քին դրան մօտ ,  
 Քաղաքն անծանօթ , մարդիկ անծանօթ ...  
 Մըհերը տեսաւ , կեցած դուռին քով ,  
 Դէրվիշ մը , երկար , ներմակ մօրուքով ,  
 Մօտեցաւ անոր ու տըւաւ սելամ ,  
 « Սէլամ ալե-բուս դէրվիշ քարեկամ » .  
 — Ալե-բուս սէլամ , դէրվիշը ըսաւ ,  
 Ու պիշ-պիշ անոր դէմքին նայեցաւ :  
 « Գիտե՞ս դուն , պապա » Մըհերը հարցուց .  
 « Թէ ո՛ր է շիրիմը Պաղտատարին ,  
 « Թէ գիտես , խընդրեմ , զայն մեզի տուր ցոյց ,  
 « Կ'ըսեն կանգուն է դեռ խաչն իր քարին »  
 « Կ'ըսեն դիմացն է պալատին եւ մօտ »  
 « Մենք ենք երկրին ու մարդոց անծանօթ ,  
 « Ինքն եկեր է հոս քաղաքն այս հիմներ »  
 « Հոս թագաւորեր՝ ու հոս ալ մեռեր :  
 Նայուածքը անթարթ Մըհերին յառած ,  
 Պատասխան տըւաւ դէրվիշը կամաց .  
 « Պալատ , թագաւոր ես չեմ նանչընար ...  
 « Տէրը դէրվիշին տըւեր է հանճար ,  
 « Կարդալու գիրը՝ նակատին մարդուն .  
 « Կ'երեւի հեռու երկրէ կու գաս դուն .  
 « Տէ՛հ եկուր , հեղ մը քու բախտիդ նայիմ ,  
 « Անցնալըդ ըսեմ , եւ ապագային  
 « Ինչե՛ր կան պահուած քու նամբուդ վըրայ ,  
 « Ո՞վ կը հառաչէ քեզ՝ համար , կու լայ ,  
 « Գիշեր ու ցերեկ դեռ կը սպասէ քեզ ,  
 « Կարօտիդ հուրէն սիրտը ողջակէզ » :  
 — Չեմ ուզեր որ մարդ իմ բախտն իմանայ ,  
 (Արդէն ժամանակ ալ չունիմ հիմա) .  
 Տէրն ըստեղծեր է զիս հըզօր , անյաղթ ,  
 Բայց նակտիս նաեւ զըրեր է 'անբախտ' .  
 Ու Մըհեր ձեռքը զըրպանը տարաւ ,  
 Եւ ձեռ դէրվիշին ձեռքին մէջ դրաւ  
 Դըրամ մ' ու քրչեց ձին , քաղաք մըտաւ ,  
 Ետեւէն դեւերն , ու զընաց , զըտաւ  
 Իր մեծ հօրեղբօր դամբանը շըքեղ ,  
 Պալատին դիմացն , պարտէզին մէջտեղ :



Ծունկի եկաւ հոն, գերեզմանին բով,  
Աղօթեց վրբան, ու պարզ հաւատքով  
«Հայր Մեր» մը ըսաւ, քարը համբուրեց.  
Շիրիմին վրայ քիչ մ'ալ խունկ այրեց:  
Դիտցած ճաղօթքներն ամէնը ըսաւ,  
Նորէն ու նորէն ծայրէն ըսկըսաւ:

## II

Տեսնելով արքան վերէն զարմանքով,  
Ան հիմա իջած էր Մըհերին բով.  
«Թըշնամի՞ ես դուն, թէ չէ բարեկամ,  
«Ի՞նչ գործ չունիս հոս» հարց տրուաւ արքան,  
«Օտար կ'երևիս հազուստով, բարքով...»:  
Պատասխան տրուաւ Մըհերն յարգանքով.  
«Ապրած կենաս դուն, ով մեծ թագաւոր,  
«Օտար եմ, այո, կու գամ հեռաւոր  
«Սասունէն ուխտի այս գերեզմանին,  
«Մեծ հօրեղբայրս է, մեռնիմ անունին»:  
Մըտիկ ըրաւ զայն արքան հոգեխառով,  
Ու երբ վերջացուց «Դուն հազար բարով  
«Եկեր ես» ըսաւ, «մեր գիրքերուն մէջ,  
(«Ձեմ յիշեր հիմա ո՞ր գիրքին՝ ո՞ր էջն)  
«Արդէն գրուած է մէկն որ Սասունէն,  
«Ջոջանց քաջերու անյաղթ, արիւնէն  
«Պիտի գայ — ըլլայ Պաղտատի արքան...  
«Սիրով կը յանձնեմ քեզ՝ թագս ու մական,  
«Ազատէ միայն մեզի Կոպ դուէն,  
«Որ խումբ մ' հրականեր ծրգած ետեւէն,  
«Կու գայ, կը քանդէ գիւղերն ու քաղաք...  
«Տէ՛հ եկուր ձեռքովս ղընեմ զըլ'խիդ թագ,  
«Միայն ազատէ ըզմեզ իր ձեռքէն»:  
— Տէր արքայ, հիմա կ'երթամ ես իր դէմ,  
Մէկ-երկու օրէն զայն, ողջ կամ մեռած,  
Պիտի զըտնէք ձեր ոտքերուն առաջ.  
Բայս ես աչք չունիմ ձեր գահին-թագին,  
Լեռնոտ Սասունը ոչ մէկ քաղաքի  
Հետ չեմ փոխեր ես, եղէք ապահով,  
Ըսաւ Մըհերը ու խոր յարգանքով  
Զատուեցաւ — զընաց, դուերն ետեւէն:  
Կոպ դուր գիրենք դեռ շատ հեռուէն  
Տեսաւ. ջաղացքի քարեր մէկ ձեռքով  
Կը նետէր. քարերը Մըհերին բով  
Կ'իյնային, կըտրած օրուայ մը համբայ.  
Մըհերը սակայն հաստատ, աներկբայ,  
Իր դուերուն հետ, քըշեցին մըտան  
Խորն անապատին ու գացին զըտան  
Կոպ դուր հըսկայ քարայրի մը մէջ,  
Վախէն ու զողէն կուրծքը ելեւէջ:



Վանայ Ծովն ինչպէս փոթորկի պահուն,  
 Կը ֆըշշար դելը. շունչն ահեղ հովուն  
 Նըման կը շարժէր քարայրը հըսկայ.  
 «Տէ՛հ վեր կաց, քեզի ազատում չըկայ,  
 «Շատ ես խաղցեր դուն մարդոց կեանքին հետ.  
 «Կարգը իմս է արդ, պիտի առյաւէտ  
 «Մարեմ հիմա ա՛լ բու կեանքիդ արեւ»,  
 Ըսաւ Մըհերը, «շուտ վեր կաց չար դել,  
 «Ելիր ու փորձէ՛ ոյժդ վերջին անգամ,  
 «Տես ի՛նչ դըժուար է մեռնիլն, անըզգամ»:  
 Եւ յիշեց Մըհեր Խաչ-Պատարագին,  
 Բարձրիկ Մարութայ Սուրբ Աստուածածինն:  
 «Դուն Պաղտասարն ես» դելը տըւաւ հարց  
 «Թէ՛ չէ Դաւիթն ես», աչքերը լայն բաց,  
 Նայեցաւ վախով պահ մը Մըհերին.  
 «Քեզմէ՛ կ'առնեմ հոտն ես Պաղտասարին»,  
 «Իսկ ես հիւանդ եմ, հիւանդ ու տըկար».  
 Եւ դելն ըսկըսաւ սարսափէն դողալ:  
 — Ոչ Դաւիթն եմ ես, ոչ ալ Պաղտասար,  
 Ապա Մըհերն եմ, Մըհեր հոգէառ:  
 Ի՛նչ ես պահուրտեր կընիկներու պէս,  
 Սուտ հիւանդ եղեր. դուն զո՞վ կը խաբես.  
 Ո՞վ էր ջաղացքի քարերը նետող  
 Մէկ օրուայ ճամբայ ... իսկ հիմա սուտ դող  
 Բռններ է քեզի: Տէ՛հ վեր կաց շուտով,  
 Վըճարէ՛ պարտքըդ Մըհերի ձեռքով»:  
 Դեւն երբ լըսեց որ Դաւիթը չէ ան,  
 Ո՛չ ալ Պաղտասարն, մէկէն վառուեցան  
 Աչքերը — երկու խարոյկներ կարծես —  
 Ու ոտքի ցատկեց հըսկայ արջի մ' պէս:  
 Եւ իրար ղիպան երկու հըսկաներ,  
 Ու զըզըղեցան քարայր, դաշտ ու լեռ,  
 Զերթ երկու վիշապ իրար պըլլըրուած,  
 Ինկան ու ելան ... դելն յանկարծ գոռաց,  
 «Հոս նեղ է, ա՛յ մարդ, մեր ոյժին համար,  
 «Դուրսը ըսկըսինք մեր ահեղ պայքարն»:  
 Իսկոյն դուրս ելան, դաշտին մէջ արծակ,  
 Եւ իրար ղիպան գերթ ամպրոպ-կայծակ:  
 Իրենց բախումէն փայլակ մը շողաց,  
 Երկիրը կարծես ժաժքէ մը դողաց,  
 Ողջ անապատը ցաւէն հառաչեց,  
 Ու փողին երկնի երեսը գոցեց:  
 Պայքարը տեսեց ամբողջ երեք ժամ,  
 Իրար փաթթըրուած ելան ու ինկան,  
 Մինչեւ որ դելը ինկաւ յոգնասպառ,  
 Ինչպէս կաղնիի վիթխարի մի ծառ:  
 Մըհերն ալ անոր գըլուխը կըտրեց  
 Ի արմաւի ծառի մը վըրայ տընկեց:  
 Իր բառ'սուն դելերն ալ եկան հիմա,



Իրենց հետ քառ'սուն գերիներ հրակայ :  
 Ասոնք Կոպ դեւին զըլուխն երբ տեսան ,  
 Ջեռք-ծեռքի բրնձած շուրջպար մ' ըսկըսան :  
 Մըհեր , գարմացած , հարց տըւաւ անոնց ,  
 « Հաւատարմութիւնն այսպէ՞ս է մարդոց ,  
 « Այսպէ՞ս կը յարգէք մահը ձեր տիրոջ ... »  
 — Հըգօր տէր » ըսին « նախ մըտիկ ըրէ  
 Մեր պատմութիւնը , յետոյ մեղադրէ » :  
 Պատմեց ամէն մէկն իր զըլխէն անցածն ,  
 Կոպ դեւն ի'նչպէս էր հայրն իր մեռցուցած ,  
 Ամէն դին սըփռած արիւն ու կըրակ  
 Քաղաքներ , գիւղեր ըրած աւերակ :  
 « Իշխանութիւններ էին թէ իրենք » ,  
 Ու բացին կուրծքերն անոնք մէկ առ մէկ :  
 Զարմանքէն ապշած , կեցած էր Մըհերն ,  
 Զարմանքէն ապշած էին եւ դեւերն :  
 ( Հիմա իմացած պատմութիւնն արդէն . )  
 Մըհերը քաշեց ծառը արմատէն ,  
 Դըրաւ իր ուսին , ծիւրը հեծան ,  
 Օրուայ մը համբայ բըշեցին-անցան :  
 Յաղթութեան լուրը հասած էր Պաղտատ ,  
 Ու հիմա զինուոր , մանուկ , կին թէ մարդ ,  
 Պալատը ամբողջ , վէզիր , թագաւոր ,  
 Կազմած խայտաբղէտ մի հրակայ թափօր ,  
 Դիմաւորութեան եկան Մըհերին ,  
 Պատիւով , փառքով զայն պալատ բերին :  
 Մըհերը դըրաւ արքային առաջ  
 Դըլուխը դեւին , աչքերը դեռ բաց .  
 ' Ի ըսաւ , « Տէր արքայ հանգիստ իշխէ ա'լ ,  
 Ահա զըլուխը ձեր թըշնամուն չար » :  
 Ամենուն առջեւ խօսեցաւ արքան .  
 « Քեզի կը յանձնեմ ես թագն ու մական  
 « Մըհեր , դուն ես լոկ արժանի անոր » :  
 — Ապրած կենաս դուն , ո՛վ մեծ թագաւոր ,  
 Քեզի ըսեր եմ որ ես աչք չունիմ  
 Ուրիշի գահին , թագին , մականին :  
 Երեդրանք մը ունիմ սակայն քեզի ես ,  
 Որ քառ'սուն խորան տաճար մը շինես ,  
 Մեր Պաղտատարին շիրիմին վըրայ ,  
 ( Անունն ալ կ'ուզեմ սուրբ Սարգիս ըլլայ )  
 Քառ'սուն քահանայ , քառ'սուն սարկաւազ  
 Բերես , կատարեն որ անոնք պըսակ ,  
 Իմ եղբայրներուս եւ այս կոյսերուն » .  
 Ու պատմեց Մըհերն անոնց պատմութիւնն ...

## III

Եկեղեցի մը շինեցին շուտով .

Եկան քահանայր խունկով , աղօթքով ...



Եր'սունինն զոյգեր տըւած ձեռք-ձեռքի  
 Խորաններուն մօտ կեցան պըսակի :

Զոյգի մ' կրնրահայրն եղաւ թագաւորն ,  
 Մըհերը ուրիշ զոյգի մը քաւորն ,  
 Մէկալ զոյգերուն պալատականներ՝  
 Թագուհին , տիկնայքն ալ հարսնաքոյրեր :  
 Պըսակէն յետոյ նըւագ , պար եւ երգ  
 Տեւեցին քառ'սուն ցերեկ ու գիշեր .  
 (Պաղտատն այդպիսի օր դեռ չէր տեսեր)  
 Լոյսով ողողուած էր քաղաքն ամբողջ .  
 Մարդ , կին , մանուկներ , ծերերն իսկ դողդոջ ,  
 Պար էին բըռնած , փողոցներուն մէջ ...  
 Ու քառ'սուն օրուան եկաւ երբոր վերջն ,  
 Թանկ նըւէրներով , պատիւով , փառքով ,  
 Պարով ու երգով , դափով , թըմբուկով ,  
 Մըհեր 'ւ իր մարդիկ , հարսներով իրենց ,  
 Ճամբու դըրուեցան ... Կոյսերէն էն մեծն  
 Տաննլով Հալէպ իբրեւ թագուհի ,  
 Պըսակեցին զայն վըրան արքայի :  
 Ու հարսնիք ըրին հոն ալ քառ'սուն օր :  
 Լըսեցին ելան ծակերէն բոլոր  
 Որ փախեր էին Պառաւիժն ձեռքէն ...  
 Եկան հեռաւոր անապատներէն ,  
 Շէնցուցին Հալէպ քաղաքը նորէն :  
 Երբոր վերջացան օրերն խընդութեան  
 Մըհերն ըսկըսաւ իր պատրաստութեան ,  
 Ու փառքով , պատուով դըրին զայն ճամբու ,  
 Դէպի հեռաւոր քաղաք Զըզերու :

(Շարունակելի)

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## ՔԱՌԵԱԿՆԵՐ

Քեզ կը փնտռեմ , Աստուած իմ , ամենուրեք , ամէն ժամ .  
 Հոգւոյս պարապը խորունկ միայն Քեզմով կը լինայ .  
 Ներկայութեանը միայն կ'ըլլամ անվախ ու կրնամ  
 Կթոտ քայլերըս ուղղել բարձունքներու արեւկայ :

×

Ա'լ չեմ փնտռեր հոգի մը ինձ կարեկից ,  
 Ո'չ երգ , խնճոյք , ո'չ հաճոյքներ մարմնական .  
 Ո'չ սէր , գորով եղբայրներէս վշտակից ,  
 Քանզի , ո'վ Տէր , Լոյսդ է վառած իմ ճամբան :

ԳԼՈՐԳ Ս. ՃԻՆԼԻԼԻԶԵԱՆ



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱՐԵԿԱՑԻՆ

ԵՒ

### ՀԵՏԱԳԱՅ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

I

Նարեկացու հանճարեղութեան ամենակարեւոր ապացոյցներից մէկն այն է, թէ որքան շատ են ներշնչուել ու շատ բան են սովորել նրանից հետագայ հայ գրողները, և թէ որքան շատերի կողմից մեծ է եղել հիացմունքը նրա նկատմամբ: Մովսէս Խորենացի, Եղիշէ և Գրիգոր Նարեկացի — ահա մեր հին կուլտուրայի երեք խոշորագոյն դէմքերը: որոնց թողած հետքը հայ գրականութեան պատմութեան մէջ վիթխարի է: Նարեկացին իր ստեղծագործութեամբ նպաստել է հայ գրականութեան զարգացմանը ոչ միայն միջնադարում, այլ և որոշ չափով նոր ժամանակներում: Նրա պոէտիկական կուլտուրան, արուեստը միշտ էլ մեր գրողների համար գրական ուսումնառութեան անսպառ աղբիւր են եղել և շարունակում են մնալ իբրեւ այդպիսին:

Թէ հնում ինչքան շատ են սիրել Նարեկացուն, այդ ցոյցաւոր կերպով երևում է բացի հանրայայտի պատմիչների տուած գնահատականներից, նաև բազմաթիւ ձեռագրերում պահպանուած, շատ զէպքում անյայտ անձնաւորութիւնների՝ նրան նուիրած բանաստեղծութիւններից և զանազան ասոյթներից: Այն հարցը, թէ Նարեկացին ինչ ազդեցութիւն է թողել հայ գրականութեան զարգացման վրայ, չափազանց բարդ հարց է: Նրա ստեղծագործութիւնը տարբեր ժամանակաշրջաններում տարբեր կողմերից է դիտուել, գնահատուել ու իւրացուել: Ուրեմն այդ հարցը պարզաբանելու համար պէտք է հետեւի մեր կեանքի և գրականութեան պատմութեան ընթացքին:

Միջնադարում, հայ վերածնութեան ժամանակաշրջանում նախ և առաջ նկատուում է մի շատ հետաքրքրական երևոյթ. հրապարակում երևում են բաւական թուով

այնպիսի բանաստեղծութիւններ, որոնք ոճով անչափ նման լինելով Նարեկացու գործերին, շատ զէպքում գրիչների կողմից վերագրուում են նրան: Այդ բանաստեղծութիւնների համար նայնիսի կարելի է վիճել, արդեօք դրանք խկապէս Նարեկացունը չեն: Տուեալ զէպքում խօսքը չի վերաբերում միջնադարում անչափ շատ հանդիպող այնպիսի բանաստեղծութիւններին, որոնք Նարեկացու է պիղծներին՝ նրան երբեմն շատ ցածր աստիճանի վրայ կրկնողների գրչի արդիւնքներ են. զրանց մասին առհասարակ չի էլ խօսուելու, այլ այնպիսի բանաստեղծութիւնների մասին, որոնք գեղարուեստական բարձր արժանիքներ ունեն:

Այսպէս, օրինակ, մեր Մատենադարանի ձեռագրերի նիւթերի ցուցակներ կազմողները մի անյայտ հեղինակի բանաստեղծութիւն զատել են Նարեկացու տաղերի շարքը, այնքան է նրանց այդ հաւանական թուացել առաջին հայացքից: Բանաստեղծութիւնը սկսւում է այսպէս.

Դոհաւ վարդն ինքնագոյն

Սիրամարգ ոսկեգոյն.

Դոհաւ վարդն ինքնագոյն

Ի հոգոյն սիրամարգ յոսկեգոյն արփոյն:

Խկապէս սա խկոյն յիշեցնում է Նարեկացու «Դոհաւ վարդն վառ առեալ» տաղը, բայց շարունակութիւնը շատ հեռու է այդպիսի յիշողութիւն առաջացնելուց.

Դու լուսին լի լուսով մէջ գիւեբին,

Դու զօնալ լուսափայլ ի յառաւօսին,

Մայրըդ Մարիամ սիրունի սրբունի

Թագունի պանծալի, դու մաքուր աղանի

Եւ եմ քո գերի:

Բանաստեղծութեան երկրորդ տունը և մնացած շարունակութիւնը ոճով աւելինման են ժե. - ԺԶ. դարերի մեր սիրոյ երգիչների գործերին: Պարզ է, որ այս «ձննդեան մեղեդին» Նարեկացունը չէ: Բայց կան խկապէս նման բաւական շատ բանաստեղծութիւններ, որոնցից ամենահետաքրքրականները երկու աղագործիկ տաղեր են: Այդ տաղերից մէկը կոչւում է «Տաղ Արիստակիսի», ուրեմն հեղինակն է Արիստակէսը.



սակայն նոյն այդ տաղը մի քանի ձեռագրերում վերագրուած է Նարեկացուն։ Արիստակէսի տաղը խաչուած Բրիստոսի այլաբանական պատկերն է տալիս, որը ներբռնութեամբ և գեղեցկութեամբ չի զիջում Նարեկացու նման տաղերին։

Հաւիկ մի պայծառ սեսայ անճրման  
Ի յայն Բառաբեւին վրայ անճրման,  
Անճրման, անճրման, անճրմանիդ ով ճրման,  
Դու ճրման։

Թեւս արծաթափայլ ունէր անճրման,  
Արեգական շողոյն ճրման անճրման. Անճրման ... ևն.։

Չայնիկ ուղորմուկ ունէր անճրման,  
Դաբրիէեան փողոյն ճրման անճրման. Անճրման ... ևն.։

Չաչերն արտասուօք լընայր անճրման,  
Առաւօտեան ցօղոյն ճրման, անճրման. Անճրման ... ևն.։

Սա ամբողջ տաղն է, գրուած ջերմ զգացմունքով, և զարմանալի չէ որ վերագրուել է Նարեկացուն. բայց երկու հանգամանք թոյլ չեն տալիս այդ հաւաստի համարել. նախ՝ տաղի լեզուն Նարեկացու այլաբանական տաղերի լեզունն չէ, շատ պարզ է և ցոյց է տալիս իր հեղինակի աւելի նոր ժամանակների մարդ լինելը։ Այնուհետ՝ Նարեկացին խաչուած Բրիստոսին տաղերից մէկում բոլորովին այլ ոգով է ներկայացրել։

Ես ձայն գառիւծուն ասեմ՝ որ գոչեր ի Բառաբեւին,  
Ի Բառաբեւին գոչեր, ձայն առնէր ի սանգարամեսն։  
Սանգարամեսն այն ի գող եղեալ սասանէր  
Ի ձայնէն անեղ։

Այստեղ Բրիստոսը առիւծի պատկերունի, որ մոնչում է քառաթևի վրայ, և այդ ահեղ ձայնից սասանում է Սանգարամեսը, մինչդեռ Արիստակէսի տաղում Բրիստոսի պատկերն է մի արծաթափայլ թևերով թռչնիկ, որ քառաթևի վրայ ողորմուկ ձայնիկ է ածում։

Տաղերից միւսը կոչւում է «Համբարձման», որտեղ պատկերուած է Բրիստոսի համբարձումից յետոյ՝ նրա աշակերտների ունեցած ապրումները։

Այն փոքրիկ հօտին սրսմեալ  
Վսախա արտասուաց բղխեալ,  
Այն սակաւ գնդին  
Ողորմաւ աղիկագէտ զաչս ի վեր  
Համբարձեալ յերկինս,  
«Որ ես հայր որբոց յուսով,  
Ում յանձն արարեր ըզմեզ.  
Տարակոյս բաժին եմք.  
Յիշեա, յեղեա, մի մոռանար,  
Սեր խոսացար անուտ բանիւ,  
Ընդ մեզ լինել զաւուրս կենաց՝  
Մինչ ի կատարած երկիս»։

Սա էլ ամբողջ տաղն է, որը վերագրուած է Նարեկացուն։ Գեղարուեստական առումով այս տաղը, իրօք, արժանի է նրա գրչի արդիւնք համարուելուն և պոէտիկական ոճով նման է նրա տաղերին, բայց լեզուն և ոգին տարբերում են նրանցից և զարմանալի՝ մօտ են Արիստակէսի տաղին։ Նարեկացու համբարձման տաղերում նոյնպէս չի նկատուում վշտի ու թախծի արտայայտութիւն։ Ինչպէս յարութեան տաղերում էր, այստեղ էլ բանաստեղծը թախծ առաջացնող տարակոյսներ չունի համբարձման պատկերի հանդէպ։ Եթէ «Այն փոքրիկ հօտին արտմեալ» տաղում համբարձման առթիւ արտայայտուած է թախծոտ դանդաղ զգացմունք, ապա՝ Նարեկացու Համբարձման տաղերում այդ նոյն բանի համար արտայայտուած է մի ահասկ մարտական գոհունակութեան զգացմունք։

Ո՞վ է սա սասիկաւունչ բոսորանքիւնագարդեալ.  
Սա այն քաղաւորն է Բաշ կորովաբար ի պատերազմէ եկեալ։  
Ի վեր համբարձեմ իւխանք ըզդունս առ հայր զուեքս պատմեալ  
Անա սիրելի Բո սիրեցելոյ արհիլ զոր վկայեցեր զա սիրելի որդի։

Իբր օրինակ բերուած՝ Նարեկացուն վերագրուած բանաստեղծութիւններից այս երեք նմոշները յանդիցնում են հետեւեալ եզրակացութեան։ Հայ գրական վերածնութեան մեծ սկզբնաւորողից յետոյ հանդէս են գալիս բազմաթիւ բանաստեղծներ (նրանցից շատերի անունները և անձնաւորութիւնը մեզ անյայտ), որոնք իւրացնելով նրա



պոէտիկական նորամուծութիւնները, իրենք ևս ստեղծում են նոր ոգով զործեր: Յատկապէս աչքի է ընկնում այն հանգամանքը, որ այդ բանաստեղծները աշխարհիկ պատկերներով արտայայտում են մարդկային աշխարհիկ զգացմունքներ: Նարեկացուց յետոյ համարեալ են հանդիպում այնպիսի խոշոր գրողներ, որոնք եկեղեցական հին բանաստեղծութեան կաշկանդումներին ենթարկուած մնային:

Նարեկացու պոէզիայի նորութիւնները միջնադարում շարունակուում են ոչ միայն քնարերգութեան մէջ, այլև անցնում են էպիկական բանաստեղծութեանը: Պատահում են էպիկական բնոյթի փոքր պոէմներ, որոնց արուեստը այնքան մօտ է Նարեկացու տաղերի արուեստին, որ դարձեալ կարելի է վիճել, թէ մի գուցէ դրանք ևս Նարեկացին է գրել: Բնականաբար այդպիսի գրուածքներ էլ կարող էին վերագրուել նրան և վերագրուել են: Իր ժամանակին «Բագմովէպ»-ում տպագրուել են երկու շատ գեղեցիկ կարճ պոէմներ, որոնց թեման Յովհաննէս Մկրտիչի զլխատման պատմութիւնն է. դրանցից մէկը վերագրուած է Նարեկացուն, միւսի հեղինակն անյայտ է: Այդ պոէմները վերածնութեան ժամանակաշրջանի համար շատ յատկանշական են. երկուսի կառուցուածքում էլ հիմնական բաժինը յատկացուած է Հերովդէսի ծննդեան տարիւրդի տօնակատարութեան և նրա դստեր՝ Սալոմէի մարմնի և պարի գեղեցկութեան նկարագրութեան: Նարեկացուն վերագրուածը անմիջապէս սկսում է տօնակատարութեան նկարագրով:

Զինչ արգիւնախալ վայելախալ կային  
Սէր ի սիրայէ քաղցրաճնչեալ օդոյն.  
Շիւ Նարգիսայ լի քաղցրահամբոյ շքանց  
Շար մարգարազարդ լուսասպիսակ երամ:  
Խոպ խոպ խոպոպին վայր վայրենի ջոկիցն,  
Երկուց խնձորոց նեղաբենի ոսոց.  
Հոյլ մանրակոսոր արմաւենեաց ուկոյզն  
Մի առ մի ընրաց երբեւեկեալ գային:  
Էր նաւակասեւ Հերովդիայ ձերնդեանն,  
Շապ հրաւեր սրեալ համայնագնեան ռամկին:

Մեղմիկ շարժելով յայս կոյս եւ յայն նայի  
Մովածիւթին իւր մանաքեր աչօքն,

Կայրել կախաւ ըմբկանարիկ աղջիկն.  
Պագոս պակուցեալ Հերովդիսա արալ,  
«Արդ խնդրեալ յինէն, հրապարակաւ տեսմ,  
Զփառս իմոյ կենաց՝ ըզկեսըն օց ես քեզ»:  
Խրտեալ ի մօրէն յառաջագոյն աղջիկն  
Պարգեւս խնդրէր զալ զանաւազ ըզզուխն:

Այս հատուածից յետոյ գալիս է էլի մի տասը տող, և պոէմը վերջանում է: Յովհաննէս Մկրտիչի զլխատման բուն դէպքը առանձին տեղ էի գրուում (միայն մի տող է կազմում): Նմանապէս շատ քիչ տեղ են բրուում բանաստեղծի՝ այդ եղելութեան առթիւ արած խորհրդածութիւնները և հետեւութիւնները. վերջում բաւական սառնասրտութեամբ աւելում է միայն, որ Նարեկացու զօրք և ննջեցեալների հոգիներին աւետեց թէ Քրիստոսը նշանով յաղթեց մահուան:

Պոէմում գեղարուեստական վայրի և ջերմութեան տեսակէտից աչքի է ընկնում աշխարհիկ կեանքի այդ մի գրուագի՝ հանգիստոր հաւաքոյթի պատկերը, որը շատ հարուստ է բաղաձայնոյթներով, ինչպէս՝ «խոպ խոպ խոպոպին վայր վայրենի ջոկիցն», կամ «կայթիկ կաքաւել թմրկահարիկ աղջիկն»: Համարեալ նայն գեղարուեստական մտայղացումն ունի և այս թեմայով երկրորդ պոէմը, որը հաւանաբար նոյն հեղինակի զործն է և թւում է թէ նախորդի մի տարբերակը պիտի լինի, որտեղ միայն հաւաքոյթի փոխարէն՝ աւելի մանրամասն նկարագրուած է Հերովդէսի աղջիկը:

Խուսիք առ խուսիք հրաւեր սրեալ բազմութիւն զօրաց իւրոց,  
Գունդ առ գունդ ժողովեցան այդուն միաբան ի նաւն.  
Գուստր Հերովդիայ եկեալ դեմս առեալ մութեր աղջիկն,  
Ի խնոյս իջեալ աղջիկն առաջի բազումութիւն.  
Հերբն ծալ ի ծալ առեալ նմանաձեւ արալ օձին,  
Աչօքն ծաւալ ծփեր ծիրանի ծովու նրման  
Ուլունքն ի վերայ լսնջացն նրմանեալ լերանց ծաղկանց  
Եւ վարդ վառելով այսիցն նրմանեալ խայծեալ նրանց,



Ոսկանայն բնդիւն սաղիցն նոյն եւ ի շարժել  
մասանցն,  
Նսս դարձի դարձեալ մոլեր առաջի բազա-  
ւարին,  
Ճեմն առեալ նեպեալ նեմեր վազրս կախ-  
ւիւք վազեր:

Հէնց այս մանրամասնութիւնը շատ հետա-  
քրքրական է. մի կողմից՝ դա ցոյց է տա-  
լիս, թէ պոէմի հեղինակը որքան է սիրել  
Նարեկացու տաղերի պոէտիկան և որքան  
յաջող խրաչցրել է այն (դարձեալ յատկա-  
պէս աչքի է ընկնում բաղաձայնոյթներով  
գունագեղ երաժշտականութիւն տաղաց-  
նելու հակումը, ինչպէս՝ «Գունդ առ գունդ  
ժողովեցան այգուն . . .»: «Աչքքն ծաւալ  
ծփէր ծիրանի ծովու նման», կամ «Ճեմն  
սոսեալ ճնպեալ ճնմէր . . .»): Միւս կող-  
մից՝ դա ցոյց է տալիս վերածնութեան ժա-  
մանակաշրջանի մարդկանց կենցաղի և հո-  
գերանութեան մէջ առաջացած փոփոխու-  
թիւնները: Անկասկած Հերովդէսի հրաւի-  
րած շքեղ խնջոյքի և նրա աղջկայ արտա-  
քին յարդարանքի ու պարի պատկերը պոէ-  
մում, որոշ չափով տեղական կենցաղական  
հիմք ունի: Այնուհետեւ, ըստ երևոյթին,  
առաջին անգամ մեր բանաստեղծութեան  
մէջ, մինչ կոստանդին երդնկացին, կա-  
նացի գեղեցկութիւնը ներկայացուած է ոչ  
թէ յանձինս Մարիամ Աստուածածնի, այլ  
մի սովորական, այն էլ մի վատահամբաւ  
կնոջ:

Այժմ թողնենք Նարեկացու և հետա-  
գայ հայ գրականութեան կապը ցոյց տուող  
գրական առանձին փաստերի քննութիւնը  
և անցնենք այդ հարցի կապակցութեամբ  
մեր գրականութեան պատմութեան տուած  
առաւել կարեւոր ապացոյցներին:

Նարեկացուց անմիջապէս յետոյ հայ գե-  
ղարուեստական գրականութեան զարգա-  
ցումը որոշ շրջանում թուլանում է: ԺԱ.  
դարում վերանում են Արծրունեաց և Բագ-  
րատունեաց թագաւորութիւնները, ժողո-  
վուրդը նախ՝ բիւզանդական, ապա՝ սել-  
ջուկեան լծի տակ շատ ծանր օրեր է ապ-  
րում: Ստեղծուած քաղաքական-տնտեսա-  
կան չափազանց անբարենպաստ պայման-  
ների հետեանքով Ժ. դարում սկսուած հայ  
վերածնութեան բնական զարգացումը խան-

գարւում է այդ ժամանակաշրջանում: Փաստ  
է, որ Նարեկացուց յետոյ մինչև ԺԱ. դարի  
վերջերը հանդէս չեն գալիս այնպիսի բա-  
նաստեղծներ, որոնք զարգացնէին և առաջ  
մղէին գեղարուեստական գրականութեան  
թէ՛ թեմատիկ և թէ՛ խեղական բովանդա-  
կութեան աշխարհականացման գործը:

ԺԱ. դարի հայ գրողներից ամենայայտ-  
նին Դրիգոր Մագիստրոսն է, վերին աստի-  
ճանի բաղմակողմանի զարգացման տէր մի  
գիտնական անձնաւորութիւն, որը գեղար-  
ուեստական ստեղծագործութիւններ էլ է  
թողել: Սակայն Մագիստրոսը իր բանաս-  
տեղծութիւններով և մի պոէմով ոչ միայն  
գրական նոր ոչինչ չի աւելացնում աշխար-  
հականացման տեսակէտից, այլ աւելի դար-  
գացնում է այն, ինչ Նարեկացու ստեղծա-  
գործութեան բացասական կողմն էր կազ-  
մում, որ է խրթնարան ձեռք գրուած կրօ-  
նափրկիսոփայական բանաստեղծութիւնը:

Դրութիւնը միանգամայն փոխւում է  
ԺԲ. դարի կէսերից սկսած, երբ քայքայ-  
ուած սելջուկեան կայսրութեան սահմանն-  
րում ստեղծուած մանր տէրութիւնները  
թալանում և դէպի անկումն են գնում:  
Այդ ժամանակ հաստատւում է Զաքար-  
եաններ իշխանութիւնը, Հնորհիւ ուժեղա-  
ցած Վրաստանի օգնութեան՝ Հայաստանի  
շատ շրջաններ ազատագրում են սելջուկ-  
ների տիրապետութիւնից: Նորից իբր վա-  
ճառաշահ քաղաք ծաղկում է Անին. նորից  
ստեղծւում են, յատկապէս Շիրակում և  
Լոռիում, կուլտուրայի ու արուեստների  
զարգացման համար անհրաժեշտ նախա-  
գրեալներ: Այդ նոյն ժամանակաշրջանում  
Կիլիկիայում ուժեղանում է Ռուբինեան-  
ների իշխանութիւնը և Լևոն Բ. իրեն հըռ-  
չակում է թագաւոր: Այստեղ նմանապէս  
առաջանում են կուլտուրայի և արուեստի  
հռչակաւոր կենտրոններ:

Մ. ՄԿՐԵԱՆ

(Շարունակելի՝ 15)





## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ՄԱՂԱՐԴԱՅ  
Ս. ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔ

ՊԱՏՄԱԿԱՆ. — Նախիջևանի վանքերուն մէջ ամենէն հռչակաւորն է Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը, որ համանուն այլ վանքերէ կը զանազանուի Մաղարդայ վանք կամ Դարաշամբի վանք կոչումներով: Այս վանքը մասնաւոր հոգածութիւնը վայելած է Ս. Էջմիածնի կաթողիկոսներուն, ինչպէս կը տեսնուի հրատարակուած կոնդակներէն. — Հ. Հ. Ոսկեան, Վասպուրականի վանքերը, Բ., էջ 527-570 և 573-672:

Մաղարդայ վանքին առաջնորդական գաւազանը որոշ չափով կարելի եղած է կազմել, որ է հետեւեալը.

Ա. — Տէր Գրիգորիս, որդի Ապիրատի, 1173: Իր հայրութեան ժամանակ Գուրծի որդի Վահրամայ փղոսկրէ կազմով թանկագին Աւետարան մը կը նուիրէ «ի մեծահոգակ վանքս Մաղարդիս ի սուրբ Նախավկայս»: Հաւանարար նոյն ժամանակ ոմն Յովհաննէս քահանայ կը նուիրէ մէկ Տօնապատճառ. — Ոսկեան, Բ., էջ 538: Յովսէփեան, Յիշտ. Զեռագրաց, Թ. 207 և 294:

Բ. — Տէր Սարգիս, 1332. — Ոսկեան, Բ., էջ 539:

Գ. — Տէր Գրիգոր, 1381. — Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 537:

Դ. — Տէր Աւագ Եպիսկոպոս, 1430-40. — Այդ միջոցին վանքին մէջ իբրև լուսատու կը փայլէր Յակոբ Վարդապետ. — Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 396, 504:

Ե. — Մխիթար Եպիսկոպոս, 1440, Դրիչ և կազմող. — Ոսկեան, Բ. էջ 540, 586: Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 504:

Զ. — Տէր Անսոն, 1507. — Ոսկեան, Բ., էջ 541:

Է. — Արամաս Եպիսկոպոս, 1541-1563?, աշակերտ Սալմաստեցի Ստեփան

նոսի. առաջնորդ կը կարգուի Գրիգոր ԺԱ. Կաթողիկոսի կողմէ. — Ոսկեան, Բ., էջ 541-2, 593:

Ը. — Մարտեոս Արքեպիսկոպոս, 1563-1589?, առաջնորդ կը կարգուի Սեբաստացի Միքայէլ Կաթողիկոսի կոնդակով. — Ոսկեան, Բ., էջ 542-3, 600:

Թ. — Մարտիրոս Արքեպիսկոպոս, 1589-1601?. — Ոսկեան, Բ., էջ 543, 617:

Ժ. — Շմաւոն Արքեպիսկոպոս, 1601-1613?. — Ոսկեան, Բ., էջ 544:

ԺԱ. — Պետրոս Արքեպիսկոպոս, 1614-33?. — Ոսկեան, Բ., էջ 544, 606:

ԺԲ. — Շմաւոն Եպիսկոպոս եւ Յակոբ Զուլպայեցի, 1633-55. — Զուլպայեցին կը քակէ հին շէնքերը և կը կառուցանէ գեղակերտ նոր եկեղեցի մը. — Դաւրիթեցի, Պատմութիւն, էջ 346-7:

ԺԳ. — Միխայիլ Արքեպիսկոպոս, 1670-76. — Ոսկեան, Բ., էջ 519, 548-552:

ԺԴ. — Պետրոս Արքեպիսկոպոս, 1677-1703, եղբորորդի Միքայէլ Արքեպիսկոպոսի: Եղիազար Կաթողիկոս 1684 Նոյմ. 17 թուակիր կոնդակ մը կու տայ Նախավկայի վանքին Վարդապետներէն Յոհաննիս և Պետրոսի անունով, ուղղուած Թիֆլիզի և չըրջակայից հայերուն, որպէսզի նուէրներով օժանդակեն Նախավկայի վանուց նորոգութեան. — Ոսկեան, Բ., էջ 626-9:

ԺԵ. — Յակոբ Վրդ. Շամբեցի, 1703-1712?. — Ոսկեան, Բ., էջ 556-7: Երնջակ, էջ 270:

ԺԶ. — Գալուստ Վարդապետ, 1712-1739?, որդի Ներսէսի և Սառայի: Աղեքսանդր Կաթողիկոսի կողմէ Առաջնորդ կը նշանակուի 1712ին. — Աճառեան, Յուլիան Զեռ. Թաւրիզի, էջ 49: Ոսկեան, Բ., էջ 559, 640:

Կարապետ Կթղ. Ուլնեցի կը հաստատէ իր պաշտօնը 1728ին, և յաջորդ տարին ալ ուրիշ կոնդակ մը կու տայ նոյն վանքի միաբան Ստեփանոս Վարդապետին, որպէսզի նուէրներ հաւաքէ վանքին պարտուց վճարման և բազմատեսակ ծախուց համար. — Ոսկեան, Բ., էջ 559, 653-660:

ԺԷ. — Ազարիա Վրդ. Շամբեցի, 1739-59?. — Ազարիա էր աշակերտ Պետրոսի Բարսեւոյ և նա տեսնուի Գալուստի երիցս երանելոյն և նա Պետրոսի և նա Միքայէլի



հրատարակչի և նա տեառն Յակոբ Զուղա-  
յեցւոյ՝ բազմաշարչար կաթնաղիկոսի ամե-  
նից ազանց, և նա Փիլիպպոսի Աղբակե-  
ցւոյ . . . — Ոսկեան, Բ., էջ 560-561:  
Յ. Թօփճեան, Յուցակ Ձեռ. Խաչիկ Վրդ. ի,  
Բ., էջ 14 (11):

ԺԸ. — Մուս[ս]այել Վարդապետ, 1759-  
-66?։ Մեծ երկրաշարժ ժը 1759ին կը քան-  
դէ վանքին հարաւային պարիսպը, որուն  
շինութեան ծախսը հաշւոյն նպաստ հա-  
ւաքելու համար Յակոբ Կթղ. Շամախեցի  
կոնդակ ժը կու տայ, 1759 Նոյմ. 26 թու-  
կանով, վանքի առաջնորդ Մու[ս]այել  
Վարդապետին. — Ոսկեան, Բ., էջ 561:

Յաջորդ օրը, Նոյմ. 27ին, Շամախեցին  
Նախավկայի վանքին վրայ եպիսկոպոս կը  
ձեռնադրէ Գրիգոր Վարդապետը. — Ոսկե-  
ան, Բ., էջ 562-3, 666:

ԺԹ. — Գրիգոր Վարդապետ, 1766-82:  
Սիմէոն Կթղ. երեանցի յատուկ կոնդակով  
վանքին առաջնորդ կը կարգէ Գրիգոր Վար-  
դապետը. — Ոսկեան, Բ., էջ 563, 670:

Ի. — Մաղաֆիա Վարդապետ, 1791-  
-1820?։ Առաջնորդ կը նշանակուի Կարնեցի  
Ղուկաս Կաթողիկոսի կողմէ. — Սմբատ-  
եան, Երնջակ, էջ 462:

ԻԱ. — Սարգիս Վրդ. Գալիքեան, 1820  
-40. — Ոսկեան, Բ., էջ 564:

ԻԲ. — Յովնանեա Վրդ. Գալուստեան, 1841-  
-47. — Ոսկեան, Բ., էջ 564:

ԻԳ. — Յովնանեա Վրդ. Աւետեան, Շամ-  
բեցի, 1848-63?։ — Ոսկեան, Բ., էջ 549:

ԻԴ. — Մեսրոպ Վրդ. Սմբատեանց, 1865  
-6, կը նորոգէ տաճարի տանիքին արեւել-  
եան և հրսիսային կողմերը. — Երնջակ,  
էջ 487:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Մաղարդայ վան-  
քին մէջ գործող գրչի մշակներէն ծանօթ  
են հետեւեալները:

Ա. — Ատոլմ Գրիչ, 1381ին կ'օրինակէ  
Նարեկ ժը, ոմն Սիմէոնի համար. — Խա-  
չիկեան, Յիշտ. ԺԳ. Դարի, էջ 536-7:

Բ. — Գրիգոր Կրօնաւոր Արծկէցի, Էլ-  
մէլիբենց, գրիչ և ծաղկող, որդի Էլմէլիքի  
և Գոհարի, աշակերտ Յովհան Վարդա-  
պետի և Մանուէլ Աբեղայի, ուսուցիչ Սար-  
գիս Գրչի. 1427ին կ'օրինակէ մէկ Աւետա-

բան, Դանիէլ Կրօնաւորի խնդրանքով. —  
Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 365:

Գրիգոր Արծկէցի ապա եկած է Երու-  
սաղէմ և զբաղած իր գրչութեան արուես-  
տով, 1441. — Սիւրմէեան, Յուցակ Ձեռ.  
Երուսաղէմի, Ա., էջ 206: Աղաւնունի,  
Միաբանք. էջ 71, 519: Կիւլէսէրեան,  
Պատմ. Կթղ. Կիւլիկոյ, էջ 40-41:

Դ. — Մխիթար Աբղ. (Եպս.), Գրիչ եւ  
Կազմող, 1430-40, որդի Ամիր Ասաթի և  
Հաւորթի, Մաղարդայ վանքին մէջ:

1. — Գանձաբան, օրինակած է 1430ին,  
իրեն համար. — Խաչիկեան, Յիշտ. ԺԵ.  
Դարի, Ա., էջ 396:

2. — Կոչումն Ընծայութեան, Կիւրդի Ե-  
րուսաղէմացւոյ, կազմած է 1440ին. —  
Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 504:

Դ. — Տէր Ազարիա Գրիչ, 1507ին օրի-  
նակած է մէկ Աւետարան. — Ոսկեան, Բ.,  
էջ 541:

Ե. — Մովսէս Վրդ. Զուղայեցի, 1551ին  
գրած է մէկ Բնաբան Քարոզիչ Վարդապե-  
տաց. — Երնջակ, էջ 140:

Ձ. — Աւետիս Երէց, 1648ին օրինակած  
է մէկ Աւետարան. — Երնջակ, էջ 314 (455):

Է. — Իսահակ Սպահանցի, Գրիչ եւ Ծաղ-  
կող, 1670ին գրած և ծաղկած է մէկ Ման-  
ուսում, Սպահանցի Թորոս Կրօնաւորի հա-  
մար. — Ոսկեան, Բ., էջ 549:

Ը. — Արիստակէս Գրիչ, 1671ին օրի-  
նակած է մէկ Ժողովածու. — Ոսկեան, Բ.,  
էջ 549:

Թ. — Պետրոս Վարդապետ, որդի Պաղ-  
տատարայ և Մարճանի, 1672ին օրինակած  
է մէկ Ժողովածու. — Աճառեան, Յուցակ  
Ձեռ. Թաւրիզի, էջ 49-50:

Ժ. — Մարութա Դպիր Սիւնեցի, Գրիչ  
եւ Ծաղկող, գրած, ծաղկած և կազմած է:

1. — Մեկնիչ Սաղմոսացն Դաւրի, Ն.  
Համբարնացւոյ, 1675ին: Օրինակը բերուած  
է Վայոց Ձորի Շատիկ Անապատէն. — Ոսկե-  
ան, Բ., էջ 553-4:

2. — Մեկնիչ Խորհրդոյ, 1677ին, Շամ-  
բեցի Մարտիրոս Վարդապետին համար. —  
Ոսկեան, Բ., էջ 550-551:

ԺԱ. — Ստեփանոս Սրկ. Զուղայեցի,  
Գրիչ եւ Ծաղկող, որդի Յովհաննէս Սար-  
կաւազի և Գօղալի, 1684-6ին գրած և  
նկարած է մէկ Յայամաւուրք, Չորսեցի Մար-



## ՄԻՋ-ԵԿԵՂԵՅԱԿԱՆ

### ՂՊՏԱԿԱՆ ԵՒ ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Տարւոյ Յունիսի 25ին Ղպտական և Եթովպական Եկեղեցիներու միջև համաձայնութիւն մը գոյացաւ: Այս գովելի քայլը մատնանշուեցաւ Քրիստոնեայ Եկեղեցիներուն կողմէ որպէս նշան Եթովպական քոյր Եկեղեցւոյ առաւել կազմակերպման և բարգաւաճման, ինչպէս նաև Աղեքսանդրիոյ Ղպտի Պատրիարքութեան հեղինակութեան վերահաստատման:

Սոյն համաձայնութեան կարեւորութիւնը կը կայանայ հետեւեալ իրողութեանց մէջ.

ա) Եթովպական Ուղղափառ Եկեղեցւոյ պետը յետ այսորիկ կը կրէ «Պատրիարք» տիտղոսը:

բ) Աղեքսանդրիոյ Պատրիարքը կը մնայ միանգամայն Հոգեւոր Պետը երկու Եկեղեցիներու, այլ խօսքով Եթովպական Եկեղեցին ի հոգեւորս ենթակայ կը մնայ Աղեքսանդրիոյ Պատրիարքութեան:

գ) Երկու Եկեղեցիներուն միջև այս ձեւով յարաբերութիւնները կը դառնան բնական:

Արեւելեան մեզի դաւանակից այս երկու

Եկեղեցիներու համաձայնագրին պատճէնը ներկայացնելէ առաջ կարեւոր է մատնանշել հետեւեալ իրողութիւնները:

Ղպտի Ուղղափառ Եկեղեցին իր առաջին պետն ու Աղեքսանդրիոյ Աթոռին հիմնադիրը կը դաւանի Ս. Մարկոս Աւետարանիչը, և հետեւեալ իր գահակալ պատրիարքներուն կուտայ «Նորին Սրբութիւն Աղեքսանդրիոյ Պապ և Պատրիարք Ս. Մարկոսի Աթոռին» տիտղոսը: Եկեղեցւոյ պատմութիւնը չէ կիրարկած «Պապ» տիտղոսը այլ «Աղեքսանդրիոյ Ղպտոց Պատրիարք» կոչւած է Ս. Մարկոսի Աթոռին գահակալը:

Համաձայնագրի ոգին կազմող սկզբունքը հետեւեալն է. — Աղեքսանդրիոյ Ղպտի Պատրիարքութիւնը կեդրոնն է Եգիպտոսի և Եթովպիոյ Եկեղեցիներուն. Եթովպիոյ Եկեղեցին անկախ ու առանձին Եկեղեցի մը չէ եղած իր ինքնագլխութեան կանոնագրութեամբ, այլ իր հոգեւոր ու վարչական կերպարանքն ու կազմակերպութիւնը ստացած է Աղեքսանդրիոյ Ղպտի Պատրիարքութենէն, այս վերջնոյս կողմէ նկատուելով նուիրապետական անդամ Եկեղեցի մը: Այս նոյն սկզբունքը սակայն, ըստ համաձայնագրին, արտայայտած է նաև լայնախոհ ոգի մը, տալով վարչական որոշ իրաւասութիւններ Եթովպական Եկեղեցիին ու պետութեան, բարձրացնելով Հոգեւոր Պետին տիտղոսն ու աստիճանը և մանաւանդ Եթովպիոյ Վեհափառ Կայսեր ու կայսրութեան անմիջական հովանաւորութիւնն ու առաջնորդութիւնը ապահովելով:

Արդարև Եթովպական Եկեղեցին Պետութեան Եկեղեցին է, այն իմաստով որ քրիստոնեայ կայսրութիւնը իր քրիստոնեայ ժողովուրդով նոյնացած է Եկեղեցիին հետ, և այս բարեբախտութիւն մըն է արդարև: Կը սպասուէր որ երկու Եկեղեցիներուն միջև գոյութիւն ունեցող անհասկացողութեան անորոշ մշուշը փարատէր իմաստուն համաձայնագրութեամբ մը եւ մանաւանդ իմաստուն կայսեր օրով:

Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու մէջ Ղպտոց և Եթովպացւոց Եկեղեցիներու համաձայնութիւնը շնորհաւորելի է և մանաւանդ օրինակելի նաև անոր համար որ պահպանուած են կարգն ու կանոնը, սրբութիւնն ու աւանդութիւնը երկուստեք:

կոսի պատուէրով. — Աճառեան, Յուցակ Զեռ. Թեհրանի, 1936, էջ 7-8:

Հաւանաբար նոյն Ստեփանոս Սարկաւազն է դարձեալ որ 1705ին օրինակած է մէկ Գիրք Ս. Դիոնեսիոսի. — Ոսկեան, Բ., էջ 559:

ԺԲ. — Յակոբ Վարդապետ, Առաջնորդ Նախաժողովի Վանից, 1703ին օրինակած է մէկ Յայտաւորւմ. — Երնջակ, էջ 270:

ԺԴ. — Եզնիկիէլ Դրիչ, 1711ին օրինակած է մէկ Խորհրդատւ. — Ոսկեան, Բ., էջ 558:

ԺԿ. — Մելքոն Երէջ Զուլայեցի, 1724ին օրինակած է մէկ Միջակեան Բիւզանդաւան Պատմութիւն. — Երնջակ, էջ 128:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ



յարգուած են միջոցներու խտրութիւնը, Ղպտոց Պատրիարքը առաջին և եթովպացոց Պատրիարքը (կաթողիկոսը) երկրորդ զիրքերով, ինչպէս նաև վարչական ու իրաւասական սահմանները:

### Համաձայնութեան Բանաձևը (Համաձայնագիր)

Նկատելով որ Ս. Մարկոսի Աթոռի բոլոր զաւակներուն առաջին նպատակն է Աթոռի գործերուն կազմակերպումն ու շրջանային յարաբերութեանց սերտացումը, անհրաժեշտ նկատուեցաւ ձեռք առնել ամէն կարելի միջոց հասնելու համար այդ նպատակին, սկսելով ամենէն կարեւորէն՝ Յարաբերութեան վերահաստատումը Ս. Մարկոսի Աթոռի երկու եկեղեցիներու՝ Եգիպտոսի եւ Եթովպիոյ:

### Հետեւեալ համաձայնութիւնը գոյացաւ ընդմէջ. —

Ա) Եթովպական Պատուիրակութեան, բաղկացած Նորին Կայսերական Վեհափառութիւն Եթովպիոյ Կայսեր և Եթովպական Եկեղեցւոյ ներկայացուցիչներէն, և

Բ) Ղպտական Պատուիրակութեան, նշանակուած Նորին Սրբութիւն Աղեքսանդրիոյ Պապին և Ս. Մարկոսի Աթոռի Պատրիարքին կողմէ:

1. — Աղեքսանդրիոյ Պապը և Ս. Մարկոսի Աթոռին Պատրիարքը, յաջորդը Ս. Մարկոս Աւետարանչի, Եթովպական Եկեղեցւոյ բարձրագոյն Հոգեւոր հայրն է: Ան պէտք է ըլլայ միշտ Եգիպտացի Ղպտի մը՝ Եգիպտոսէն. իր միայուն գահն է Աղեքսանդրիոյ Աթոռը, Եգիպտական հողի վրայ. իր հեղինակութիւնը անխոցելի է և իր անձը՝ քննադատութենէ վեր:

Աղեքսանդրիոյ Պապին և Ս. Մարկոսի Աթոռի Պատրիարքին անունը պիտի յիշատակուի Եթովպական եկեղեցիներու մէջ, ժամապաշտութեանց ընթացքին:

Որպէս գերագահ գլուխ Եկեղեցւոյ, Նորին Սրբութիւն Աղեքսանդրիոյ Պապին այցելութիւնը Եթովպիա պիտի ընդունուի պատուով և ըստ արժանոյն:

2. — Եթովպիոյ Եկեղեցւոյ ներկայացուցիչ-պատգամաւորները, սահմանուած թիւով, պիտի մասնակցին Ս. Մարկոսի Աթոռի յաջորդի ընտրութեան: Անոնց թիւը

պիտի որոշուի Նորին Սրբութիւն Աղեքսանդրիոյ Պապին կողմէ:

3. — Ս. Մարկոսի Աթոռին Տեղապահը միշտ պէտք է ըլլայ Ղպտի-Եգիպտացի մը:

4. — Եթովպիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ Պատին (Liqa Papasat) աստիճանը, որպէս Ս. Takle Haymanot-ի յաջորդ, կը բարձրացուի Պատրիարքութեան (Reesa Liqana Papasat):

Եթովպական Եկեղեցւոյ Պատրիարքը պէտք է ընտրուի համաձայն Աղեքսանդրիոյ Ս. Մարկոսի Աթոռի օրինաց և աւանդութեանց, Եթովպացի վանական-հոգեւորականութեան կողմէ:

5. — Եթովպական Եկեղեցւոյ Պատրիարքը ընտրուելէ յետոյ համաձայն Եկեղեցւոյ կանոնական Օրէնքին, և այդ ընտրութիւնը Ն. Կ. Վ. Եթովպիոյ Կայսեր կողմէ հաստատուելէ և ընդունուելէ ետք, իր օժուածն ու հոգեւոր իշխանութիւնը կը ստանայ, համաձայն Եկեղեցւոյ օրէնքին, Պապ-Պատրիարքէն՝ որ կը գրաւէ Աղեքսանդրիոյ Ս. Մարկոսի գահը:

6. — Եթովպիոյ Պատրիարքը իրաւասու է Արքեպիսկոպոսներ ու Եպիսկոպոսներ ձեւնադրել Եթովպական Եկեղեցւոյ թեմերուն համար, պայմանաւ որ ընտրեալ թեմականները իրենց գրաւոր խոստմագրերը ներկայացնեն ձեւնադրութենէն առաջ:

Այս ստորագրուած խոստմագրերը պիտի զրկուին Աղեքսանդրիոյ Պապին, Ս. Մարկոսի գահի Պատրիարքին, Ն. Կ. Վ. Եթովպիոյ Կայսեր անոնց ընտրութիւնը վաւերացնելէ անմիջապէս ետք:

7. — Եթովպացի թեմակալ Եպիսկոպոսներու և արքեպիսկոպոսներու պաշտօնական արձանագրութիւնը Ղպտոց Պատրիարքարանի Դիւանատան մէջ Պապին կողմէ ամբողջացուելու համար, Եթովպիոյ Պատրիարքը պիտի զրկէ Խոստմագրերուն հետ միասին յարակից ծանօթութիւններ համապատասխան թեմերու մասին և թեմակալներու կենսագրութիւնները:

Պապը Աթոռի բոլոր թեմերուն ու շրջաններուն պիտի զրկէ Ս. Մարկոսի Աթոռին բոլոր Արքեպիսկոպոսներու և Եպիսկոպոսներու կենսագրութիւններն ու թեմական յարակից ծանօթութիւնները:

8. — Երբ որ Պապը փափաքի խորհրդաժողով մը գումարել վարդապետական նիւ-



թերու և կամ Աթոռի վարչական խնդիրներու մասին, պիտի տեղեկացնէ Եթովպիոյ Պատրիարքին և կազմէ Ընդհանուր Սուրբ Սինոդ մը, Ս. Մարկոսի Աթոռի շրջանային (թեմական) Արհուպներու Արքեպիսկոպոսներէն և Եպիսկոպոսներէն բաղկացած, խորհրդակցելու համար տուեալ հարցերուն շուրջ:

Նմանապէս Պապի անձն ու սրբութիւնը արատող որեւէ խնդիր պիտի քննուի այս Արհուպին կողմէ:

9. — Աղեքսանդրիոյ Պապին ու Ս. Մարկոսի Աթոռի Պատրիարքին կենդանութեան ժամանակ, Եթովպիոյ Պատրիարքը միշտ պիտի գրաւէ երկրորդ գիրքը. Պապէն անմիջապէս ետք, Աղեքսանդրիոյ Պապի վախճանման պարագային Եթովպիոյ Պատրիարքը պիտի գրաւէ երկրորդ գիրքը: Ս. Մարկոսի Աթոռի Տեղապահէն անմիջապէս ետք:

10. — Ընդմէջ Եգիպտոսի և Եթովպիոյ Եկեղեցիներու ի հոգևորս հաղորդակցութիւնը մնալուն դարձնելու մտածումով, կրօնական ուսուցման մարզին մէջ պիտի կատարուի ուսուցչներու և աշակերտներու փոխանակում, և նմանապէս վանական կեանքի պահպանման համար ալ՝ վանականներու փոխանակում:

11. — Հետեւեալ հարցերը պիտի ենթարկուին Ն. Ս. Պապին ու Եթովպիոյ Պատրիարքին միջև ապագային կայանալիք խորհրդակցութեան. —

ա) Որոշում առնել Ս. Մարկոսի Աթոռին նոր թեմեր ստեղծելու կապակցութեամբ, ներկայիս գոյութիւն ունեցող շրջաններէն զատ:

բ) Որոշում առնել ուսումնական խորհուրդներ կազմելու կապակցութեամբ, որոնք պիտի ուսումնասիրեն հոգևոր դարգացման նիւթերն ու կրօնադիտական դարձնեցողութիւնը և կազմակերպեն քարոզչական ու հովուական աշխատանքը:

12. — Որեւէ համաձայնագիր, բխած Ս. Սինոդի որոշումներէն, մանաւանդ 1948 Յուլիանը, որ հակառակ է ներկայ համաձայնագրին, չեղեալ կը համարուի:

Գահիրէ, Յունիս 25, 1959. Բառենա 18, 1675.

Սանէ 18, 1951:

ԶԱԽԷՆ ՎՐԴ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

## ԳՐԱԴՈՍԱԿԱՆ

“ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

ՀԱՍԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ 562 ԼԵԶՈՒՆԵՐԻ”

Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՀՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ — ԵՐԵՎԱՆ — 1955, էջ 655

Արդ, միջազգային լեզուի մը ստեղծման առնչութեամբ, երկու սկզբունքներ գոյութիւն ունին. ոմանք համաձայն են նոր արուեստական լեզուի մը ստեղծման, իսկ ուրիշներ՝ որեւէ կենդանի լեզու մը իբրեւ ընդհանուր լեզու ընդունելու տեսակէտին:

1880-ական թուականներէն սկսեալ, երևան եկած են արուեստական լեզուներու հեղինակներ: Անոնց շարքին կը գտնուին աւ Զմիւռնիացի հայ մը՝ որ կազմած է Սահլեռայ անունով համաշխարհային լեզու մը. այդ լեզունով սահլէ կը նշանակէ «աշխարհ» և ռայ՝ «լեզու»: Շլայեր անունով գերմանացի կրօնաւոր մը հնարած է վոլաբուկը՝ 1878ին: Լեհ Տքթ. Զամենհոֆը հնարած է էսպերանդոն: Իւնիվերսալը, զոր հնարեց Տքթ. Մոլենարը, և Լանկայթոն՝ զոր հնարեց Բուլարը 1900ին Փարիզի մէջ: Մինչև վերջերս, էսպերանդոն բաւական լաւ ընդունելութիւն գտած էր, բայց զիտունները վերահասու եղան որ ան ալ լաւ կազմուած լեզու մը չէ. հեղինակը սլաւըլաով, իր հնարած լեզուին տուած էր սլաւական քերականութեան կառուցուածքը: Իսկ Պոֆրոնը և Գուդիւրան նոր բարեփոխումներու ենթարկելով էսպերանդոն, հնարեցին Իդո լեզուն, իբրեւ էսպերանդոյի աւելի մշակուած ձևը: 1900ին՝ գրեթէ միաժամանակ հնարուեցան երկու ուրիշ նոր լեզուներ՝ օֆիսեցիալը և նովալը (վերջինը յայտնի լեզուաբան Եսթրասընի կողմէ), երկուքն ալ կազմուած զուտ լատինական հիման վրայ և անգլերէնի քերականութեան սկզբունքներով: Անգլիոյ մէջ կազմուեցաւ Ինդերլինկուա լեզուն: Վերջապէս, Փարիզի մէջ, Սորպոնի դասախօս Մարթինէն հնարեց Նալա լեզուն:



Արուեստական բոլոր լեզուներու հեղինակներն ալ ջանացած են Եւրոպայի երեք լեզուական մեծ ընտանիքներէն՝ Ռոմանականէն, Դերմանականէն և Սլաւականէն հաւաքել այն բոլոր բառերը՝ որոնք քիչ թէ շատ արդէն ընդհանուր են վերոյիշեալ լեզուներուն, և անոնց աղբիւր կազմած են նաև պարզ և տրամաբանական քերականութիւն մը:

Վոլաբուկն ու Էսբերանդոն իրենց գոյաւորման սկզբնական շրջաններուն մեծ խանգաւառութիւն ստեղծեցին. կը կազմակերպուէին համագումարներ, կը հրատարակուէին թերթեր, զիրքեր, եւայլն: Բայց այդ լեզուները խօսողներու համեմատութիւնը չէր կրնար բաղդատուիլ անշուշտ կենդանի լեզուներ գործածողներուն հետ: Բայց այսօր հետեորդներու թիւը նուազած է և միջազգային լեզուի մը զաղափարը յառաջդիմութիւն չ'արձանագրիր: Արուեստական միջազգային լեզուի հակառակորդները հետեւեալ առարկութիւնները կը մէջբերեն. —

ա) Կարելի պիտի չըլլայ իրադրոծել և պահպանել միջազգային լեզու մը, որովհետև իր ստեղծուելէն շատ ժամանակ չանցած ան պիտի ենթարկուի փոփոխութիւններու և զանազան երկիրներու մէջ զանազան ձևեր պիտի ստանայ, այնպէս որ միևնոյն միջազգային լեզուէն յառաջ պիտի գան զանազան լեզուներ և բարբառներ, ինչպէս է պարագան աշխարհի բոլոր լեզուներուն:

բ) Արուեստական լեզուն, որու կողմէ ալ ստեղծուած ըլլայ, անշուշտ պիտի ձեւաւորուի ունէ ազգի մը լեզուի հիման վրայ, ուստի պիտի բաղխի միւս ազգերու նախանձին և ազգային առեւտութեան:

գ) Արուեստական լեզուները չեն կրնար յաջողութիւններ արձանագրել զիրենք խօսողներու սակաւութեան պատճառաւ:

Թէև Աճառեան վերոյիշեալ առարկութիւններուն դէմ արդարացումներ կը բերէ ի նպաստ միջազգային արուեստական լեզուի մը ստեղծման, բայց կը խորհնք թէ իր արդարացումները գործնական բնոյթ մը չեն կրեր:

Ապա, անդրադառնալով լեզուի և հասարակութեան փոխյարաբերութեանց մա-

տին, Աճառեան կը քննադատէ նորեւուկ լեզուաբանները, որոնք լեզուաբանութիւնը դասելով հասարակական գիտութիւններու շարքին, կը բռնադատեն լեզուի բոլոր երևոյթները անպայման դատել և մեկնաբանել հասարակական տուեալներով: Իրաւամբ, Աճառեան ծայրայեղութիւն և միակողմանիութիւն կը դռնէ այս մերձեցումին մէջ, և լռելեայն կը պախարակէ Մատի լեզուաբանական մեկնաբանութիւնները՝ որոնք լեզուական երևոյթներու լուսաբանութիւնը ստրկօրէն կը կապէին հասարակական և տնտեսական պայմաններու հետ: «Ո՛չ քաղաքական կազմակերպութիւնները, ո՛չ աշխարհագրական բաժանումները և ո՛չ իսկ հասարակական մեծ ռեվոլյուցիաները (յեղափոխութիւնները) չեն կարող լեզուի մէջ հիմնական փոփոխութիւններ մտցնել: Հին Եոյնները կազմել էին իրարից անկախ զանազան պետութիւններ, և թէև ունէին զանազան բարբառներ, բայց յունարէնը միւնդհանուր լեզու էր: Լեզուների էվոլյուցիան (եզաշրջումը) հասարակական ռեվոլյուցիաների մի գրասնորումը չէ. նրա կրած փոփոխութիւնները զուգահեռ չեն հասարակութեան կերպարանափոխութիւնների հետ. հասարակութեան կրած բոլոր կերպարանափոխութիւնները չեն ցոյցանում անմիջապէս և անհրաժեշտօրէն նաև լեզուի քերականութեան, նրա կառուցուածքի մէջ: Լեզուն բոլոր հասարակական երևոյթների մէջ, ամենից պահպանողականներից մէկն է, և լեզուաբանութիւնը ի՛նչ կապերով էլ որ կապուի հասարակութեան պատմութեան հետ, գարձեալ նա իր անկախ դիրքը պէտք է որ պահի»: —

15) Լեզուի փոխանցումը. — Լեզուն գոյութիւն չունի եթէ այդ լեզուով խօսողներ չկան: Լեզուն իր գոյութիւնը կրնայ շարունակել միայն փոխանցման միջոցաւ, զայն խօսող հասարակութեան մէջ, և այն ալ բերանացի կերպով: Լեզուն աւանդ մըն է զոր սերունդները իրարու կը փոխանցեն դարէ ի դար, առանց ընդհատման: Ուր որ ընդհատում կը յառաջանայ, լեզուն կը ջնջուի, և այլևս մարդկային որեւէ ոյժ չի կրնար զայն վերակենդանացնել: Այսպէս կորսուեցան Բիւթանացիներու, Պափուզոնցիներու, Մարիբու և այլ բազմաթիւ հին ժողովուրդներու լեզուները:



16) Լեզուի եղաչրջումը: — Ինչպես բոլոր երևոյթներու, նոյնպէս ալ լեզուի զարգացման մէջ կը գործէ եղաչրջման օրէնքը: Երբ որեւէ լեզուի մը հնագոյն շրջանը կը համեմատենք անոր նորագոյն շրջաններուն հետ, պիտի գտնանանք նկատելով այն փոփոխութիւններու գումարը՝ զոր կրած է լեզուն տուեալ ժամանակաշրջանին. ձայներու, բառերու, ձևերու և նշանակութիւններու փոփոխում, քննութեամբ յաւելում: Լեզուի ամենափոքր տարրերէն սկսեալ մինչև ամենամեծերու մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը այնպիսի ընդհանրական երևոյթ մըն է որ յատուկ է բոլորին և ուր ոչ մէկ լեզու բացառութիւն կը կազմէ: Եղաչրջման օրէնքը անխուսափելի է: Չկայ լեզու մը որ բացառութիւն կազմէ. բոլորն ալ կ'ենթարկուին անոր: Տարբերութիւնը հոն է որ եղաչրջման օրէնքը բոլորին քով նոյն արագութեամբ չի գործեր: Լեզուներ կան որոնք շուտ կը փոփոխուին, կը ձևափոխուին, իսկ ուրիշներ, ընդհակառակը, կը մնան շարունակ իրենց նախկին վիճակին մէջ: Այս վերջին կարգին կը պատկանին բոլոր սեմական լեզուները: Եղաչրջումը գետ մըն է, երբեմն արագ ու հոսանուտ, երբեմն դանդաղ ու հանդարտ, բայց միշտ կը հոսի և երբեք կանգ չ'առնէր: Իսկ եթէ նկատելու ըլլանք որ հին լեզուները գրականութեամբ դարեր շարունակ նոյն ձևի տակ քարոցած են, այդ խաբուսիկ երևոյթ մըն է: Լեզուն ժողովուրդի մէջ շարունակ կը փոխուի. գրագէտներն են միայն որոնք հին լեզուն գիրքերէն սորվելով նոյն ձևի տակ կը շարունակեն պահել: Եղաչրջման օրէնքը մարդու կամքէն անկախ է և կը գործէ նոյնիսկ հակառակ անոր կամքին: Ոչ ոք կը փափաքի իր լեզուն փոխուած խօսիլ, բայց ոչ մէկ մարդկային ջանք, անհատական թէ հաւաքական, կրնայ լեզուն կեցնել իր ընթացքէն: Սրինակ՝ Լատիներէնը, որ Հռոմէական «տիեզերական» պետութեան փառաւոր լեզուն էր: Հռչակաւոր մատենագիրներ, անուանի գիտնականներ, մեծամեծ պետական գործիչներ, կայսրեր ու զօրավարներ մշակեցին, տարածեցին ու պահպանեցին զայն և մտածել տուին թէ «յաւիտենական քաղաքի» լեզուն յաւիտեան

ալ պիտի մնար: Բայց ի զո՞ւր: Հռոմէական դատական գրականութիւնը 180 տարիներէ աւելի չ'ապրեցաւ: Հսկայ կիկերոնը ինքն իսկ ակնհասեալ եղաւ լատիներէն լեզուի անկման: Ի զո՞ւր աշխատեցաւ Գլադատիոսը բովանդակ կայսերական իշխանութեան գորութեամբ կատեցնելու անոր քայքայումը: Հարիւրաւոր տարիներ կեանքի և մահուան միջև երեքաց լատիներէնը, և վերջապէս Թ. - Ժ. դարերուն փչեց իր վերջին շունչը: Եւրոպացի այն գիտնականները՝ որոնք այդ լեզուի մահէն վերջն ալ կը պահէին տակաւին անոր յիշատակը, կը սորվէին ու կ'ուսուցանէին լատիներէնը դպրոցներու, համալսարաններու և գրականութեան մէջ, և անմիտ երազը կը սնուցանէին վերականգնացնելու այդ լեզուն: Անհամար ջանքեր թափուեցան Եւրոպայի գանազան երկիրներու մէջ, առօրեայի մէջ գոյութեան իրաւունք տալու համար այդ լեզուին. բայց ի զո՞ւր: Ստեղծուածը լատիներէնի անուան անարժան կապկութիւն մըն էր, որ ո՛չ հին էր և ո՛չ ալ նոր: Աճառեան հաստատելէ վերջ լեզուի եղաչրջման իրականութիւնը, չի ներկայացներ մեզի այդ եղաչրջման եղանակները: Արդարեւ, լեզուն կ'եղաչրջի դուրսիցներու կամ կառուցումներու յաջորդականութեամբ մը: Լեզուի եղաչրջումը լեզուական առանձին երևոյթներու փոփոխութիւնը չէ, այլ է մասնաւորապէս լեզուական գրութիւններու՝ հնչութեամբական, ձևաբանական կամ իմաստաբանական կառուցուածքներու փոփոխութիւնը:

17) Լեզուի կենսաբանութիւնը: — Լեզուն ունի իր յատուկ կենսաբանութիւնը, իր արտայայտուելու մասնաւոր ձևը: Ընդհանուր առմամբ, լեզուները իրենց արտայայտական մասնայատկութիւններով, կը ստորաբաժնուին չորս խումբերու. ա) Անշատական, բ) Կցական, գ) Թեմական, դ) Համադրական:

Ա. — Անշատական լեզուներ: — Այս խումբին նշանաւոր ներկայացուցիչներն են՝ չինարէնը, անամերէնը, սիամերէնը և թիպէթերէնը: Բ. — Կցական լեզուներ: — Այս խումբին դասական օրինակն է թրքերէնը: Կցական լեզուներու շարքին առանձին տեղ մը կը գրաւեն զա-



սանիթ լեզուները՝ որոնք յատկապէս ավերիկեան լեզուներն են, մասնաւորաբար պանդու լեզուները: Գ. — Թեֆալան լեզուն էր: — Այս խումբին կը պատկանին սանսկրիտերէնը, յունարէնը, լատիներէնը, հայերէնը, և այլն: Թեքականութեան գերագոյն աստիճանը կը ներկայացնեն սեմական լեզուները: Դ. — Համալրական լեզուներ: — Այս խումբը կը զետեղուի կցական և բեֆական դրութիւններու միջև: Համալրական խումբին կը պատկանին հրրերպորեան լեզուները և էսպիմոներու լեզուն: Արեւմտեան լեզուն իր կենսաբանական կառուցուածքին մէջ կը ներկայանայ երեք գլխաւոր արտայայտական կերպերով՝ անջատում, կցում, թեքում: Աճառեան կը սահմանափակուի միայն յիշելով այս երեք երեւոյթները: հարկ էր խորացնել մտածումներու շարքը ու հասնիլ լեզուներու կառուցանողական դասակարգման մը: Դրքին երկրորդ մասը թէև նուիրուած է լեզուներու դասակարգման, բայց ծագումնաբանական դասակարգման է որ կ'սկնարկէ հեղինակը, ինչ որ ծանօթ է արդէն գիտութեան մէջ: Կառուցանողական դասակարգումը շատ պիտի աւելցնէ, բայց նոր լոյսեր կը սպասուին այդ ուսումնասիրութիւններէն՝ լեզուներու կառուցուածքային մասնայատկութիւններու առնչութեամբ:

18) Լեզուի յատկութիւնը և կատարելութիւնը: — Նոյն համայնքի մէջ, նոյն լեզուով խօսող մարդոց մօտ յաճախ նկատելի են որոշ տարբերութիւններ: Անկը արագ կը խօսի, միւսը՝ դանդաղ. մէկը պարզ և զիւրահասակնալի ձեռով, միւսը՝ մութ ու խորհրդաւոր. մէկը զուարթ և երգիծական ոճ ունի, միւսը՝ լուրջ ու ծանրասէ: մէկը շարունակ պատկերներ, ոճեր, առածներ, առկներ և զանազան դարձուածքներ կը գործածէ, միւսը կը պատմէ շատ հասարակ ձեռով: Լեզուի այս յատկութիւնները կը պատկանին այս կամ այն անձին և չեն կապուիլ այդ լեզուին ընդհանուր յատկութիւնները: Աստեք մասնաւոր յատկութիւններ են, Սոսիւրեան ոճով պիտի ըսէինք խօսքի մասնայատկութիւններ: Բայց լեզուն ունի նաև այնպիսի յատկութիւններ՝ որոնք սեփական են լեզուին և ըստ այնմ պարտադիր ձեռով երևան կու գան նոյն

լեզուով խօսող բոլոր անհատներու մօտ: Աստեք են ընդհանուր յատկութիւնները: Լեզուի ընդհանուր յատկութիւններն են՝ ա) Գեղեցկութիւնը, բ) Հարստութիւնը, գ) Ժօխութիւնը, դ) Համառօտութիւնը, ե) Սեղմութիւնը, զ) Կանոնաւորութիւնը, ե) Յստակութիւնը, ը) Պարզութիւնը, ը) Մաքրութիւնը: Չենք խորհրդիլ թէ լեզուի յատկութիւններու այս բաժանումները սպառիչ են: Լեզուի կառուցանողական բնութեամբ երեան պիտի բերէր յատկութիւններու աւելի ճոխ մթերք մը:

19) Լեզուի գեղեցկութիւնը: — Գեղեցկութիւնը յարաբերական բնութեամբ է: Գեղեցկի կը նկատենք այս կամ այն լեզուն ոչ թէ անոր համար որ էապէս գեղեցիկ է, այլ այն պատճառով որ մեր միջավայրը այդ կը պարտադրէ: Բայց այս բոլոր նախապաշարումներէն վեր գոյութիւն ունի իրապէս լեզուի մէջ էական գեղեցկութիւն մը: Արդ, լեզուի գեղեցկութիւնը կը պայմանաւորուի նախ իր ձայնականութեան գրոշմով, որ համազօր է ներդաշնակութեան. իսկ ներդաշնակութիւնը մեծաւ մասամբ կապուած է զիւրաւոր, զիւրահանգիւն ըլլալու հանգամանքին հետ: Արդարեւ, զիւրահանգիւն են այն բառերը՝ որոնք բաղաձայններու խճողում մը չեն ներկայացնիր, այլ ձայնաւորներու որոշ քանակութեամբ մը բարեխառնուած են: Արեւմտեան լեզուի գեղեցկութիւնը մասնաւորապէս կախում ունի ձայնաւորներու և բաղաձայններու տոկոսային յարաբերութիւններէն:

Աճառեան կատարած է նաև վիճակագրութիւն մը Մետրոպեան չրջանի հայերէնի ձայնական դրութեան և հասած է հետևեալ եզրակացութեան. — ձայնաւորներ՝ 36.7<sup>0</sup>/<sub>0</sub>, երկրարբաններ՝ 8.2<sup>0</sup>/<sub>0</sub>, բաղաձայններ՝ 54.9<sup>0</sup>/<sub>0</sub>: Աշխարհաբարի համար մօտաւոր հաշուով կ'ունենանք. ձայնաւորներ՝ 41<sup>0</sup>/<sub>0</sub>, բաղաձայններ՝ 59<sup>0</sup>/<sub>0</sub>: Արդ, զբարբարը աշխարհաբարէն 4<sup>0</sup>/<sub>0</sub> աւելի ներդաշնակ է: Բայց լեզուի մը ներդաշնակութիւնը բնորոշելու համար չի բաւեր միայն նկատի առնել ձայնաւորներու և բաղաձայններու ընդհանուր տոկոսային չափը, այլ պէտք է հակակշռել նաև անոնց բաշխման կարելիութիւնները և նշել շեշտի և ձայնատիճանի մասնայատկութիւնները լեզուի մէջ:



20) *Լեզուի հարստությունը*։ — Լեզուի մը ունեցած բառերու քանակը իր հարստությունն է։ Հայերէն Առձեռն Բառարանը (տպ. 1865) ունի 56,410 բառ, չհաշուելով սճերը և միևնոյն բառի զանազան գրչութիւնները կամ տարբեր առումները, զորս Առձեռնը յաճախ իրրե առանձին բառեր կը յիշէ։ Ֆրանսերէնը թէև Ակադեմիայի Բառարանի 1878ի հրատարակութեան մէջ, ըստ Brachet և Dussonchetի Grammaire Française Cours Supérieur, 1903, էջ 14, ունի չուրջ 32,000 բառ, Աճառեան սակայն Petit Larousse Illustré (1919) բառարանին մէջ գտած է 45,287 բառ։ Լատիներէնը ունի 50,644 բառ (գործածուած է Guicheraut և Daveluyի Dictionnaire Latin-Français, 47 տպ., Paris, 1913, որ լատիներէնի լիակատար բառարանն է, և որ կը պարունակէ սկիզբէն մինչև Ձ. դար գործածուած բոլոր բառերը։ Չին հաշուած բնականաբար յատուկ անունները և քերականական ձևերը՝ որոնք իրրե առանձին բառեր յիշուած են բառարանին մէջ)։ Հին յունարէնը ունի 80,000 բառ (գործածուած է M. A. Baillyի Dictionnaire Grec-Français, 2. տպ., որ յունարէնի ամենամեծ բառարանն է։ Չին հաշուած յատուկ անունները և քերականական ձևերը՝ որոնք այս բառարանին մէջ յիշուած են իրրե առանձին բառ)։ Սանսկրիտերէնը ունի 105,177 բառ (գործածուած է Otto Böhtlingk և K. Rothի Sanskrit-Wörterbuch, Petersburg, 1855-75, եօթը հատորոնց ամենաճոխ բառարանը։ Չին հաշուած միևնոյն բառի տարբեր գրչութիւնները և ձևազարկան սխալ ձևերը՝ որոնք այս բառարանին մէջ յիշուած են առանձին առանձին։ Բայց հաշուած են յատուկ անունները՝ որոնք սանսկրիտերէնի մէջ իմաստ ունեցող յատուկ անուններ են)։ Արաբերէն բառերու թիւն է 63.610 (գործածուած է Ղամուս մեծածաւալ բառարանը)։ Թուրքերէնը ունի 29,320 բառ (գործածուած է Պետրոս Ձէքի Կարապետեանի Օսմանեան-Հայ բառարանը, տպ. Պոլիս, 1912, որ աւելի ընդարձակ է քան Ափրիկեանի բառարանը)։ Ասորերէնը ունի 14,844 բառ (գործածուած է Brockelmannի Lexicon Syriacum, Berlin, 1895, Ասորերէն-Լատիներէն բառարանը՝ որ ասորերէնի

միակ և լաւագոյն բառարանն է։ Բառերու թիւն է 12,658։ Չին հաշուած ձեռագրական վրիպակները և տարբեր ընթերցումները՝ որոնք երբեմն յիշուած են այս բառարանին մէջ)։ Սակայն ընդլայնելով հարստութեան գաղափարը, միայն բառերու քանակը չէ որ կը կազմէ լեզուի մը հարստութիւնը։ Կարևոր է նաև այն պարագան՝ որ լեզուն զիտնականներու և գրականագէտներու միացեալ աշխատանքով ճշգրտաբար ըլլայ լիարժանելի բառի ճշգրիտ իմաստը, անոր գործածութեան տեղն ու ձևը, որոշուած ըլլայ թէ մշակուած ուրիշ լեզուներու բառերուն դէմ ի՞նչ համապատասխան ձևեր պէտք է յատկացնել կամ, եթէ չկայ, ստեղծել։ Կարևոր չէ թէ այդ բացատրութիւնը մէկ կամ աւելի բառերէ բաղկացած ըլլայ։

21) *Լեզուի ճոխությունը*։ — Ինչպէս որ լեզուի մը հարստութեամբ կը բնորոշենք անոր բառամթերքի հարստութիւնը, նոյնպէս լեզուի մը ճոխութեամբ կ'ականարկենք անոր քերականական ձևերու բազմազանութեանը։ Երբ կը բաղդատենք չինարէնի կառուցուածքը որեւէ կցական կամ թեքական լեզուի մը կառուցուածքին հետ անմիջապէս վերահասու կ'ըլլանք թէ չինարէնի մէջ ո՛չ հոլով գոյութիւն ունի և ո՛չ ալ խոնարհում, այլ պէտք է ուշադրութիւն դարձնել բառերու գիրքին, շեշտին և ձայնաստիճանին, իմաստը ճշգրտորէն երևան բերելու համար։ Արդարեւ, կը զգանք տարբերութիւնը ձևերով հարուստ և ձևազուրկ լեզուներու միջև։

Սանսկրիտերէնը շատ ճոխ լեզու մըն է և խոնարհման ընթացքին տասը ձևեր կը ստանայ. աւելի ճոխ է արաբերէնը՝ ուր բայը կրնայ մինչև տասըհինգ ձևեր ունենալ։ Յետափնաց կամ կրտավայրեանի ցեղերու լեզուները երբեմն աւելի ճոխ են բայի խոնարհման մէջ, իւրաքանչիւր գործողութեան համար ունենալով մասնաշատուկ ձևեր, նկատելով որ այդ արարքը բարձր է կամ դանդաղ, մէկ անգամ է կամ կրկնուող, ընդհատ կամ մշտական, մէկ կամ աւելի անձերու կողմէ կը կատարուի, պատահաբար թէ մասնաւորապէս։

ԱՆՈՒՇԱԻԱՆ ՎՐԴ. ԶԳԱՆԵԱՆ (Շարունակելի՜ 3)



## ԳԵԹՍԵՄԱՆԻԻ ՊԱՐՏԷԶ

## ՀԱՅՈՅ

Բ. — Գ Ի Ի Տ Ե Ր Ը (\*)

Բացուած երկու խրամները և Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ ընդհանուր յատակագիրը կ'երևի թիւ 1 պատկերին մէջ, երևան ելած հնագիտական մնացորդները երկու գլխաւոր մասերու կը բաժնուին. — ա) Հարաւային կողմը գտնուող սալքարերով յատակ մը և հարաւ ու հիւսիս զետնուող սոյն սալաշատակին մոզայիք շերտերը. բ) Սալաշատակին դէպի հիւսիս՝ արեւելքէն արեւմուտք երկարող և սալաշատակին զուգահեռ DE (\*\*), EF և FH սենեակներու շարք մը:


Սալաշատակին ամբողջ երկայնքը երեւան եկաւ գլխաւոր խրամին մէջ (պատկ. թիւ 2). իսկ անոր հարաւային եզիրքը՝ քոյնտի խրամին մէջ: Երկու մասերուն մէջ ալ անիկա կը քաղկանար մեծ կրաքար սալքարերէ, որոնք տաշուած էին աւելինէ անկիւն քաշուած զծերով: Քարերը լաւ գետեղուած էին, և սալաշատակը հիւսիսէն հարաւ թեթեւ կերպով դէպի վար հակած էր: Միաժամանակ, քաղցատելով հարաւէն երեցած երկու մասերուն մակարդակները, կ'երևի թէ արեւելքէն արեւմուտք՝ այսինքն դէպի իր ենթադրեալ կեդրոնն ալ թեթեւ կերպով հակած էր: Այս յատակին ներքե կար յատուկ շինուած ջուրի ճամբայ մը: Այս ջրանցքը ծածկող քարերը կը պակսէին, բայց անոնց շաղախը կը մնար: Անոնք վերցուած են հաւանաբար ասոր վերայէն անցնող հետագայ ջրանցքին (արդեօք թրքական) կառուցման տառն: Ինչպէս հետագայ ջրանցքին մէջէն՝ նոյնպէս ալ այս ջրանցքէն կ'անցնէր ձորին հեղեղը՝ այսինքն նախկին կեդրոնի գետակը:

Կեդրոնական սալաշատակը եզերուած

(\*) Շարունակութիւն թարգմանութեան՝ կատարուած The Quarterly of the Department of Antiquities in Palestine թերթի Vol. VIII. 10, 4, 1938 թիւէն:

(\*\*) Եւրոպական գիրքերով մատնանշուած տեղերը միշտ թիւ 1 պատկերին մէջ են:

էր մոզայիք սալաշատակով մը: Հարաւային կողմը անոր լայնքը անորոշ էր: Բմասին մէջ միայն քիչ մը մնացած էր անկէ, սալքարերուն անմիջապէս զիմացը (պատկեր 3). սկզբնապէս անիկա թերեւ կ'երկարէր դէպի հարաւ մինչև A պատը, որուն ընդերկրեայ ընթացքը գտնուեցաւ ծեփուած ջրանցքի մը հետ, որ պէտք է տարածուած ըլլար մոզայիքին եզիրքէն մինչև B պատը: Բոլոր մասերուն մոզայիքին



1. Ընդհանուր յատակագիր Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ եւ շրջակայից: Պատկերին ձախ կողմի մասը, ուրկէ կէ-կիսաւոր ուղիղ զիծը կ'անցնի, Հայոց Գերսեմանիի պարտէզին այն մասն է ուր ջրանցք մը բացաւ ընթացքին հնագիտական մնացորդներ գտնուելու:


քաղաղրութիւնը նոյնն էր: Մեծակ մոզայիք քարեր, մեծաւ մասամբ ճերմակ, բայց կային նաեւ կարմիր և սև, որոնք սակայն անարուեստ կերպով գետեղուած էին, և իրենց միջև կային ցանցաւ թիւով և անկանոն շարուած քով յատակի քարեր, որոնք հին երեսօղէմի համեստ շէնքերու շինութեան տառն կը գործածուէին սովորաբար: Առնուազն մէկ տեղ, CD անկղծ մասին մէջ, այս քարերը շիտակ զիծերով դրած



էին քարէ սալաշատակին առանցքին երկայնքին և լայնքին վրայ: Երեք մասերուն մէջ ալ, մողայլքները այնչափ նման էին իրարու որ շատ հաւանական կը թուի թէ բոլորը միասին մէկ շարունակական երկղ մը կը կազմեն ընդմիջուած միայն հոն ուր երկղը, ինչպէս LK մասին մէջ, քարածածկ ջրանցքին գծին կը հանդիպէր: Ի բաց առեալ այս և այլ հաւանական նման ընդմիջում մը, կարելի է երեւակայել որ մողայլք

վեր ի վերոյ կրամած յատակ մը, և կամ սալաշատակի մը աշկողինը (ենթախաւը) կը ներկայացնէր. բայց խրամին սահմանափակ միջոցին մէջ հազիւ թէ կարելի է որոշել թէ որն էր: Ե մասին մէջ անոր վրայէն կ'անցնէր ջրանցք մը՝ բաղկացած սովորական տեղական կաւէ խողովակներէ: Ջրանցքը զէպի արեւելք թեքուած էր այդ ուղղութեամբ հոսելու համար:

Բին և Դին միջև ուրիշ մողայլք յա-



2. Գերսեմանիի Հայոց պարտէզին մէջ բացուած խրամ-ջրանցք ուրիշ ննազիսական մնացորդներ մէջեղ ելան:

երկղը կը չըջապատէ քարէ սալաշատակի մը կամ բակի մը բոլոր չորս կողմերը:

Ասոր հիւսիսը Dին և Fին միջև որոշ մակարդակով յատակ մը չգտնուեցաւ. կիրի և հողի խառնուրդ մը կար, որ թերեւս

տակ մը երեսն եկաւ, որ բաղադրութեամբ նման էր այն մողայլքին՝ որ կ'եղերէր BC սալքարաւոր յատակին հիւսիսային և հարաւային կողմերը և գրեթէ նոյն մակարդակը ունէր: Ասիկա կը զաղրէր F խաչա-



ձև կտրող պատի մը ճիշդ անդին, բայց կարելի եղաւ իր հետքերը գտնել մինչև որոշ վերջաւորութիւն մը՝ H, ուր համապատասխան կտրող պատի մը հողին մէջէն երկարող քարերը թաղուած կը մնային խրամին երկու կողմերը։ Այս քարերուն երեսները կիրով ծեփուած և որմանկարով զարդարուած էին։ Գերակշիռ գոյնն էր՝ տժգոյն կանաչին վրայ գինիի անփայլ կարմիր։ առջևի յատակին վրայ նմանօրինակ



3. Հայոց Գեքսեմանիի պարտէզին ետքեւէն ելած ճին մոզայիկ յատակը։

քարի կտորներ և նոյն գոյնով, կամ հազուադէպօրէն՝ դեղին, թուխ և սև, որմանկարի բեկորներ գտնուեցան։ Այս H պատին և իր գիմացի F պատին մէջնակող կը գտնուէր կամարակալ-սիւնի խարխիւլը՝ G (պատկեր A)։

Ուրեմն, կ'երևի թէ սաղաքարաւոր յատակին և իր մօզայիք եզերքին հիւսիսը կային երեք զուգահեռ և յարակից սեն-

եակներ՝ DE, EF և FH լայնքերով։ Hէն անմիջապէս անդին այս տեսակ մնացորդներ չգտնուեցան, բացի երկրորդական չէնքէ մը, որ շինուած էր քիչ մը աւելի բարձր մակարդակի վրայ՝ որ կը տարածուէր կամարակալ-սիւնի խարխիւլին երկու կողմերը։


Առկէ անդին, թէև խրամը կը շարունակուէր միօրինակ մակարդակի վրայ, բայց ուրիշ հին մնացորդներ երևան չեկան բացի մօտ 60 մէթր գէպի հիւսիսային կողմը։ Այս տեղ մօտ 2 մէթր լայնքով կը հանդիպինք զանգուածեղ պատի մը, շինուած մանր քարերով. պատին երկու երեսներուն վրայ ևս կիրի ծեփի մնացորդներ կային։ Շուրջ 14 մէթր գէպի հիւսիս խրամը նմանօրինակ, բայց աւելի թեթև կառուցուած քով ուրիշ պատի մը մէջէն կը կտրէր կ'անցնէր. այս պատը միայն 60 սմ. լայնք ունէր։ Երկու պատերէն ալ 4 քարաշարքերէ աւելի չէ մնացած։ Երկու պատերուն միջև կը տարածուէր կիրի և մոխրի չաղախէ շինուած յատակ մը, որուն հիւսիսային կէսը լաւ ծեփուած մակերես մը ունի։ Յատակին մօտ՝ մէջտեղը քառակուսի փոս մը կար, 130 × 70 սմ., ուր կ'երևի թէ ձէթ հանելու կամ հացահատիկ կոտորելու ծանր մեքենայ մը կը գրուէր։

Aին և Hին միջև տարածուող տեղէն հանուած հողը կը բաղկանար մեծաւ մասամբ թուխ հողէ որ կը պարունակէր բոյսի արմատներ, ինչ որ ցոյց կուտայ որ ձորին այս մասը հիմակուան պէս կը մշակուէր։ Կամարակալ-սիւնի խարխիւլին երկու կողմերէն գտնուած բրդեղէնը, ապակին և գրամները ցոյց կուտան հողի աստիճանական կուտակումը հոն, զիստօրաբար թրքական շրջանին, և կամ հաւանաբար բարձրագիւր հողը բունող հին պատին աւերման պատճառաւ։ Էլուպեան եւ Մէմլուքեան շրջանի պատկանող իրեղէններու հետ թրքական շրջանին բացման յատուկ փոքր քանակով իրեղէններ գտնուեցան մօզայիք յատակին բաւական մօտ։ Ուրեմն վեցերորդ դարուն, Մէմլուքեան շրջանին աւարտէն առաջ, երկրորդական չէնքերը կա'մ տալաւին կը գործածուէին և կա'մ նոր աւարակուած էին, քանի որ Մէմլուքեան շրջանին վերջաւորութենէն առաջ շատ քիչ հողի կուտակում տեղի ունեցած է հոն։



կառ կազմած հողային այս նիւթերը հաւաքուած էին բնականաբար ձմեռուան հեղեղներէն: Սակայն այն երկու ապակիի փոքր կտորները, կապոյտ և ծիրանեգոյն, որոնք մոզայիք յատակին վրայէն գտնուեցան, կարելի է նկատել իբրև նմոյշներ ապակիի այն տեսակին՝ որ հաւանաբար գործածուած էր առաջուան շէնքին պատուհաններու ապակիներուն համար:

Զրանցքի հողին մէջէն գտնուած ճար-



4. Կամարակալ սիւնի խաբխա երեսն ելած Հայոց Գեղեթմանի պարտէզին յատակէն:

տարապետական նշանակութիւն ունեցող առարկաներու մէջ կար անկիւնի սիւնի մը գլուխը կակուզ կրաքարէ, որ հաւանաբար դրան մը կողքին բարձրացող սիւնի մը խոյանէ: Նոյն քարէ համապատասխան խարխա մըն ալ գտնուեցաւ նոյն տեղ: Թէև երկու կտորներն ալ կամարակալ-սիւնի խարխաին մօտ գտնուեցան, խրամին այս մասին մէջ այս տեսակ դուռի մը հետքը չկար: Բայց նոյն մասին մէջէն ուրիշ տեսակի երկու կտորներ ևս գտնուեցան, որոնք շատ հաւանաբար կը պատկանէին Գ կամարակալ-սիւնի խարխաին հետքին վրայ հաստատուած կամարներու զրուծեան: Այս

կտորներն էին կտրուած կամարապորտ մը որ հաւանաբար կը պատկանէր բազաղերալ կամարներէն մէկուն: Իսկ երկրորդ կտորն էր ճերմակ փաշլուն մարմարէ պատի սիւնաղլուխի մը խոյզը, որ դարձեալ ենթադրաբար կը պատկանէր պատի կամ անկիւնի կամարներէն մէկուն: (Նոյն տեսակի ոչ տեղական մարմարէն կարելի է տեսնել այժմու Ս. Աստուածածնայ Տաճարի գետնադամբան առաջնորդող խաչակրակերտ դռանցքին կամարակալներուն և սիւնաղլուխներուն մէջ): Բին և Կին միջև գտնուող երկրորդական շէնքին մնացորդները թերևս իրենց մէջ սկզբնական շէնքէն մնացորդներ կը պարունակեն: Բայց կը թուի թէ սկզբնական շինութիւնը ամբողջովին աւերուելով գետնին հաւասարած է:

Աւելի հին շէնքի մը մնացորդներուն հանդիպեցանք խրամներու հարաւային ծայրը, որոնք գլխաւորաբար մոզայիք յատակներու մասեր էին: Հոն ուր վրայի մոզայիքը աւերուած էր Աին և Բին միջև, 20 սմ. խորութեան մէջ ճերմակ մոզայիք սալաշատակի պղտիկ կտոր մը գտնուեցաւ, և երբ վրայի վերջին քանի մը մէթր մոզայիք սալաշատակը վերցուեցաւ, Մին և Կին միջև նոյն խորութեան մէջ երկու նմանօրինակ յատակներ գտնուեցան, Կ մասին մէջ թաղուած կտրող-անցնող պատի մը երկու կողմերէն: Այս խաչաձև կտրող պատը յատակադժով ճիշդ նման է այն պատին որ գէպի արեւելք, Ա մասին մէջ գտնուող, վերի սալաշատակին հարաւային կողմը սահմանադժած պէտք է ըլլայ: և Կ մասին մէջ հիւսիսէն, ջրուղի մը շինուած էր որ յայտնապէս շարունակութիւնն էր Ա մասին մէջ արդէն նկատուած ջրուղին, և որ վերի սալաշատակին մակարդակէն վար կ'իջնար միանալու համար քակին տակի գլխաւոր ջրուղին՝ որ Լին մօտէն կ'անցնէր: Հակադրաբար վերի մոզայիք սալաշատակները բազկացած էին բոլորովին կանոնաւոր կերպով շարուած և միօրինակ չափով մոզայիքի քարերէ, որոնք զետեղուած էին յատակին մէջ անկիւնէ անկիւն և, Կ մասին մէջ գտնուող կտրող-անցնող պա-



## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն թուականի Նոյեմբերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում աւարտուեցին հետեւեալ շինարարական աշխատանքները:

1. — Աւարտուեց Մայր Տաճարի նոր Աւագ Սեղանի կառուցումը: Ս. Սեղանը կառուցուած է «Ռոզ դե Պորդոգալո» իտալական մարմարով, նարտարապետ Ռաֆայէ Խարայէլեանի նախագծով եւ քանդակագործ Արա Յարութիւնեանի գործակցութեամբ:

Սուրբ Սեղանը քանդակազարդուած է զուտ հայկական ոճով: Ներքեւում, Սեղանի երկու անկիւններում, քանդակուած են թեւատարած արծիւներ, Ջուարթնոցի արծիւների նման: Ս. Սեղանի բեմը եւ աստիճանները պատուած են հայկական մարմարով:

Պատրաստ է նաեւ Միլանաքնակ յայտնի նկարիչ Գրիգոր Շիլթեանի կողմից գծուած Տիրամօր նկարը, որ օրերս կը ստացուի Մայր Աթոռ, զետեղելու համար նորակառոյց Սեղանի վրայ:

2. — Մայր Տաճարի Աւագ Սեղանի տակ, Ե.րդ դարու Ս. Սեղանի եւ հեթանոսական կրակարանի դիտման համար թողնուած զետնայարկը ամբողջապէս բարեկարգուած է եւ թանգարանի կողմից բացուած է յատուկ մուտք, ործաքարէ աստիճաններով:

3. — 1921 թուին երկրաշարժից փլած հարաւային գմբէթի տեղ կառուցուած է նոր գմբէթ, յար եւ նմանը հինին, նոյն տուփ քարից եւ ամբողջովին քանդակազարդ: Հարաւային գմբէթի կառուցման աշխատանքները կատարուեցին Հայաստանի հնութիւնների պահպանութեան կոմիտէի շինարարների կողմից, բարձր որակով:

4. — Ս. Էջմիածնի հիւսիսային պարսպի մէջ, նախկին Սինոդի շէնքի մօտ, կառուցուեց 17 մէթր բարձրութեամբ աշտարակ, որը եւ միաժամանակ պիտի ծառայի իբրեւ Հայրապետական շքամուտք: Գմբէթակիր աշտարակի վրայ զետեղուեց Պուլկարահայ գաղութի նուէրը հանդիսացող մեծ ժամացոյցը:

12 Նոյեմբեր 1959 թ.

Ս. Էջմիածին

(Կնիք Դիւանատան)

ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

տին հիւսիսային կողմին զպէտք յատակին պարագային, եղբրուած էին նմանօրինակ մոզայիքի քարերու կրկնադծով, որոնք զետեղուած էին պատին մակերեսի երկայնքին:

Վարի այս յատակներուն բաղդատմամբ վերի սալաշատակը անձաշակ գործ մըն էր, բայց ասոր պարունակած մոզայիքի քարերուն մեծութիւնն ու նիւթը այնչափ նման էին վարի յատակներուն պարունակածին որ կասկած չկար որ վերի սալաշատակը շինողները օգտագործած պէտք է ըլլան վարի յատակներու նման՝ յատակներու մոզայիքի քարերը իրենց նոր յատակներու շինութեան ընթացքին: Եթէ այս հետեւութիւնը ճիշդ է, շինողները իրենց մոզայիքի քարերը առած պէտք է ըլլան բուական

ընդարձակ տարածութիւն ունեցող շարք մը յատակներէ՝ դատելով իրենց գործածած նիւթին քանակէն, ոչ միայն ABէն, CDէն, LKէն և այլ տեղերէ, այլ կը թուի նաեւ BCի խորութիւնը ունեցող ընդարձակ բակի մը շուրջէն: Նմանապէս, քարէ սալաշատակը շինած ատենին կանխագոյն թուականի մը պատկանող արձանագրութիւն կրող տապանաքար մը գործածած են: Ասիկա կարծի կրաքարի մեծ ու կոշտ կերպով կոփուած կտոր մըն էր, որ անյարմար էր այն փոսին համար ուր տեղաւորուած էր: Երբ վերցուցաւ, տեսնուեցաւ որ զրեթէ ուղղակի կը հանդէսէր վարի անեղծ մոզայիքին մէկ մասին վրայ կը թուի թէ այդ մոզայիքը պահպանելու համար հոն դրուած էր:

(Ճարուակելի)

Թրգմ. Լ. Ա. Ա.



## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

## ԶԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

## ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՂԱԶԱՐԵԱՆ

ԺԵ. դարէն եւք, Ասիոյ չափ մը նշա-  
նաւոր քաղաքներուն մէջ Հայեր հաստա-  
ռւած են և գրադած՝ վաճառակ նութեամբ:  
Անոնք իրենց նաւերով Հնդկաստանէն մինչ և  
Բրմաստան, Մալայիստան, Չինաստան և  
Փիլիպիններ ուղևորած են առե-  
տուր ընելու համար:

Կը թուի թէ ԺԴ. դարու սկիզբը, Չի-  
նաստանի Չուանչու(1) քաղաքին մէջ Հա-  
յեր կ'ապրէին: Հոս, 1313ին՝ մեծահարուստ  
Հայ տիկին մը կը կառուցանէ փառաւոր  
եկեղեցի մը և կը նուիրէ Կաթողիկ Արքե-  
պիսկոպոսին՝ որ դայն յետոյ իրրեւ Մայր  
Տաճար կը գործածէ: Հայ տիկինը եկեղե-  
ցիէն զատ երկրատուն ալ շինել կուտայ և  
նայնիսկ եկեղեցականներու կեանքի ապա-  
հովութեան համար ալ կարգադրութիւններ  
կ'ընէ(2):

Հետագային, հարաւային Չինաստանի  
վաճառաշահ քաղաքներէն Կանտոն, Մա-  
քաւ և Հոնկ Բոնկ յաճախ Հայ վաճառա-  
կաններ և նաւագետներ կուգան առեւտուրի  
համար, մանաւանդ երբ 1688ին Հայեր  
Արևելեան Հնդկաց Ընկերութենէն մասնա-  
ւոր առանձնաշնորհում կ'առնեն արևելեան  
բոլոր երկրները ճամբորդելու և վաճառա-  
կանութիւն ընելու: Համաձայն The Chro-  
nicle of the East India Company Trading  
to China (1635-1824)ի, երբ 1722ին վեց  
բռնատար նաւեր կը մեկնին Հնդկաստան՝  
անոնցմէ մէկուն վրայ Հայկական դրօշակ  
կը ծածանէր(3): Նոյն ժամանակագիրը(4) կը  
վկայէ նաև որ Կանտոնի մէջ մէկ Անգլիա-  
կան և մէկ Դանիական վաճառական եղած

են և «երեսունի մօտ հայեր» կանտոնի  
առեւտուրը տեղի կ'ունենար զլիսաւորաբար  
ձմրան եղանակին, իսկ Մաքաւ՝ ամրան.  
այնպէս որ Հայ վաճառականներ զօրծի բե-  
րումով Մաքաւ ևս բնակած ըլլալու են:  
ԺԸ. դարուն, Չինաստանի Սինխեյ քաղաքն  
ալ Հայ առեւտրականներ եղած են(5):

Մաքաւ, իր երբեմնի վաճառաշահ կեղ-  
րոնէն զատ, մեզի համար ուշագրաւ է  
անով որ հոն ծնած է Կովհանէս Ղազար-  
եան հայը՝ որ առաջին անգամ ըլլալով  
սկսած է Աստուածաշունչը Հայերէնէ Չի-  
նարէնի թարգմանել:

Մաքաւ կը բաղկանայ թերակղզիէ մը  
և երկու կղզեակներէ. իր ամբողջ տարա-  
ծութիւնն է հինգ քառակուսի մղոն: Թե-  
րակղզին վրայ կառուցուած է Մաքաւ  
սիրուն քաղաքը: ԺԶ. դարուն, Փորթու-  
կալցիներ հոս կուգան և Մաքաւն ու իր  
մերձակայքը կ'ազատեն Չինացի ծովահէն-  
ներէն՝ որոնք այդ վայրերուն փորձանք  
եղեր էին: Ծովահէններուն վրայ իրենց  
տնրած յաղթութեան փոխարէն, Չինաս-  
տանի կայսրը կը բարեհաճի անոնց շնորհել  
Մաքաւը՝ որ 1557էն ի վեր իրրեւ Փորթու-  
կալեան գաղութ. Ծայրագոյն Արևելքի  
նշանաւոր նաւահանգիստներէն մին կը հան-  
գիստնայ, իսկ ԺԸ. դարուն՝ Եւրոպայի և  
Չինաստանի միջև եղած առեւտուրի զլիսա-  
ւոր կեդրոնը: Ահա այս չրջանին է որ Հայ  
վաճառականներ, մասնաւորաբար Մատ-  
րասէն, հոն հաստատուած ըլլալու են:

Յովհ. Ղազարեան ծնած է 1778ին(6).  
որդին էր հարուստ Հայ վաճառականի մը.  
փոքր տարիքէն իսկ մասնաւոր ընդունա-  
կութիւն ունեցած է Չինարէն սորվելու.  
այս բանին սատարած ըլլալու են տան եր-  
կու քրիստոնեայ Չինացի ծառաները՝ ու-  
րոնցմէ ան Չինարէն խօսիլ սորված է: Տասը  
տարեկանին՝ ծնողքը զինք Կանտոն կը զրկէ  
Չինարէն ուսանելու: Եօթը տարի նախա-  
նախնայի և կարող դաստիարակի մը կ'ա-  
շակերտի ու կը տիրանայ Չինարէնի: Ապա  
Փորթուկալցի վաճառականի մը պաշտօնա-  
կան նամակագիրը կ'ըլլայ:

1802ին, երբ 24 տարեկան էր, Ղա-

(1) Նաւահանգիստ Հոնկ Բոնկի հիւսիսային  
կողմը՝ Զորմոզայի զիմաց:

(2) Christians in China before the year 1550, by  
A. C. Moule, London, S. P. C. K., 1920, էջ 191  
- 192 և 209:

(3) H. B. Morse, Հատոր Ա., էջ 174:

(4) Նոյն, Հատոր Բ., էջ 84 - 85:

(5) Պատմութիւն Հայոց, Հ. Եփրեմ Զաքըճ-  
եան, էջ 452:



զարեան Մաքաւէն կալկաթա կը մեկնի թէյի վաճառականութեամբ զբաղելու: Հոն Անգլիական պետութիւնը Չինարէնի թարգմանչի պաշտօնը կը յանձնէ իրեն: Կալկաթայի մէջ ան կը ծանօթանայ Մկրտչական միախոնարհներուն՝ որոնք տարիներէ ի վեր շատ ջանք կը թափէին իրենցմէ քանի մը հոգի Չինաստան զրկելու՝ որպէսզի սորվէին Չինարէն, Աստուածաշունչը թարգմանէին և Չինացիներու մէջ քրիստոնէութիւնը քարոզէին: Երբ Մկրտչականներ կը տեսնեն որ Ղազարեան շատ յաջողօրէն կը խօսի, կը կարգայ և կը գրէ Հայերէն, Փորթուկալերէն և Չինարէն, կ'առաջարկեն իրեն որ Աստուածաշունչը Հայերէնէ Չինարէնի թարգմանէ: Ղազարեան սիրով կ'ընդունի պաշտօնը և գործի կը ձեռնարկէ: Այդ ժամանակ, Մկրտչական միախոնարհներուն կեդրոնն էր Սիրամփուր քաղաքը — Կալկաթայէն 13 մղոն հեռու — ուր ունէին յատուկ Հրատարակչական Տուն<sup>(6)</sup>: Ղազարեան Սիրամփուր կը զրկուի գործը շարունակելու համար. հոն գտնուող միախոնարհներէն ջերմօրէն կ'ընդունուի որովհետեւ անոր մէջ կը տեսնեն ռեկզէն պատեհութիւն մը Չինարէն սորվելու և ապա երթալու Չինաստան՝ իրեն յոռաջընթաց դահլիճները Չինարէն Աստուածաշունչով քրիստոնէութիւնը քարոզելու Չինացիներուն: Այս էր պատճառը որ Ղազարեանի պաշտօնը անոնք կ'ըսէին. «Չինաստան Սիրամփուր եկաւ, փոխանակ Սիրամփուր Չինաստան երթալու»<sup>(7)</sup>:

Յովհ. Ղազարեան 1805ի Մարտին արգէն Նինդոց Գիրքը և Մատթէոսի Աւետարանը Չինարէնի թարգմանած էր՝ որոնցմէ քանի մը գլուխներ ալ տպագրուած են: Դժբախտաբար իր մասին աւելի տեղեկութիւն չունինք: Կը կարծուի որ վախճանած է 1806ին: Կ'արժէ հոս յիշել որ Robert Morrison Անգլիացին, Ղազարեանի Ս. Գրոց մասնակի թարգմանութենէն 14 տարի ետք միայն, 1819ին, կատարեց Աստուածաշունչի ամբողջական թարգմանութիւնը:

(6) Սիրամփուրի մէջ էր որ Հայերէն (գրաբար) լեզուով Աստուածաշունչը տպագրուեցաւ 1817ին:

(7) Հմմտ. William Carey, D. D. Fellow of Linnaean Society, by S. Pearce Carey, M. A. London, 1926. Chinese Repository, Հտր. Դ., 1835, Թիւ 6:

\*\*\*

1957 Դեկտ. 22ին Հօնկ Բօնկէն շոգե-նաւով մեկնեցայ Մաքաւ՝ ուր հասայ յաջորդ առաւօտ: Հոս ապրող Հայերէն միայն մէկ յիշատակարան մնացած է. Հայ Տիկնոջ մը տապանագրութիւնն է ան, Բողոքականաց գերեզմանատան մէջ: Փոքր բայց սիրուն հանգստարանի մուտքին, զիմացոյ, անմիջապէս նշմարեցի Հայ Տիկնոջ՝ Դշխուհին զամբանը. բնօրինակեցի տապանագիրը. — «Դառնազին արտասուօք անմիջապէս ամուսնոյն և որդւոցն եղաւ աստ մահկանացու մարմինն Տիկին Դշխոյ Աէթին, զտեղի հանգուցեալ Յարութիւն Յ. Մարութին: Պակասեալ ի կենացս ի հասակի 43 ամաց և 3 ամսոց ի Մաքաւ ձեռնաստան ի 15 Յուլիսի յամի Տեառն 1857»:

Իսկ Անգլիէն տապանագրութիւնը սա է. —

To the grief of the disconsolate husband and sons, here lieth the mortal remains of Mrs. Dishkhoone Seth, daughter of the late Arathoon J. Maroothe, who departed this life on the 15th July 1857 at Macao in China. Aged 43 years and 3 months.

«For as in Adam all die, ever so in Christ shall all be made alive». 1 Cor. XV. 22.

Ու այս անտէրունջ Հայ մօր գերեզմանին վրայ, աշխարհի ամենէն հեռուօր մէկ անկիւնը, ուր ո՞վ գիտէ երբ անգամ մըն ալ Հայ եկեղեցական մը կուգայ ի խնդիր Հայ բեկորներու՝ անոր հողակոյտին վերեւ ազօթք մը արտասանելու, ևս ալ «Դառնազին» հոգեհանգստեան պաշտօն կատարեցի . . . :

ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ





## ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

### ԱՄԵՆ. Ս. ՅՈՐԲԵԼԵԱՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆ ՈՒ ՊԱՏԳԱՄԸ(\*)

«Ի հարկէ պիտի չզարմանաք եթէ ըսեմ թէ յուզուած եմ խորապէս . . . և աւելի պիտի ընտրէի լռել ու խոկալ քան թէ խօսիլ: Բայց որովհետեւ կը վախնամ կուռք մը ըլլալէ, պէտք է որ շրթունքներս շարժին:

Իմ յիսնամեայ քաղաքացիական Յոյժականն է միայն որ կը կատարուի այսօր. և եթէ ուրիշներ տարբեր արժանիքներ ալ տեսան անձիս վրայ, ա՛յդ իմ ուզածս չէր: Ես հաւանեցայ այս հանդիսաւորութեան ո՛չ թէ ինքզինքս փառաւորելու՝ այլ, միջնորդաբար, առիթ մը ընծայած ըլլալու համար ամէն անոնց որոնք կը սիրեն իրենց Եկեղեցին և նախանձախնդիր են պատուելու անոր մէկ պաշտօնեան՝ որ իր պա՛րտքը կատարած է լոկ: Դիտեմ թէ Հայ Եկեղեցիին համար կարևոր ծառայութիւններով ապրող մարդեր չեն պակսիր մեր մէջ, թէև չեն ունեցած Յորբելանի մը արժանանալու բախտը: Տարիներու որոշ թիւի մը հետ կապ չունի այդ փառաւորումը. ծառայութեան արժէքին մէջ կը կայանայ վարձքը: Ես այդ բախտաւորութիւնը ունենալով այս պահուս՝ չեմ նկատեր սակայն թէ ինծի ուղղուած ըլլան ժողովրդային համակրանքի այս բոլոր ցոյցերը՝ ծափ ու գովեստ, այլ այդ ամէնը կ'ուղերձուին Հայ Եկեղեցիին՝ որ ամենուս մայրն է եղած, որ իր կաթը խմցուցած է մեզի ու պահած է մեր գոյութիւնը: Անո՛ր կը պարտիմ իմ արժանիքս, եթէ ունիմ, և վարդապետական կամ վարժապետական պաշտօնիս մեծ մասը անով է արգիւնաւորուած:

Հոս իմ կեանքս չէ որ պիտի վերլուծեմ ձեզի. արդէն այդ մասին խօսեցան իմ սրբազան եղբայրակիցներս և ուրիշ սիրելիներ՝ որոնք աշակերտած են ինծի, վերագրելով ինծի կարգ մը առաւելութիւն:

Ներ, ձեզի համար թերեւս պակաս, իսկ ինծի համար՝ միշտ աւելի: Այնուամենայնիւ շնորհակալ եմ, վստահ ըլլալով իրենց զգացումներուն անկեղծութեանը:

Ուրախ եմ նաև որ զրական արտագրութեան տեսակէտով ինձմէ գոգոհ մնացողներն անգամ չեն զլանար իրենց մեծարանքը քաղաքացիական Յորբելանիս առթիւ, խորհելով որ զպատուարած եմ այն Եկեղեցիին՝ որոնց հարազատ զաւակներն ըլլալու պարծանքէն չեն հրաժարիր երբեք, և անո՛ր կ'ընծայեն ինծի տրուած այս պատիւը: Ուրիշ հայ կեդրոններու մէջ ալ մերիկին նման հանդէսներ տեղի կ'ունենան այսօր. ու կը զգամ որ անոնց ամէնուն մէջ իմ կեանքէս չունչ մը կ'ապրի, ու կը փառաւորուի Հայոց Եկեղեցին: Երախտապարտ զգացումներով կ'օրհնեմ այդ խանդավառ հոգիներուն սրտազին արտայայտութիւնները: Կ'օրհնեմ նաև զձեզ՝ որ հոս կը գտնուիք իբրև հանդիսականներ: Եւ երբ շնորհակալ կ'ըլլամ Աստուծոյ՝ որ իր քաղցրութեամբ օրհնեց պսակը յիսուն տարիներու ծառայութեանս այն Եկեղեցիին մէջ՝ որուն պաշտօնեան ըլլալէ շատ առաջ զաւակն էի և եմ, չեմ ուզեր ետ նայիլ, չափելու համար այդ երկայն ասպարէզը, այլ ձեռքս աշխատանքի մածին վրայ է տակաւին, և պիտի ջանամ հերկել նոյն նուիրական հողը՝ որչափ նախախնամութիւնը կեանք տայ ինծի: Իմ տկար ուժերս պիտի պահեմ Հայ Եկեղեցիին համար, երբեմնի ծիրանագեղատ այն Դշխոյին՝ որ հիմա ցընցոտիներ է հագած: Ան կը սպասէ իր բոլոր զաւակներէն հաւատքի և անձնուրացութեան փոխարինութիւն մը: Սիրեցէք զայն, սրբուեցէք անով, ու անոր մեծութեան գանձերուն մէջ պիտի գտնէք ձեր հոգեկան հարստութիւնը, պատրաստ ըլլալով, եթէ հարկ ըլլայ, պատուելու ձեր պատմութեանները ու անոնց լաւագոյն կտորներովը վերստին հաղուեցնելու և զարգարելու բովանդակ հայութեան այդ սգաւոր ու դժբախտ Մայրը:

Ու Աստուծոյ պիտի օրհնէ ամէնքս ալ:

(Սիոն, 1929 Հոկտ. - Դեկտ., էջ 329 - 330):

(\*) Դուբեան եղիւ: Պատիւարի խոսքը իր քաղաքացիական Յիսուսայ Յորբելանին առթիւ:



## ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒՆԵՐ

Շնորհակալությամբ եւ օրհնությամբ կ'արձանագրենք 1959 թուոյ ընթացիկն Ս. Յակոբեանց Մայր Տոնարին եւ այլ Սրբազայրեւո տուած հետեւեալ բարեպաշտական նուէրներ:

1. — Երուսաղէմէն Տիկ. Նեկտար Շէօնէլեան, մէկ ներմակ սեղանի ծածկոց Ս. Յակոբայ Աւագ Սեղանին համար:
2. — Երուսաղէմէն Օր. Զապէլ Նիկողոս Պ. տէփեան, մէկ նուրբ կարմիր բանուած շղարշ կենաց Փայտի համար:
3. — Կալկաթայէն Տէր. Ե. Տիկ. Ստեփանոս, երկու սեղանի ձեռագործ ծածկոց, մին Ս. Գերեզմանի եւ միւր Աստուածամոր գերեզմանի համար: Մետաքս կտոր մը թռչնազարդ եւ ծաղկազարդ Աւետարանի բռնիչ մը եւ անուշ խուսկ, եւ վարագոյրցու սե բանուած կտոր:
4. — Երուսաղէմէն Տիկ. Ուսաննա Վարդերեսեան, ձեռագործ կորբուրայ մը Ս. Յակոբայ:
5. — Երուսաղէմէն Թումարզայի Տիկ. Աննա Պարսամեան, մէկ վարագոյր Ս. Յակոբայ:
6. — Պէյրուսէն Տիկ. Վերթորիա Միսիրեան, բարակ ոսկի ապարանջան Ս. Աստուածածնայ պատկերին:
7. — Պէյրուսէն ձէպէլ Մուսայի Տիկին Վարդուհի Քիւրտեան, գորգ մը Ս. Գերեզմանին:
8. — Հալէպէն Մարի Քեչեճեան, նայլոն կտորի վրայ ձեռագործ ներմակ սկիւնի ծածկոց մը եւ երկու ձեռաց խաչի բռնիչներ:
9. — Տիկին Խաչատուրեան, զոյգ մը թաւշեայ վարագոյրներ Ս. Յակոբայ Տաճարի դասի սրահներու վրայ գտնուող Աստուածամոր նկարներուն համար:
10. — Պէյրուսէն Տիկին Մարիամ Զաքմագնեան, փուլի գործ կարմիր Աւետարանի բռնիչ մը Ս. Յակոբայ:
11. — Պէյրուսէն Տիկին Մարի Եօզղաթեան, Աւետարանի եւ խաչի բռնիչ Ս. Յակոբայ:
12. — Պոլսէն Տիւր Լմայեակ Էօզշահին, մէկ սեղանի ծածկոց արծաթաթել Ս. Յակոբայ Աւագ Սեղանին, եւ մէկ անձեռոց պատարագչի:
13. — Դամասկոսէն Զարուհի Կրճըրեան, մէկ մասի ծածկոց Ս. Յակոբայ:
14. — Պէյրուսէն Եղիսաբեթ Մաթոսեան, մէկ ձեռագործ ներմակ մասի ծածկոց:
15. — Պէյրուսէն Նուէր Արարկիրեան, մէկ կանաչ Աւետարանի բռնիչ Ս. Յակոբայ:
16. — Պէյրուսէն Տիւր Յովհաննէս Մոսկոֆեան, զոյգ մը պատարագչի հողաթափ յուլունքազարդ:
17. — Պէյրուսէն Օր. Ուսաննա Կիւլիքճեան, մէկ փոքր ոսկէ սրտ եւ մէկ փոքր խաչ Աստուածամոր նկարին համար ի Ս. Յակոբ:
18. — Հալէպէն Տիկ. Աղաւնի Պալըզեան, ձեռագործ մասի ծածկոց մը Ս. Գերեզմանին:
19. — Նիկոսիայէն Օրիորդ Պայծառ Արազինեան, երկու արծաթեայ կանթեղ Ս. Փրկչին:
20. — Թրիբուլէն Արշալոյս Մոսկոֆեան, մասի ծածկոց մը Ս. Յակոբայ:
21. — Ամմանէն Տիկ. Մարի Կոչկակարեան, ձեռագործ խաչի բռնիչ մը Ս. Յակոբայ:
22. — Հալէպէն Տիկ. Մարի Պուրուսուզեան, մէկ ոսկի մատանի Աստուածամոր նկարին ու ի սեան Ս. Յակոբայ:
23. — Երուսաղէմէն Տիւր Դանիէլ Մարգարեան, 21 աշտանակի մետաղեայ ընկալուչներ Ս. Յակոբայ Տաճարին, եւ 8 հատ ալ՝ Համբարձման մատրան աշտանակներու համար:
24. — Ամմանէն Տիկին Լափիսիմէ Պալեան, սկիւնի ծածկոց մը Ս. Յակոբայ:
25. — Քուէյթէն Օր. Մարի Պուրուսեան, երկու մետաղեայ ծաղկամաններ Ս. Գլխադրի:
26. — Երուսաղէմէն Քոյր Վարդանուշ Պարոնեան, մէկ ներմակ ձաշու գրակալի ծածկոց:
27. — Երուսաղէմէն Տիկ. Զապէլ Օհանեան, ձաշու գրակալի փուլազարդ ներմակ շապիկ մը Ս. Յակոբայ:
28. — Տեսինէն Տիկին Մարիամ Վարդպետեան (Ս. Յինցի), ձեռագործ խաչելութեան սեղանի ծածկոց մը Ս. Յարութեան:
29. — Տեսինէն Տիկին Սաթեմիկ Դասկարեան (Պուսուցի), ասեղնագործ ներմակ կլոր խաչի բռնիչ մը:
30. — Երուսաղէմէն Տիկին Մարի Յակոբեան, ձեռագործ սեղանի ծածկոց մը Ս. Աստուածածնայ Տաճարին:
31. — Երուսաղէմէն Քոյր Վարդանուշ Պարոնեան, Ս. Սեղանի ներմակ ձեռագործ ծածկոց մը Ս. Յարութեան Տաճարին. — ձերմակ ձեռագործ Ս. Սեղանի ծածկոց մը Ս. Յարութեան Տաճարի Երչակաւոր Ս. Աստուածածնի խորանին համար:
32. — Բեթղէմէն Օր. Գերեզմանի Խեղէնտէրեան, ոսկի ականազարդ մատանի մը Ս. Աստուածածնայ նկարին:
33. — Երուսաղէմէն Տիկին Մարի Գէորգեան, արծաթ մարդանկար մը Ս. Աստուածածնայ նկարին, իր ամուսնոյն յաջող գործողութեան առթիւ:
34. — Պէյրուսէն Տիկ. Շաքէ Մարտիրոսեան, ոսկի փոքրիկ արգազիր նուէր մը Ս. Աստուածածնայ նկարին:
35. — Երուսաղէմէն Անժէլ Պալապանեան, սեղանի ձեռագործ ծածկոց մը Ս. Աստուածածնայ Տաճարին:
36. — Երուսաղէմէն Քոյր Վարդանուշ Պարոնեան, ձաշու գրքի գրակալի շապիկ մը Ս. Աստուածածնայ եկեղեցիին:
37. — Մարի Վարձպետ, Ս. Սեղանի երկու



## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Դեկտ. 28-ին, Վեհափառ Թագաւորի արտասահմանէն վերադարձին առփու, Ս. Արուստայ Բնդի. Գործոց Վարիչ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. հետեւեալ խնդակցութեան հեռագիրը տուաւ :—

«Յանուն իմ, եւ յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանու Հայոց. եկեղեցւոյ եւ Հայ համայնքի գաւակներուն, կը շնորհաւորեմ Ձերդ Վեհափառութիւնը ի Յորդանան Ձեր ապանով վերադարձին առիթով, եւ կը հայցեմ Ամենակալ Աստուծով պահել Ձերդ Վեհափառութիւնը ազգին եւ հայրենիքին համար» :



Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., յանուն իրեն, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանու Հայ համայնքին շնորհաւորական հեռագիրներ ղրկեց հետեւեալ պէտական բարձրասիւնեան անձանց, անոնց ասիւմանի բարձրացման կամ պէտական յատուկ շնանշանով պատուումով բլլալուն առիթով :

Ն. Ա. Բ. Գանժաւանց իշխանին՝ անոր Զօրավարութեան ասիւմանի բարձրանալուն առիթով :

Ն. Բ. Շէրիմ Ապուլ Համիս Հայմակի, Ասդկարգի շնանշան ստանալուն առիթով :

Ն. Վ. Վարչապէս Հազա՝ Մանալիի, Ոսկիանութեան Բնդի. Պէտ Պաննաթ Թալիուկի, Ներքին Գործոց Նախարար Ուստէի Միրզայի, Երկրագործական Նա-

նարակ ծածկոցներ, մին Ս. Աստուածածնայ Տաճարին, միւսը՝ Ս. Յակոբայ համար :

38. — Երուսաղէմէն Տիկ. Զապէլ Երկաթեան, մէկ Աւագ Սեղանի ներմակ ձեռագործ ծածկոց :

39. — Երուսաղէմէն Տիկին Էլիզ Մամեան, մէկ ականազարդ ոսկի մատանի Գեղեցիկ Աստուածամօր նկարին :

40. — Կ. Պոլսէն Աննա Պենլիան, մէկ սեղանի ձեռագործ ծածկոց Ս. Գլխադրին :

41. — Աղեքսանդրիայէն Տիկ. Իւզաբեր Բամպուկեան, երկու դանդելա Ս. Սեղանի ծածկոց Ս. Գլխադրին :

42. — Աղեքսանդրիայէն Տիկ. Պրաթրիս Խուսկանեան, մէկ ասեղնագործ Ս. Սեղանի ծածկոց Ս. Գլխադրին :

43. — Երուսաղէմէն Տիկին Ուսաննա Վարդերեսեան, մէկ ձեռագործ կորուրայ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցիին :

Լուսաւարապէս Ս. Արուստայ  
ՇՆՈՐՀՔ ԵՊՍ. ԳԱՆՈՍԵԱՆ

խաւար Ագէմ Ֆայեզի, Ն. Վ. Սամիր Ռիմայիի Ներապոյի նախագահ նշանակումով բլլալուն առիթով, Հանրային Շինութեան Նախարար Եպուպ Մուամմարի, Հաղորդակցութեան եւ Արդարութեան Նախարար Անվար Նեւեիպիի՝ պէտական յատուկ շնանշաններով պատուումով բլլալուն առիթով :

Աստուծով ստացուեցան փոխադարձ շնորհակալութեան յատուկ հեռագիրներ :



### Ե Կ Ե Վ Ե Տ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Կիր. 1 Նոյեմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ուր քարոզեց Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, համառօտակի խօսելով մեղքերու տեսակներուն եւ անոնց իւրաքանչիւրին քանդիչ եւ ազականիչ յատկութիւններուն մասին :

● Բշ. 2 Նոյեմ. — Ս. Յովսէփայ Աստուածամօր տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեղեցիկանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ. Բոս սովորութեան, պատարագիչն էր Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան :

● Եր. 7 Նոյեմ. — Կէսօրէ վերջ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. զլիաւորութեամբ, Միաբանութիւնը «Հաշտաւառչով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար : Ս. Գերեզմանին եւ Գլխադրին ալի ալի ուխտերէն ետք, թափօրը բարձրացաւ վերջնայ կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի հայապատկան եկեղեցին՝ ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը : Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս : Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապուշեան :

● Կիր. 8 Նոյեմ. — Գլխադրին եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ ժամարան էր Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան : Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ, նախադաճութեամբ Գերշ. Տ. Սուրէն Սրբազանին՝ որ, ամպհովանիի ներքեւ, Կենաց Փայտի ճանաչագեղ մատուցն ի ձեռին, կ'օրհնէր Տաճարը խոնուած հոծ բազմութիւնն ու Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի երկսեռ աշակերտութիւնը : Ս. Գերեզմանի դրան երգուեցան «Տէր ողորմա» եւ «Թաշի քո Քրիստոս» : Թափօրը վերջացաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ՝ երբ գրեթէ կէսօր էր :

● Կիր. 15 Նոյեմ. — Ձեռնադրութիւն կուսակրօն Քահանայի (Տես էջ 283) :

● Ուր. 20 Նոյեմ. — Ս. Հրեշտակապետաց տօնին նախատօնակը պաշտուեցաւ համանուն եկեղեցւոյ մէջ : Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. : Նախատօնակն ետք կատարուե-



ցաւ Դպրութեան չորս աստիճաններու տընդութիւն ժառնգ. վարժարանի Բ և Գ դասարաններու ութ սաներուն, որոնք ցարդ չէին ստացած այդ աստիճանները:

● Շր. 21 Նոյեմ. — Տօն Ս. Էրեսակապետաց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտօնեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Լրեշտակապետաց եկեղեցոյ մէջ: Ժամարան էր Լոզը. Տ. Լայկասեր վրդ.: Ս. Պատարագէն ետք, ըստ ընկալիւ սոփորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյ Բարեբարունի Աղանի ձէվանիւրնանի և իր ընտանեկան պարագաներու հոգիներուն համար: Ապա Միաբանութիւնը պատուասիրուեցաւ վանուց Տեսարանին մէջ՝ առժմ. Տեսուչ Լոզը. Տ. Անուշաւան վրդ. Զղջանեանի կողմէ:

● Կիր. 22 Նոյեմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարութիւն, մեր վերնամաստան մէջ, ուր քարոզեց Լոզը. Տ. Ներսէս վրդ., բնարան ունենալով օրուան ծառու Աւետարանէն Յիսուսի ժողովրդապետ Յայրօսի ուղղած խօսքը՝ «Մի՛ երկնէիք, բայց միայն հաւատա՛» (Մրկ. Ե. 36), ու խօսեցաւ հաւատքի քրիստոնեայան հատկեանքէն ներս ունեցած կենսական դերի մասին, յայտնելով նաև թէ հաւատքը պէտք է որ վերացական ինչ մը թուի անոր, այլ ներգործող ոյժ մը ու ապրուած իրողութիւն մը. անհաւատը չի կրնար հոգեկան խաղաղութեան տիրանալ ու քրիստոնէական համարութիւններուն մօտենալ:

● Կիր. 29 Նոյեմ. — Բարեկ. Յիսակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զակոր, ուր քարոզեց Լոզը. Տ. Վաղդէն վրդ., ծանրանալով Քրիստոսի այն խօսքին վրայ թէ «Որ ոչն է ընդ մեզ հակառակ, ի մեր կոյս է» (Մրկ. Թ., 39), ու յայտնելով թէ որքան ծանրակշիռ մեղք է արգելք հանդիսանալ այոյց բարի գործերուն:

● Եշ. 3 Դեկտ. — Ընծայման տօնի հանդիսաւոր նախատօնակը պաշտօնեցաւ ի Ս. Զակոր: Լանդիսապետն էր Դերը. Տ. Սուրէն Արքեպս.:

● Աւր. 4 Դեկտ. — Ընծայման Ս. Աստուածածին: Առաւօտուն, Դերը. Տ. Նորայր Եպս. ի զխաւորութեամբ, Միաբան Լայրեր իջան Գեթսեմանի ձորը ու քիչ ետք «Լրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար՝ ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Դերը. և աւուր պատշաճի քարոզ մը խօսեցաւ Դերը. Լանդիսապետ Սրբազանը, և Ս. Պատարագէն ետք նախագահեց Ս. Աթոռոյ և աղգիս բարեբար Կիւլլապի Կիւլլէնկեանի և իր համայն գերդաստանի ննջեցեւոյց հոգիներուն համար կատարուած տարեկան հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունքին:

● Կիր. 6 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարութիւն, մեր վերնամաստան մէջ, ուր քարոզեց Լոզը. Տ. Յովսէփ վրդ. Մամուր՝ բնարան ունենալով օրուան ծառու Աւետարանէն «Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ» (Ղկա., ԺԲ., 31), յայտնելով թէ բոլոր բարիքները կը կայանան այս խնդրանքին գոհացումին մէջ:

● Շր. 12 Դեկտ. — Ս. Թաղէսի եւ Բարդուղմէսի առաքելոց՝ առաջին Լուսաւորացն Լայց. Ս. Եկեղեցոյ: Երէկ՝ նախատօնակը պաշտուած էր ի Ս. Զակոր: Այսօր՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Պատարագը մատուց Նորընծայ Լոզը. Տ. Յուսիկ Արդ. Պաղտատեան:

● Կիր. 13 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զակոր, Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց Նորընծայ Տ. Յուսիկ Արեղայի ուսուցիչն ու վարժիչը՝ Լոզը. Տ. Դաւիթ Արեղայ Սահական: Քարոզեց Դերը. Տ. Շնորհք Եպս., նիւթ ունենալով օրուան ծառու Աւետարանէն թեալորուած ապաշխարութեան խորհուրդը: Ըսաւ թէ Յիսակի չըջանն ալ, Մեծ Պահոց օրերուն նման, պատեն առիթ մըն է ապաշխարանքի: Ս. Պատարագի արարողութիւնը, ժամ մը տեւողութեամբ, ծայրանկալուեցաւ Յորդանանի Ռատիօկայանէն:

● Եշ. 17 Դեկտ. — Ս. Լարցն Եկիպսացոց տօնին առթիւ. Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարան էր, ըստ սոփորութեան, Խոստովանահայր Լոզը. Տ. Մաշտոց վրդ. Բարիլուսեան:

● Կիր. 20 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարութիւն, մեր վերնամաստան մէջ: Պատարագեց Լայկայի Լոզեւոր Լովի Լոզը. Տ. Օհան Արդ. Գապագեան: Քարոզեց Դերը. Տ. Շնորհք Եպս., «Զի ոչ ոք յայնց կոչեցեալոց հաշակեցէ լընթրեաց իմոց» (Ղկա. ԺԲ. 24) բնարանով, մեկնարանելով օրուան ծառու Աւետարանէն Կոչմանէրի առակը, ու յայտնելով թէ նմանօրինակ կոչ մը ուղղուած է բոլորիս, բայց զանազան աշխարհիկ նկատմաներ պատճառ կ'ըլլան որ չընդառաջենք անոր ու զրկենք մենք զմեզ «երկնքի արքայութեան մէջ ճաշ ուտելու» երանութենէն:

● Բշ. 21 Դեկտ. — Յղութեան տօնի հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Զակոր: Լանդիսապետն էր Դերը. Տ. Շնորհք Եպս.:

● Գշ. 22 Դեկտ. — Յղութիւն Ս. Աստուածածին: Առաւօտուն, Դերը. Տ. Շնորհք Եպս. ի զխաւորութեամբ, Միաբան Լայրեր իջան Գեթսեմանի ձորը ու քիչ ետք «Լրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար՝ ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Դերը. Լանդիսապետ Սրբազանը:

● Շր. 26 Դեկտ. — Ս. Զակարայ Մըքնայ հայրապետի: Երէկ՝ նախատօնակը պաշտուած էր ի Ս. Զակոր: Այսօր՝ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Դիւղարի մատրան մէջ:

● Կիր. 27 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ, ուր քարոզեց Դերը. Տ. Նորայր Եպս., նիւթ ունենալով օրուան ծառու Աւետարանի ընթերցումը ու ծանրանալով «Մահայր անպիտանք եմք, զոր պարտէաք առնել՝ արարաք» խօսքին վրայ: Ըսաւ թէ բոլորս ալ ծառաներ ենք քրիստոնէական կրօնի տնտեսութեան մէջ, ու իբր այդ՝ մեզմէ կը սպասուի ըլլալ ծառանաբէր, խոնարհ ու հնազանդ. առաքինութիւններ՝ օրունք իրենց գերագոյն լրտմին հասան Քրիստոսի իսկ անմին վրայ:



## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ Ք

● Ուր. 30 Նոյեմ. — Առաւօտեան ժամը 10ին, Մէյճըր - Տէնէրալ Քարիմ Պէյ Օնան այցելեց Պատրիարքարան, ի փոխադարձութիւն Պատրիարքարանիս շնորհաւորութեան՝ իր աստիճանի բարձրացման առթիւ:

● Դշ. 3 Նոյեմ. — Առաւօտեան ժամը 10ին, Ն. Վ. Իրանի Շահի և Ն. Վ. Հիւսէյն Թագաւորի Ս. Քաղաքայայցելութեան բարերաստեղծութեամբ, քաղաքիս օդայանքները դիմաւորութեան զացին Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Գերշ. Տ. Շնորհք Եպս., ընկերակցութեամբ Աւագ-Թարգման Շոգշ. Տ. Վազգէն Վրդ. Գրգրաւանի:

— Նոյն առիթով, կէսօրեան ժամը 1ին, Քաղաքիս Վանք. Կառավարչի հրաւերին ընդառաջելով, Արաւսատոր պանդոկի մէջ տրուած մեծ ճաշկերոյթին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Գերշ. Տ. Շնորհք Եպս.:

— Նոյն առիթով, երեկոյեան, Ն. Վանք. Վարչապետին և իր տիկնոջ հրաւերին ընդառաջելով, Զարքայի սպայակոյտի ակումբին մէջ տրուած մեծ ընթերցման ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհանեան, ընկերակցութեամբ Շոգշ. Տ. Վազգէն Վրդ. և Ամանի Հայ Համալսարնի Հոփիս Շոգշ. Տ. Արիս Արեղայի:

● Դշ. 4 Նոյեմ. — Նոյն առիթով, առաւօտեան ժամը 10ին, Պաշտպանութեան նախարարի հրաւերին ընդառաջելով, իստուի մէջ կատարուած զինուորական մեծ տողանցքին ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ընկերակցութեամբ Շոգշ. Տ. Վազգէն Վրդ.:

— Նոյն առիթով, կէսօրէ վերջ ժամը 4ին, Զինուորական Ընդհանուր Հրամանատարի հրաւերին ընդառաջելով, Զինուորական Ապտալիէին մէջ տրուած թէյասեղանին ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ընկերակցութեամբ Շոգշ. Տ. Վազգէն Վրդ.:

Ն. Վեհ. Իրանի Շահի Զորդանան գտնուած բոլոր ժամանակամիջոցին, Վանքի աւագ դուռը զարդարուած էր զրօշակներով և ելեքտրական լոյսերով. իսկ Գեթանեանի դուռը մեր պարտեզի ճամբու երկայնքին զետեղուած էր յաղթական կամար մը՝ ի պատիւ Ն. Վ. Հիւսէյն Թագաւորին և Ն. Վ. Իրանի Շահին: Դշ. 3 Նոյեմ. ի կէսօրէ վերջ, Ս. Թարգմանչաց Վարժարանի երկուս աշակերտութիւնը յաղթական կամարին երկու կողմերը շարուած էին բարեկալուստ մաղթելու երկու մեծ Վեհապետներու:

● Շր. 14 Նոյեմ. — Կէսօրէ վերջ ժամը 4ին, Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի ծննդեան 25րդ տարեդարձի առիթով, Հարամ Շէրիֆի մեծաւորին կողմէ տրուած թէյասեղանին ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Շոգշ. Տ. Դաւիթ Արդ.:

● Կրի. 22 Նոյեմ. — Երեկոյեան, Լիբանանի անկախութեան 16րդ տարեդարձին առիթով, քաղաքիս Լիբանանեան Ընդհ. Հիւպատոսի և իր

տիկնոջ հրաւերին ընդառաջելով, Հիւպատոսարանի տան մէջ տարբուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., Շոգշ. Տ. Վազգէն Վրդ. և Տիար Կարպիս Հինդեան:

● Դշ. 24 Նոյեմ. — Իրիկուան ժամը 5ին, Կ. Պոլսոյ Գունաց Տիեզերական Պատրիարք Ամեն. Տ. Աթենակորասի Ս. Քաղաքայայցելութեան առիթով և քաղաքիս Գունաց Ամեն. Ս. Պատրիարքի հրաւերին ընդառաջելով, Գոյպէի դրան առջև, յանուն Պատրիարքարանիս, դիմաւորութեան զացին Գերշ. Տ. Շնորհք Եպս. և Շոգշ. Տ. Վազգէն Վրդ.՝ որոնք յետոյ ներկայ գտնուեցան Ս. Զարուքեան Տաճարին մէջ կատարուած Գոհարանահան Մաղթանքին և անոր յաջորդող Գունաց Պատրիարքարանի մէջ եղած հիւրասիրութեան:

● Դշ. 25 Նոյեմ. — Նոյն առիթով, Ս. Աթոռոյս Միարանութեան խումբ մը, զինուորութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.-ի, բարեկալուստի գնաց Գունաց Տիեզերական Պատրիարքին՝ Գունաց Պատրիարքարան:

● Ուր. 27 Նոյեմ. — Նոյն առիթով, քաղաքիս Գունաց Ս. Պատրիարքի հրաւերին ընդառաջելով, Համարձման լեռան իրենց Գալիլիոյ վանքին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., Շոգշ. Տ. Տ. Հայկասեր և Վազգէն Վրդ.ներ և Տիար Կ. Հինդեան:

● Բշ. 30 Նոյեմ. — Կ. Վ. ժամը 4ին, յանուն Կ. Պոլսոյ Գունաց Տիեզերական Պատրիարքին, Ֆիլատելիֆիոյ Եպս. Գերշ. Եպիֆանոս և յանուն Քաղաքիս Գունաց Ամեն. Ս. Պատրիարքին Գերշ. Տ. Ստեփանոս Եպս. պաշտօնապէս փոխադարձ այցելութիւն տուին Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.-ի և շնորհակալութիւն յայտնեցին Գունաց Պոլսոյ Պատրիարքին քաղաքայայցելութեան առիթով Պատրիարքարանիս ցոյց տուած սիրալիր ընդունելութեան և վերաբերմունքին համար:

● Ուր. 11 Դեկտ. — Ընդառաջելով քաղաքիս Արար-Անկիլիան Եպս. Գերշ. Նէճիպ Դուպէյի հրաւերին, Անթ Ճօրս եկեղեցւոյ մէջ կատարուած քահանայական ձեռնադրութեան ներկայ գտնուեցաւ Շոգշ. Տ. Հայկասեր Վրդ.:

● Դշ. 16 Դեկտ. — Կ. Վ. ժամը 3ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., Շոգշ. Տ. Տ. Հայկասեր և Վազգէն Վրդ.ներ յարգապետներ և Տիար Կ. Հինդեան այցելութիւն տուին քաղաքիս նոր նշանակուած Զինուորական Հրամանատարին:

● Եշ. 17 Դեկտ. — Առողջապահական գրասենեակի բժշկապետի հրաւերին ընդառաջելով, Շոգշ. Տ. Տ. Թորգոմ և Վազգէն Վրդ.ներ ներկայ եղան քաղաքիս մէջ Արեան կեդրոնի վերաբացման՝ Օմարիէի զարոյթին մէջ:

● Ուր. 18 Դեկտ. — Կ. ա. ժամը 9.30ին, Ս. Աթոռ ժամանեցին Տէր և Տկ. Ռօպէրթ Կիւլպէնեան պատուական հիւրերը: Ողակայան դիմաւորութեան զացած էին Շոգշ. Տ. Թորգոմ Վրդ. և Տիար Կ. Հինդեան, Հիւսէյն պատեցան Տնօրինական Սրբաւայրերը և Մայրավանքը և յաջորդ օրը կէսօրին մեկնեցան Լիբանան:

● Շր. 26 Դեկտ. — Եւրոպացւոց Ս. Նննդեան



տունին առիթով, Գերշ. Տ. Սուրեն Արքեպիսկոպի գլխավորությամբ, Միաբանությունից շնորհաբարություն գնաց Ֆրանչիսկանց Գերշ. Կիսթոստին, Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին, Պապական Նուիրակին, Անկիլբան երկու Գերշ. Եպս. և Լիբանանեան Ընդհ. Հիւպատոսին, իսկ ուրիշ խումբ մը, Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ.ի գլխավորությամբ, այցելեց Յոյն և Հայ Կաթոլիկ Մեծաւորներուն և Լուսաբականներու երէցին:

● Բշ. 28 Դեկտ. — Կ. Վ. ժամը 3ին, ընդունալով Վսեմ, Ներքին Գործոց Նախարարի հրահանգներն, Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Թաղաւորին Եւրոպայ կատարած չըջապոտյաէն Արքունիք վերադարձի բարեբաօտիկ առիթով, Ամմանի օդակայան զիմաւորութեան գացին Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. և Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ.:



### Զ Ե Ռ Ն Ա Կ Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Շարաթ, 14 Նոյեմբերի երեկոյեան ժամերգութենէն ետք, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Ս. Աթոռոյս Ընծայարանի ուսանողներէն Տրց. Սարգիս Սրկ. Պաղտատեանի քահանայական կոչման սրտագրաւ արարողութիւնը: Ընծայեալը, առաջնորդութեամբ Լուսաբարապետ Տ. Ներսէր Եպս.ի՝ որ կը կատարէր խարտաւիլակի պաշտօնը, ծնրադիր յառաջացաւ եկեղեցւոյ մուտքէն մինչև Ատան՝ ուր եպիսկոպոսական զգեստաւորմամբ բազմած էր Զեռնադրի Գերշ. Տ. Սուրեն Արքեպս.ը: Խարտաւիլակ Սրբազանը ի զիմաց ժողովուրդեան և համաձայն Հայց. եկեղեցւոյ Զեռնադրութեան Մատուցի տրամադրութեանց, զրապէս պատասխանեց Զեռնադրի Սրբազանին ընծայեալին վարքութեան քննութիւն, ուսման, կոչման և ծառայութեան օգրի ու նուիրումի մասին ըրած հարցումներուն: Ապա ընծայեալը հրաւիրուեցաւ հրաժարելու հերձուածողներէն և աշակերտելու Ս. եկեղեցւոյ ուղղափառ հայրապետներուն ու վարդապետներուն: Անկէ ետք ընծայեալը մեղմիւ արտասանեց հաւատոյ ուղղափառ դաւանութեան բանաձևը:

Յաջորդ օր, 15 Նոյեմ. Կիրակի, Նոյն եկեղեցւոյ մէջ պատարագիչն էր Գերշ. Տ. Սուրեն Արքեպս., որ ձալու զբքէն առաջ կատարեց առաջին մասը Զեռնադրութեան խորհուրդին: Այս մասին մէջ ամենէն յուզիչ պահն է երբ ընծայեալը Աւագ Սեղանի բեմէն, ծնրադիր և ձեռամբարձ կը դառնայ ժողովուրդին՝ ի նշան աշխարհէ հրաժարման, մինչ կ'երգուի «Աստուածային և երկնաւոր շնորհ» շարականը՝ որուն զայրներ, յանուն ժողովուրդին, կը պատասխանեն. «Արժանի էք: Ապա կը դուրս սարկաւազական ուրարը իր վզին՝ իրեն լուծ Գրիտոսի:

Զեռնադրութեան երկրորդ և բուն մասը կը սկսի «Ողջոյնէն առաջ, երբ ընծայեալը կրկին ծնրադիր կը ներկայանայ Զեռնադրի Ս. Հոգորմէ կը ստանայ փրկոն, օաղաւարտ, չորջառ և

պատարագի զգեստաւորման յատուկ այլ մասեր՝ տընչութեան ուրոյն աղօթքներով: Ապա Ս. Սեղանը կը վարագուրուի, մինչ զայրներ ը սկսին «Խորհուրդ խորին» երգել, խարտաւիլակ Սրբազանը կը բերէ Ս. Միւռնի սպասը քաջախնդանէն: Զեռնադրեալը Ս. Միւռնով օծելու նուիրական պահն է արդէն:

Զեռնադրի Սրբազան Հայրը Ս. Միւռնով կ'օծէ նախաձու զոյգ ասիերը ընծայեալին՝ վերակոչելով զայն Տ. Յուսիկ կուսակոծ Բահանայ, ու ապա կը յանձնէ իրեն Ս. Սկիւր՝ իրաւասութիւն տալով այսկերպ Ս. Պատարագի խորհուրդը կատարելու: Նորընծան կուտայ ժողովուրդին իր անդրանիկ խաղաղութիւնը: Ապա Ս. Պատարագը կ'առնէ իր ընդհատեալ ընթացքը և սարկաւազը Ս. Սեղանէն եկող ողջոյնը կուտայ ամենէն առաջ Նորընծային, և ապա Զեռնադրի Սրբազանէն սկսեալ բոլոր եկեղեցական դասը կը մատենայ Նորընծային և կ'ողջագուրէ անոր օծեալ աջն ու նախատը: Նոյնը կ'ընէ ժողովուրդը Ս. Պատարագի աւարտին:

Նոյն օրը երեկոյեան ժամերգութենէն ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Ս. Գլխադրի մատարան առջև, Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. կատարեց Նորընծային վեղարի տընչութեան կարգը: Երկարաշունչ աղօթքներուն ընթերցումէն և Ս. Անտոն անապատականի նուիրում շարականներու երգեցողութենէն ետք Սրբազանը հանց սարկաւազական ջրուանը Նորընծային գլխէն և շնորհազարդեց զայն կուսակրօնութեան խորհրդանիշը եկող վեղարով: Այս առթիւ, Ժառ. Վարժարանի և Ընծայարանի Տեսուչ Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, Զեռնադրի Ս. Հօր հրաւերով, յորդորական մը խօսեցաւ Նորընծային՝ յայտնելով թէ եկեղեցականութիւնը սովորաբար կարծուածին չափ զուրին ասպարէզ մը չէ, մանաւանդ մեր օրերուն ու մեր եկեղեցւոյ մէջ՝ ուր հոգեւորականէն կը պահանջուի իր նշաններուն լաւագոյնը տրամադրել՝ Հայց. եկեղեցւոյ բազմազիւն և աղաղակող կարիքներուն ի սպաս:

Նորընծան ապա առաջնորդուեցաւ Ս. Յարութեան Տաճար ուր անցուց չորս շարաքներ ուսանելով Ս. Պատարագի կարգերը՝ Հոգշ. Տ. Գաւրի Սրդ. Սահակեանի առաջնորդութեան տակ:

Ստորի կուտանք Նորընծային համառօտ կենսադրականը. —

Հոգշ. Տ. Յուսիկ Արքեպս. Պաղտատեան ծնած է Փրօլիտէն (Միացեալ Նահանգներ) 1934ին: Աւարտած է ծննդավայրի բարձրագոյն վարժարանը: Երուսաղէմ եկած և իրեն մասնաւոր ուսանող ընդունուած է Ժառ. Վարժարան 1955 Դեկտ.ին և 1956 Օգոստ. 25ին Զեռնադրուած է Սարկաւազ. 1956-1959 շարունակած է իր ուսումը Ս. Աթոռոյս Ընծայարանի բաժնին մէջ:

Սիւն, յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան, իր ջերմ շնորհաւորութեանց կը միացնէ կարողութեան լաւագոյն մաղթանքներ Նորընծային՝ որպէսզի անոր ծառայութիւնը Տիրօջ աշխիւն ներս ըլլայ արդիւնաշատ ու բեղմնաւոր:



«ԱԻԱՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ  
ՇՆՈՐՀԱՅԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- TARIHTE ERMENILER VE ERMENI MESELESI - Esat Uras. Ankara, 1959. P. 784.  
(In Turkish). Donated by Hrayr Ghazarian.
- A HISTORY OF ARMENIA - V. M. Kurkjian. New York, 1958. Donated by the Armenian General Benevolent Union, New York.
- GUIDE MAP OF JERUSALEM - Edited by Jordan Tourist Dept.
- EASTER IN JERUSALEM - 1959. Greek Convent Press, Jerusalem.
- CALENDAR OF EASTER RELIGIOUS CEREMONIES - 1959. Muhafaza of Jerusalem. The Modern Press. Pp. 19 & 21.
- WORLD PETROLEUM - Exploration Issue. March 1959.
- PAGES CHOISIES DE L'HISTOIRE ARMENIENNE - Père Jean Nalbandian (présentée par l'auteur). Bruxelles, 1959. Pages 118.
- AN ESSAY ON THE DEVELOPMENT OF LUTHER'S THOUGHT ON JUSTICE, LAW AND SOCIETY - F. Edward Cranz. Presented by the Harvard Theological
- Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը կը նուիրէ. — [Studies.]
- ա) LA PASSION DE LA CILICIE (1919-22) - Paul De Véou. Paris, 1954.
- բ) HISTOIRE DE L'ARMENIE ET DU PEUPLE ARMENIEN - H. Thorossian.
- գ) Անդաստան (Թիւ 8-9) - Բիւզանդ թօժարեան: Փարիզ, 1958. [Paris, 1957.]
- Ամերիկայի Հայ Միտինարական Ընկերակցութիւնն ստացանք. —
- ա) Բողոքականութեան եւ Գաղղիկոսեան Տաճարութիւնները - Վեր. Բիւզանդ Ս. Լեւոնեան: Շիրակ, 1958.
- բ) Աւետարանական երգարան - Նիւ Եորք, 1950. (Հայերէն եւ Ռեզիւմէ): [1958.]
- գ) Հասցնիւր Պատմութեան (Ե. Հասար) - Թրգմ. Յովհ. Գ. Ճէարեան: Պէտրոս, 1958.
- դ) A CENTURY OF ARMENIAN PROTESTANTISM (1846-1946) - Leon Arpee.
- ե) TRAIL BLAZERS AT DAWN - Rev. Y. H. Kassouny. New York. [N. Y., 1946.]
- զ) JESUS, SON ONLY BEGOTTEN OF THE FATHER - Nerses the Grace-filled. Rendered into English by Jane S. Wingate. New York, 1947.
- CILICIAN ARMENIA AND THE CRUSADES - Armen Ovhanesian (presented by the author). Published by the Detroit Armenian Cultural Association, 1958.
- CONVERSATION DRILL For Beginners (English, French and Arabic) - Presented by the Director of Brothers' College, Jerusalem. 1958.
- HANDBOOK OF LEARNED SOCIETIES IN JAPAN - Humanities & Social Sciences. Presented by Scientific Information Section. Tokyo, Japan, 1958.
- HOPE FOR A PERFECT LANGUAGE - Ruby Pao Wah Lee.
- A SHIRT FOR THE BRAVE - H. K. Beshlian. M. D. Paterson (N. J.)
- THE STORY OF JESUS - Mrs. Harriet I. Fisher.
- THE ROLE OF ARMENIA IN HISTORY - Bishop Terenig Poladian (presented by the author). Armenian Covt. Printing Press, Jerusalem, 1959. Pages 35.
- Վ. Մ. Քիւրքճեան կը նուիրէ իր գիրքերէն. —
- ա) Սահակ եւ Մեսրոպ - Պրոսթըն, 1914. էջ 27. [էջ 156.]
- բ) Մի Տեսութիւն Կիլիկիոյ Հայկ. Ինքնակազմութեան Վրայ - Բաղուրեան: Պէտրոս, 1959.
- գ) SAHAK AND MESROP - Vahan M. Kurkjian. New York, 1958. Pages 48.
- Իւրաքանչիւր լի Մէլիք կը նուիրէ. — ա) OEUVRES COMPLETES (Tome III) - Molière.
- բ) ECLAIR EN Z. Paul Kenny. ց) Mr. Blue 3/4 Myles Connolly.
- BRITISH PETROLEUM EQUIPMENT - 1959-60 Edition. London, 1959. Pages 894.



ABRAHAM LINCOLN (1809-1865) - 16th President of the United States of America.  
NEW CHINESE WOODCUTS - 1959.

Պէյրուիէն՝ Փրօֆ. Հայկ Սաչառաւիան կը նուիրէ. - [Vol. X, 1958.

ա) SEMANTICS AND HUMOR - Extract from «Rivista Methodos», No. 37-38,

բ) WHAT IS RATIONALITY - reprinted from «Theoria» Journal. Vol. XXIV,

Թագ Մեծն Կիւրոսի - Ալիս Թորեան (նուիրատու): Պէյրուի, 1959, [No. 3, 1958.

Դավինեպակ (Բերթաւաճնէր) - Ալիս Թորեան (նուիրատու): Պէյրուի, 1958, էջ 116:

Պատարագամանոյ (Հայերէն և Անգլիերէն) - Արդեամբ Տ. Տրեան Արքեպիս: Երուսաղէմ,  
Տպարան Ս. Յակոբեանց, 1958: Նուէր Ս. Աթոռոյ Տպարանէն:

Ազգայանում (Ա. Հատար, Ա. Գիրք): - Մ. Արք. Օրմանեան: Բարեբաւութեամբ Տաճատ  
Սրագեանի (նուիրատու): Պէյրուի, 1959, էջ 532 և ԻԲ. (Երկրորդ):

Ազգայանում (Ա. Հատար, Բ. Գիրք): - Մ. Արք. Օրմանեան: Նուէր Տաճատ Սրագեանի:  
Պէյրուի, 1959, էջ 533-1080, [1959, էջ 124:

Յիսուս Կիրակի Հայաստանայ Եկեղեցի - Ժագ Ս. Յակոբեան (նուիրատու): Պէյրուի,  
Արծիւներ Անապատին Մէջ - Կ. Փոլատեան (նուիրատու): Փարիզ, 1958, էջ 540:

Վերջին Աւար - Դ. Պիւթագի (նուիրատու): Պէյրուի, 1958, էջ 68:

Ս. Գ. Հ. Կուսակցութիւնը եւ Կիլիկիան Բնակարարական Արք (1919-1921) - Անգրա-  
նիկ Կէնճեան: Նուէր Բ. Կ. Ժամկոչեանէ: Պէյրուի, 1958, էջ 325:

Ապակը - Ս. Պալաթոն (նուիրատու): Պէյրուի, 1950, էջ 37:

Թմբկաբերդի Առումը - Յայհ. Թումանեան: Նուէր Բ. Թ. Նազարեանց: Հալէպ, 1959:  
«Յուսարեան» ստացանք. - ա) Օրը Տարածման էր - Գարբիէլ Թագարեան:

բ) Յովազանի Գերիները - Վ. Անանեան: գ) Աւետիք Իսահակեանի Նամակները:  
Օտարաբնակները Հայ Լիգուին Մէջ - Է. Բարազեան: Նուէր Հայ Ազգ. Հիմնադրամէ:  
Գահիրէ, 1959, էջ 64:

Օրեւն եւ - Գէորգ Անճեան (նուիրատու): Պէյրուի, 1958, էջ 197:

Փարօնը Հոգեբանութեան եւ Մանկավարժութեան - Գէորգ Ա. Սարաֆեան: Հրատ. և  
Նուէր «Մշակ» Տպարանի: Պէյրուի, 1958, էջ 456:

Գոհարներ Ազգերու Դասակարգման - Գէորգ Ա. Սարաֆեան: Հրատ. և Նուէր «Մշակ»  
Տպարանէն: Պէյրուի, 1959:

Ս. Ներսէս Շնորհալի (Իր Կեանքն ու Գործունէութիւնը) - Գրիգոր Ա. Սարաֆեան (նուի-  
րատու): Յրէզնո, 1959, էջ 34:

Ազգաբնակից Սեբասիոյ Զատնեան Գերդասանի - Յ. Յ. Տաղաւարեան (Զատնեան):  
Պալատ Բացարկ - (1959): Նուէր «Պայքար»-էն՝ Պոսթըն: [Պէյրուի, 1957, էջ 112,  
Էջմիածին եւ Անթիպիս - Պէյրուի, 1959, էջ 72: [ստորագրէն:

Յուսարան Հ. Յ. Գ. Բիլլիէնի Կոմիտէին (1903-1958) - Գ. Միլիարեանցի: Նուէր «Յու-  
ժողովարար Ընտիր Բերումներու - Նուէր Մշակ Տպարանէն: Պէյրուի, 1958, էջ 109:

Հիւլեական Ուժը - Ն. Չարսուիեան: Նուէր ըստ Նախորդին: Պէյրուի, 1959, էջ 40:  
Բառարան Անգլերէնէ - Հայերէն «Եւ Մէթհըն Բարբրոյի»: Նուէր ըստ Նախորդին: Պէյ-  
րուի, 1958, էջ 174:

Հայկական Զարթոնք ԺԺ. Գարու Կեանք Վերջ (Անոր պատճառներն ու հետեանքները)  
- Փրօֆ. Նշան Պ. Ստաթեան (նուիրատու): Յրէզնո, 1958, էջ 38:

Փօլ Պաուլեան կը նուիրէ 4 Անգլիերէն պրօշիւրներ Հայկական դրամներու մասին:

Կիլիկիոյ Թագաւոր Կոստանդին Ա.ի Դրամներ (1298-99) - Արտատպուած «Հանդէս Ամ-  
սորեայ» 1958 թիւ 10-էն: Զ. Պ. Պաուլեան (նուիրատու):

Տարեկիւր Հայկազեան Գողթնի (Բարբոն) - 1958-59: Պէյրուի, 1959, (Անգլիերէն և Հա-  
նուր եւ, Մայր Իմ... - Շաւարշ Նարեկեան (նուիրատու): Փարիզ, 1958, [յերէն):

Նիզակամար Շաւարշեան Դատին Վրայ - Շաւարշ Նարեկեան (նուիրատու): Փարիզ, 1959:

Թիւերու Առաջին Դիւր (Մանկագրարէզի Կոկոն Դատարանի համար) - Յարութիւն Այ-  
վազեան և Կարպիս Եսայեան: Նուէր Ս. Թ. Վրթ. Տեղութեան: Պէյրուի, 1959:



Ուսումնարանի Տարեգիրք (1958, Բ. Տարի) - Հրատ. և Նուէր Հելիոպոլսոյ Միթիթարեան Վարժարանէն: Գահիրէ, 1958: էջ 158:

Ինչու Կը Քննադատենք - Մ. Տիգրանեան (Նուիրատու): Պէյրութ, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Կրկիկոյ, 1958: էջ 72 և 24 (Հայերէն և Անգլիերէն): [էջ 99:

Օրը Տարածամեր Էր (Ողբերգութիւն) - Գարրիէլ Թազարեան (Նւրա): Գահիրէ, 1959: Ասեփան Բաբէլեան (60ամեայ Կեդարուեստական Գործունէութեան առթիւ) - Հրատ. և Նուէր Էստեան Սանուց Միութեան: Իսթանպուլ, 1958: էջ 58: [1959, էջ 20:

Յիսմամեայ Յոբելեան Յակոբ Մննուրիի - Հրատ. և Նուէր ըստ Նախարարին: Իսթանպուլ, Յոբելեան Բազմալիսասակ Ուսուցչուհի Տկ. Ամիէլ Պաղասլեանի Ուսուցչական 60ամեայ Գործունէութեան (1895-1955) - Նուէր Գարակէօղեան Սանուց Միութեանէն, Պոլիս: Արշալոյսէն Առաջ (Պատմութեամբ) - Հրանդ Գանգրուհի: Պէյրութ, 1959: էջ 126:

Լուսանցի Նօթեր - Գ. Ռշտունի: Նուէր Տիգրան Գարադըղեանէ: Իսթանպուլ, 1948:

Գրական Էջեր եւ Ուսումնասիրութիւններ - Հրաչ Սարգիսեան: Նուէր Արշալոյս Հրաչ Սարգիսեանէ: Փարիզ, 1959: էջ 143:

Քառամեայ Տեղեկագիր (1950-1953) Պէյօղլուի եկեղեցւոյ եւ Անոր Ենթակայ Հաստատութեանց Մասնաւորութեան - Նուէր Բերայի Թաղական Խորհուրդէն: Իսթանպուլ, 1954: էջ 32:

Վասակաւոր Մանկապարտիզականուհի Օր. Հայկունի Պաղասարեան - Իր պաշտօնավարութեան 45ամեայ Յոբելեանին առթիւ (1910-1956): Նուէր Յոբելեարին աշակերտներէն: Իսթանպուլ, 1956: էջ 35:

Երեանի Մասնաւորութեան ստացանք. -

ա) Հայ Մանկավարժներ - Պրոֆ. Ա. Մ. Շաւարշեան:

բ) Հայերէն Շարանիւսութիւն (Հատոր Ա.) - Վ. Առաքելեան:

գ) Խաչատուր Կեչաւեցի - Մ. Թ. Ավդալբեկեան:

դ) Ժե. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակներ (Մասն. Բ., 1451-1480) - Լ. Ս. Ե) Մարտիրոս Ղրիմեցի - Ա. Մարտիրոսեան: [Ռաշիկեան:

զ) Յովնանէն Երզնկացի - Արմենուհի Սրապեան: 1958: [Մնացականեան:

է) Պաղասար Գալի (Ծագիկներ Սիրոյ և Կարօտանաց) - Շ. Նազարեան և Ա. Բ) Քաղաքներ եւ Արհեստներ Հայաստանում 9-13րդ Դարերում - Բ. Առաքելեան:

Մեր Երբը (Քերթուածներ) - Ժողէթ Հաճեան (Նուիրատու): Հալէպ, 1959: էջ 88: Պէյրութէն: Գրատ. Վրդ. Նազգաշեան Կը Նուիրէ. -

ա) Հայոց Լեզուի Պատմութիւն (Բ. Մաս) - Հրաչեայ Աճառեան: 1951:

բ) Սասունցի Գալիք - 1939:

գ) Սասնա ծառ (Ժողովրդական Վէպ) - Դր. Մ. Արեղեան: 1930:

դ) Հայոց Պարբերական Մամուլը - Գ. Լեւոնեան: 1934:

Ակսել Բակունցը Ռոպէս Անխարզախ Ժողովրդայնութեան Առաջամարտիկ Խորհրդանայ Գրականութեան Մէջ - Լ. Մկրտչեան: Միւնիխ, 1959: էջ 111:

Հայաստան եւ Հայ Դասը Հայ եւ Ռուս Յարաբերութիւններու Լոյսին Տակ - Գարրիէլ Լաղեան (Նուիրատու): Գահիրէ, 1957: [Գահիրէ, 1958:

Հ. Յ. Գ. Սրուան Իմաստը - Բժ. Եր. Խաթանասեան: Հրատ. և Նուէր Վեցարարներէն: Ամենուն Տարեգիրքը (2. Տարի, 1959) - Կարօ Գէորգեան: Նուէր Վահէ Աէթեանէ: Պէյ-

Դիւցազնական - Կ. Սիւալ (Նւրա): Երեան, 1957: [Բութ, 1959: էջ 640:

Բաղնականութեան եւ Կարօլիկութեան Տարբերութիւնները - Վեր. Բիւզանդ Ս. Լեւոնեան: Նուէր Քրիստ. Զանից Գրասենեակէն: Շիրակ, 1959: էջ 226:

Շիրակի Հայերի Գաղբը Դեպի Ամերիկա - Սիրական Գալօեան: Նուէր Տիրայր Վրդ. Տէրփիլեանէ: Լոս Անճէլէս, 1950: (Հայերէն և Անգլիերէն):

Ամմեղ Զոնը (Մեղրգրամ 3 վարագոյրով) - Արթիւր Պերճ (Նւրա): Իսթանպուլ, 1938: Տառապանքի Սարսուռներ - Արթիւր Պերճ (Նուիրատու): Իսթանպուլ, 1938:

(Շարունակութիւնը՝ կողմին)



# Ս Ի Ո Ն

## ՅԱՆՎ ՆԻՒԹՈՅ 1959 ՏԱՐԻՈՅ

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն . —

Մ. ՄԿՐԵԱՆ. — «Գրիգոր Նարեկացի» 12,  
65, 113, 162, 210, 258

### Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ն Ր Ա Կ Ա Ն . —

Շէն-ՄԱՀ. — Գառուն է 9  
Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ. — Գառազուխ 10  
... 10  
Սաամայ Մրհեր 110, 158, 206, 253  
Տխուր գառուն 112  
ՍԱՐԲԷՆ. — Կոթողը 11  
Գառուն 11  
ԱՇՏԻՇԱՏ. — Տեսիլք հայրենական 61  
ՆՈՒՊԱՐ. — Լոյսի համբայեն 64  
ԳԷՌԳ Թ. ՃԻՆԻՎԻՋԵԱՆ. — ... երբ  
կ'երբան ծոցը Լոյսին 209  
Քառեակներ 257

### Գ Ե Ղ Ա Ր ՈՒ Ե Ս Տ Ա Կ Ա Ն . —

Ա. Շ. ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ. — Հայկական  
Զարգացում 18, 73, 117

### Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն . —

ԱՆՈՒՇԱԲԱՆ ՎՐԻ. ԶՂՋԱՆԵԱՆ. —  
«Քերականական եւ Ուղղագրական  
Աշխատությունները Հին եւ Միջնա-  
դարեան Հայաստանում» 28, 77  
«Լիակատար Քերականությունը Հա-  
յոց Լեզուի» Համեմատությամբ 562  
Լեզուների» 125, 224, 266  
ԳԷՌԳ Թ. ՃԻՆԻՎԻՋԵԱՆ. — «Հայ  
Աշխատություն» 31

### ԵՐԵՍՈՒՆ ՏՍՐԻ ԱՌԱՋ. —

Մեսրոպ Սրբազանի Ուղերձը 34  
Կիլիկիոյ Կաթողիկոսությունը եւ  
Նուսադեմի Պատրիարքությունը 85

Յանուարը ինչո՞ւ Յանուար ճին

կը տօնեն 85  
Ամեն. Ս. Յոքելեարին պատասխան  
ու պատգամը 278

### Խ Մ Բ Ա Դ Ր Ա Կ Ա Ն . —

«Թող զմեռեալսն քաղել զմեռեալս  
իւրեանց» 1  
«Զատիկ մեր զնաւ Քրիստոս» 49  
Եկեղեցւոյ պաշտօնի նկարագիրը 97  
Եկեղեցւոյ նեղինակությունը 100  
Մեր վարչական ու ճեշտական  
տարին 145  
Հակասություններ 193  
«Ճնորհաւոր Նոր Տարի» 241

### Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն . —

ՇՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ. — «Հաւատով  
խոստովանիմ» 5, 53, 102, 150, 197,  
243  
ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ. — Փրկչին Յարու-  
քինը 58  
Հոգեգալուստ 106  
Տիրամօր իսկական մեծությունը 155  
Ապերախությունեան արար  
Մեծություն հասնելու ուղիղ  
հանապարհը 248

### Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Վ Ա Ն Ք Ե Ր . —

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ. — Դամադիէի  
վանք 21  
Խորին Անապատ 71  
Ս. Թովմայի վանք 123  
Խառաքատայ վանք 165  
Մաղարդայ Ս. Նախավկայի վանք 262

### Հ Ի Ն Է Ջ Ե Ր . —

Հրատ. Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ. — Քարոզ  
ի Մկրտություն Տեսան 24



հրաւիրողներ	69	Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ. —	
Վասն սուս եւ անցաւոր աշխարհիս	120	Յուն. - Փետր. Ամսօրեայ լուրեր	41
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ. —		Մարտ - Ապրիլ » »	93
Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ. — Փոքր Կորինթի		Մայիս - Յունիս » »	138
հեղինակը	167	Յուլիս - Օգոստոս » »	188
Թարգմանք պատմութիւն	214	Սեպտ. - Հոկտ. » »	235
		Նոյեմ. - Գեկտ. » »	280
ՄԵՐ ԹԵՄԵՐԷՆ. —		ԱՅԼԵԻՍԱՅԼՔ. —	
Իրաւի Թեմէն	36, 132	ԱՐԱՆԻՄԱՅԻ — Վարդանանց շարժումը	25
ՄԻՋ - ԵԿԵՂԵՅՍԱԿԱՆ. —		Լ. Ա. Ա. (քրդ.) — Հայկական ուղեր- գութիւնը	90
ԶԱԽԷՆ ՎՐԻ. ԶԻՆԶԻՆԵԱՆ. — Եկեղե- ցիներու միութեան համար ազո- րածուողը	81	Գերսեմանիի պարսեզ Հայոց	232, 271
Քրիստոս եւ Եկեղեցիներու Համա- խարհային կորուստը (քրդ.)	220	(Մեզր) ԳԵՐԳԻ ԳԱՅԱՐԵՆ — Ուխտ- անցուորիկն մը Սինայի Ս. Կա- սարիէի վանքը	133
ԶԱԽԷՆ ՎՐԻ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ. — Եկե- ղեցիներու Համախարհային կոր- ուստը	129, 174	ԶԱԽԷՆ ՎՐԻ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ. — Եկե- ղեցիներու կորուստը Կարողիկոսը	173
Վաստակ եւ Երուսաղեմի Եկեղե- ցիներու համաձայնութիւնը	264	ԳԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՍ. — Պատմութիւն Յայրապոյն Արեւելի եւ Ափրի- կէի Հայոց	192
Երուսաղեմի մէջ կրօնական հաւաքոյք երկաթեայ եւ Իրաւական Եկեղեց- եաց մասնակցութեամբ	84	Պատեօնական Հաղորդագրութիւն Ս. Ա. քառօր Գիւնեկէն	37
ՊԱՏՄԱՆԻԹԵԱՆ ՀԱՄԱՐ. —		Պատեօնական Հաղորդագրութիւն Ս. Էջ- միածնէն	136, 275
ԳԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿ. — Իրաւանայ	169, 228	Գերգ. Տ. Սուրեն Եպս. Քեմհանեան Արեւելեան պատիւ կը ստանայ	40
Զինաստանի Հայ վանատականներ եւ Յովնանեան Վարդան	276	Սուրեն Սրբազանի Արեւելեան իշխու- թեան Հայրապետական Կոնգրէսը	92
Ս. ՏԵՂԵԱՅ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ. —		Որպէսզի չըլլայ քե մօռնանք...	88
ԿԻՐԵՂ ՎՐԻ. ԳԱՐԵԿԱՆ. — Ս. Աս- տուածածնայ Տանար	86	Ընթերցողներէն խմբագրութեան	138
Ս. Հրեշտակապետաց Եկեղեցին	137	Ս. Հրեշտակապետաց Եկեղեցիի նորոգու- թեան նախապատեմներ	176
ՏԻՐԱՆԻՆ. —		Ամալեւրի Հանդէս եւ Տարեկան Տեղե- կագիր	
Տ. Յովնանեան Խաչակիր Քնյ. Սիմոնեան	45	ա) Ժառ. Վարժ. եւ Ընծայարանի	177
Երկու աղկաձառար հայ օրիորդներ	45	բ) Ս. Թարգմանչաց Վարժարանի	179
		գ) Ամանի Հերումեան »	184
		Բարեպատեօնական նուէրներ	279

نصدها - بطريق كية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النيابة الاسقف هايكازون أبراهيان  
نوفمبر - ديسمبر ١٩٥٩ تطبع في مطبعة دير الارمن - القدس العدد ١١ - ١٢

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.  
Editor - Bishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.  
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.



Ձեյրունցի Տէր Յովան - Յ. Ս. Կաշաղեան (նուիրատու): Պէյրուսթ, 1958:  
Երզնկի Տարեգիրք (30րդ. Տարի, 1959) - Բաղարատ Թեհեան (նւրաւ.): Իսթանպուլ:  
Մինչեւ ժամը Հինգ ... (Վէպ) - Դուստրի Պ. Միքայէլեան (նուիրատու): Պէյրուսթ, 1959:  
Պատեւեր (Եօթը Պատմութիւն) - Սեդա (նուիրատու): Պէյրուսթ, 1959: Էջ 265:  
Սիրս - Մաք Հայր: Թրգմ. Եղիշէ Մանուկեան: Նուէր օթիչկոնէն: Պէյրուսթ, 1959:  
Կրատուն «Ահանէն» (Պէյրուսթ) ստացանք. —

ա) Յոյսի Խաղկներ (Պատմութիւններ) - Միհրան Տէր Ստեփանեան: 1959: Էջ 214:  
բ) Մենք Հայեր - Ստեփան Շահապ: 1959: Էջ 190:  
գ) Նամանք Առանց Երկի (Դ. Տպագրութիւն) - Շահան Շահնուր: 1959: Էջ 261:  
դ) Կոստան Խաչեր - Պարոյր Մանուկեան: 1959: Էջ 157:

Դերերիկ Եպո. Փոլատեան կը նուիրէ իր գործերէն հետեւեալները. —

ա) Դաստիարակչական Առաջնորդութիւն - Պէյրուսթ, 1959:  
բ) Հայաստան - Զատարթնոյ Այսթմ: գ) Հայաստան - Զեռադրոյ Այսթմ:  
Հայրենիքի Ուղիներով - Դաստիարակչական (նուիրատու): Փարիզ, 1959:  
Յուսեր ու Փուսեր - Վերմիէ Հաճնեան (նուիրատու): Իսթանպուլ, 1959:  
Ենովկա - Բարութիւն Մ. Վրդ. Մուշեան (նուիրատու): Պ. Այրէս, 1956:  
Անցեալի Յուսերէն (պատկերազարդ) - Սամուէլ Յ. Փաշեան (նւրաւ.): Պէյրուսթ, 1959:  
Խոստովանի մը Նամակնիւն - Մարտիկ Վ. Թերզեան (նուիրատու): Պէյրուսթ, 1958:  
Հայ Դրի եւ Դրուրեան Պատմութիւն - Ա. Դ. Արաճաճեան: Երեան, Հայպետհրատ, 1959: Նուէր ըստ նախորդին:

Սայար Նովա (Հայերէն, Վրացերէն եւ Ազերբայճերէն խաղերի ժողովածու) - Կազմեց  
Մ. Ս. Հատարթեան: Երեան, Հայպետհրատ, 1959: Նուէր ըստ նախորդին:

Պատմա-Բանասիրական Հանդես - (Թիւ 1, 1959): Նուէր ըստ նախորդին:

Պատմութիւն Հոգիներ - Բենիամին Նուրիկեան (նւրաւ.): Երեան, Հայպետհրատ, 1958:

Պէյրուսթէն՝ Սիմոն Սիմոնեան կը նուիրէ. —

ա) Բանաստեղծութիւններ (Ա. Հատոր) - Եղիշէ Չարեան: Պէյրուսթ, 1955:  
բ) Դիրք Ճանապարհի - Եղիշէ Չարեան: Պէյրուսթ, 1959:  
գ) Այն Օրէն Ի Վեր, Այն Օրէն Աղիւն - Սոս-Վանի: Պէյրուսթ, 1959:

Հ. Բ. Ը. Մ. Ի Դիրք Ներկայ Հայ Իրականութեան Մեջ - Երկու Ճառ Սիւթեան Նախա-  
դահ Ալեք Մանուկեանի, խօսուած 1958ին: Հրատ. եւ Նուէր Հ. Բ. Ը. Մ. Ի Լիրա-  
նանի պաշտօնաթիւրթ օրտնակալ: Պէյրուսթ, 1959:

Երկնայութիւնք Հայց. Առաք. Ուղ. Երկնայութիւն Առաքեան ժամերգութեան - Հրատ. եւ  
Նուէր Մ. Աթաոյո ժողովարար Վարժարանի: 1959: (Մեքենագրութիւն):

Կարգ Խաղողորհնէքի - Հրատ. եւ Նուէր ըստ նախորդին: 1959: (Մեքենագրութիւն):

Կարգ Վերացման Մերոյ Խաչի - Հրատ. եւ Նուէր ըստ նախորդին: (Մեքենագրութիւն):  
Խաբերդ եւ Անոր Ապիպէն Դաւթ - Վահէ Հայկ (նուիրատու): Ն. Եօթ, 1959: Էջ 1500:  
Հայոց Պատմութիւն (Բ. Հատոր) - Հրանդ Պատարմաճեան: Թրգմ. Մ. Իշխան (նուիրա-  
տու): Անթիլիաս, Տպ. Կթղ. Կրիկիոյ, 1958: Էջ 276. [Էջ 791:

Յուսամասեան Բարձր Հայի (Կարճագրութիւն) - Ղազար Չարբղ (նւրաւ.): Պէյրուսթ, 1957:  
Քերտուածներ եւ Արձակ Էջեր - Բարթեւ Մ. Իսկէնդերեան: Նուէր հրատարակիչ Չօրա  
Իսկէնդերեանէ: Պէյրուսթ, 1959: Էջ 211:

Տէր, Կեցո Դու Զայո - Պարգեուհի Օրֆա (նուիրատու): Փարիզ, 1959: Էջ 118:

Հայերէն Չայնապակներու Երգարան (Ե. Տպագրութիւն) - Կեղրոնաեղի Ճանօ Վաճառա-  
տուն (նուիրատու): Հալէպ, 1959: Էջ 124:

Ծաղկեփունջ Բարոյալից Պատմութիւններ (Ը. Պրակ) - Նուէր Նուար Պէրպէրեանէ:  
Պէյրուսթ, 1959: Էջ 47:

Ասուածաւունջ - Հին եւ Նոր Կտակարան (հայատառ թրքերէն): Պոլիս, 1915:

Ժամագիրք Հայց. Ս. Երկնայութիւն (փառածաւալ) - (Է. Տպագրութիւն): Հրատ. եւ Նուէր  
Ս. Յակոբեանց Տպարանէն: Երուսաղէմ, 1959: Էջ 636:

(Շարունակելի)